ԿԻՐԱԿԻ
ՓԵՏՐՈՒԱՐ
1
DIMANCHE
1er FÉVRIER
1981

LE NUMERO 2 F.

ՅԱՌԱՋ

HARATCH

ՄԻՏՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE OCCIDENTALE
83, RUE D'HAUTEVILLE, 75010 PARIS
Directrice : ARPIK MISSAKIAN

Tél. : 770-86-60 — C.C.P. Paris 15069-82 E
Fondé en 1925 — 51027317 A R.C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 300 Ֆ. - Վեցամսեայ : 160 Ֆ.
Արտասահման : Տար. 350 Ֆ. - Հատը : 2 Ֆ.

56ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 14.833 — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — 56e ANNÉE — No 14.833

ԲԱՆԸ, ԲԱՆԻԼՆ ՈՒ ԲԱՆԱԼԻՆ

Հայ լեզուի հանճարը կը թելադրէ մը-տածելակերպ մը, զոր կը բիւրեղացնէ խորագրիս բառախաղը: Այս յօդուածը այդ մտածելակերպի ուրուագիծը պար-զել կը փորձէ:

×

Առենէ մը ի վեր, եւ հակնալի պատ-ճառներով, Հ.Ց.Դ.-ի պաշտօնական օր-կանները, ինչպէս նաեւ Դաշնակցութեան անպաշտօն մամուլը կը զբաղին տեսու-թեան, հաղորդակցութեան եւ գործի յա-րաբերութիւններով: Հասկնալի մտասե-ւեռում մըն է այս, քանի որ հայ կազ-մակերպութեանց քաղաքական գործու-նէութեան տխուր ձախողութիւնները մա-սամբ արդիւնքն են տեսական վերլուս-ծումի խակութեան, աղքատութեան եւ երբեմն ամբողջական բացակայութեան:

«Բան» բառի բազմիմաստ գործածու-թիւնը կը վկայէ մեր լեզուի հանճարին: Բանը թէ՛ «բառ» է, թէ՛ ալ «առարկայ»: Բանաստեղծը բառով գործ կատարողն է, ստեղծողը՝ բառային – լեզուական այդ առարկային՝ զոր քերթուած կը կոչենք: Միաժամանակ, «բանիլ» բայը առարկա-յական աշխարհին մէջ գործ կատարելու իմաստն ունի, իսկ «բանալի»ն՝ անզու-գական բառագիւտ մըն է, որ կը զուգէ երկու չատ տարբեր իմաստներ,– բանա-լին թէ՛ առարկայական գոյութիւններ կը բա-նայ, թէ՛ ալ բանաւոր հանելուկները, լեզ-ուական ու տեսական թնճուկները կը լու-ծէ:

Տեսութեան եւ գործի կապին մասին մտածել, ուրեմն, կը նշանակէ մտածել բանի եւ բանելու մասին: Եթէ չենք ու-զեր վատնել մեր ազգային ուժը եւ մեր նիւթական ու մտային կարողութիւնները ու աղբիւրները, որոնք չատ ալ մեծ չեն արդէն, ստիպողական է գործն ու տե-սութիւնը իրարմէ չզատել:

Կենսական է բան – ա – ձեւել, այ-սինքն՝ խօսքով արտայայտել գործի մա-սին մեր ունեցած մտածումները, հա-ղորդակցիլ ուրիշ անձերու եւ կազմա-կերպութիւններու հետ՝ մեր տեսակէտ-ներուն եւ տեսութիւններուն մասին, եւ չարժիլ ըստ այնմ: Բան, բանիլ եւ բա-նալի երբորդութիւնը՝ տեսութիւն, հա-ղորդակցութիւն եւ գործակցութիւն հան-րային աւուրբ երբորդութեան մէկ ուրիշ ձեւն է: Մեր ազգային կեանքի ու թըն-ճուկներու լուծումը (բանալին) միւթիւ-նը չի կրնար ըլլալ, որովհետեւ այդ ե-րազուած ու բաղձալի միւթիւնը Ա-րա-րատեան աւելի՛ հեռու է այսօր: Սակայն, ես պիտի բաւականանայի կուս–ա–կրօն կղերականներու եւ իրենց քաղաքական միաքը նոյնքան ԿՈՑՍ պահած զանազան ԿՈՒՍ – ա – կցութիւններու զեկավար-ներուն մէջեւ հաղորդ – ա – ԿՑՈՒԹԻՒՆ եւ գործ – ա – ԿՑՈՒԹԻՒՆ տեսնելով:

Այս հարցերը կը յուզեն վերջին 2 դարե-րու ամենակարեւոր յեղափոխութիւննե-րուն արմատը՝ Մարքսական տեսութիւ-նը, որ մխրճուած է գերման փիլիսոփա-յութեան բանական են թահոզին մէջ՝ ուր ծլաւ: 1800–էն ետք, Հէյկըլ բառն ու միաքը փառաբանեց, եւ Ատուծոյ գա-ղափարը վերածեց «Տիեզերական Միտք» գաղափարին, կարծես անուղղակի կեր-պով հաստատելով Նոր Կտակարանի «ի սկզբանէ էր Բանն» խօսքը: Ատեն մը, գերման փիլիսոփայութիւնը բառի, բա-նի եւ մտքի փառաբանութեան ցեխին մէջ մխրճուած մնաց, եւ Ֆէօյըրպախ չկրցաւ հարցը լուծել իր հաստատումով՝ Թէ կրօնքը, այսինքն Ատուածանման մարդկութեան մտքի մը վարկածը՝ կ'արդիլէ մարդուն ազատ ինքնամտածումի իրաւունքը: Ըստ անոր, եթէ մարդկու-թիւնը իր բանաւոր եւ տեսական միաքը կարենար ազատել կրօնքի չղթաներէն, պիտի յաղթէր յեղափոխութիւնը: Այս մտածումը Գերմանիոյ հակակղերական մտաւորականութիւնը հրաւիրեց զանգու-ածային աւազախրումի եւ ինքնախաբէ-ութեան քանի որ ան, ուրիշ մտաւորա-կանութիւններու նման, կ'ուզէր հաւա-տալ որ մարդկութեան չղթաները զգլ-խաւորաբար բանաւոր չղթաներ էին, բառի եւ մտքի կապանքները, որոնց բա-նալին ալ բանաւոր էր, այսինքն՝ կը կարենար նոր ձեւերով խօսելու եւ մը-տածելու մէջ: Իսկ խօսքի առանձնայը-նորհեալները, անշուշտ, նո՛յն այդ մը-տաւորականներն էին, որոնք կ'օրօրուէին բանաւոր լուծումներու երազներով:

*Մա՛րքսն էր որ մերժեց այս վարկածին վրայ հիմնուած ինդնագոհ ու երախա-յական մտածելակերպը, սակայն առանց գոհհիկ քաղքենիութեան նախընտրած գործնապաշտութեան ծուղակին մէջ իյ-նալու: Մինչեւ այսօր ալ կը լսենք այդ գործնապաշտութեան կոչերը, որոնք մեզ կը հրաւիրեն մտածումը լքել եւ գործին ապաւինիլ: Երբ, Մարքս՝ Ֆէօյըրպախի մասին նօթագրած 11–րդ թեզին մէջ կը գրէր, որ հարցը փիլիսոփաներուն պէս աշխարհը ՀԱՍԿՆԱԼԸ չէ, այլ՝ զայն ՓՈԽԵԼԸ, իր այդ հաստատումը տեսու-թիւն – գործ, բան – բանիլ զոյգի մեր-ժումը չէր երբեք: Ան ուզեց ընդգծել որ բանը անօգուտ է, երբ չի մտածեր բա-նելու մասին, սակայն միաժամանակ Մարքս չվարանեցաւ վերահաստատելու՝ որ գործը ապարդիւն մնալու դատապար-տուած է, առանց մտածումի: Ճիշդ ա՛յդ ըսել կ'ուզէր, երբ գրեց,– «Ինչպէս որ փիլիսոփայութիւնը իր նիւթական զէնքը կը գտնէ բանաւորութեան մէջ, այնպէս ալ բանաւորը իր մտաւոր զէնքը կը գըտ-նէ փիլիսոփայութեան մէջ»: Ժթ. դա-րուն ուղղամիտ փիլիսոփան ու բանուո-րը յեղափոխական դաշնակիցներ էին, եւ այդ պատճառով ալ Հայ Յեղափոխա-կանների Դաշնակցութեան զինանշանը փետուր – գրիչն ու բանուորական ու հո-ղագործային խորհրդանիշները կը միա-ցընէ:

Գրեց՝

ԽԱՉԻԿ ՔԷՕԼԷՕԼԵԱՆ

Պայմանները փոխուած են: Քաղքենի-ացած ենք, թէեւ դեռ ունինք (գոնէ Պէյրութի մէջ) բանուոր Հայ դասակարդ մը: Համաշխարհային յեղափոխութեան մը յոյսը եթէ կը յամենայ, զայն կա-րելի չէ բոլորովին զատել ընկերվարա-կան տեսութենէն: Սակայն այդ տարբեր հարց է: Ինծի համար կենսականը՝ խօս-քի եւ գործի, բանի եւ բանելու անքակ-տելի կապը վերահաստատելն է: Նման վերահաստատում, եթէ լուրջ է, որոշ եզրակացութիւններու եւ ինքնաքըն-նադատութիւններու կ'առաջնորդէ մեզ: Ո՛չ միայն մեր պաշտօնական կազմակեր-պութիւնները, այլեւ «մեզ» բառին ա՛յն իմաստով՝ որ կ'ընդգրկէ անպաշտօն դաշ-նակցականները ու յեղափոխական մտա-ւորականները:

Մարքս չատ յստակօրէն կը տեսնէր այն փորձանքը, որուն զոհն էր գեր-մանական իտէալապաշտ փիլիսոփայու-թիւնը, եւ որուն զոհն էր նաեւ հակո-տընդեայ ձեւով տարբերող գործօն յեղա-փոխական մը: Այս երկու տարբեր զո-հերը հաւասարապէս մէկ կէտ ունէին, ըստ Մարքսի,– Բացարձակապաշտութիւնը, որ կը ծնի բառի, մտաւոր ու բանային կառոյցի, խորհրդանիշի, մէկ խօսքով՝ Տեսիլքի պաշտամունքէն: Բարեմիտ ու բարենպատակ «կոյրը», որ կը մոլորի բանակերտ բացարձակի մացառուտներուն մէջ, կրնայ «ալ» ըլլալ կամ «ձախ», կըր-նայ բանապաշտ մտաւորական ըլլալ կամ գործնապաշտ ահաբեկիչ,– ժթ. դարը ունէր ոչ միայն իր բառապաշտները, այ-լեւ՝ ԱՐԱՐԻՔ պաշտող անիշխանական-ները, որոնք, ըստ Մարքսի, նոյնքան դիւրաւ կը շլանային բացարձակով: Այս բացարձակի պաշտամունքը դրդապատ-ճառն է Մարքսի կարծր խօսքին,– «Ա.-պուշութիւն է փորձել իրականութիւնը համակերպեցնել քաղաքական ԻՏԷԱԼ-ՆԵՐՈՒ, որոնք օրուան իրականութիւն-ներու մէջ ամուր հիմ չունին»: (Ընդգը-ծումը՝ իմս, Խ. Թ.):

Անշուշտ նման խօսք կրնայ անցեալի եւ այսօրուան վախկոտ քաղքենիութեան «ռազմամթերք» հայթայթել, եւ պատըր-ուակ ըլլալ՝ ամէն քաղաքական ու յեղա-փոխական գործունէութեան մերժումի:

Սակայն, Մարքս յեղափոխութիւնը չմերժեց ու անոր կարելիութիւնը չը-ժըխտեց: Իրատես մըն էր Մարքս, կամ գոնէ ինք կը հաւատար որ էր: Ամէն տեսակի յեղափոխութեան տեսիլք ու բա-նաւոր կառոյց ընդունելի չէր իրեն: Մի-ամիտները փափկանկատօրէն հանդուր-ժող մէկը չէր Մարքս, որ իրեն զաղա-փարական հակառակորդ անիշխանական տեսաբանները « դոդոշ » որակելէ չէր վարաներ:

Մարքս կը հաւատար, որ ամէն դար-չըջման տարբեր յեղափոխութիւններու կամ տարբեր յեղափոխական իտէալներու ենթահող եւ հիմ կը հայթայթէ: Այս-պէս, օրինակ, ան պարզմիտ հակաքաղ-քենիական մը չէր: Ընդհակառակն, պատրաստ էր հաստատելու որ ԺԹ. եւ ԺԸ. դարերու ՄԻԱԿ ԿԱՐԵԼԻ ՑԵՂԱՓՈ-ԽԱԿԱՆ ԻՏԷԱԼԸ քաղքենիականն էր: Նո՛յն վճռականութեամբ կը հաւատար որ ԺԹ. դարը միայն մէկ յեղափոխական պայքարի ենթահող կը հայթայթէր,– բանուոր – մտաւորական դաշնակցու-թեան, որ կը պարտէր պայքարիլ՝ քաղ-քենիականութեան դրոյթին դէմ:

Ունիմ մօտիկ բարեկամներ ու ըրչա-կիցներ, որոնք (Հա՛յ թէ օտար) այսօր նոյն բանը կը չարունակեն հաստատել: Ունիմ ուրիշ նոյնքան մօտ բարեկամներ, որոնք կը հաստատեն թէ ըստ նոր ընկեր-վարական վերլուծումի, այսօրուան հա-մամոլորակային կամ համաեվրոպական-յին պայքարին մէջ, այսպէս – կոչուած Երրորդ Աշխարհի ազատագրական պայ-քարը կը կատարէ ա՛յն դերը, որ բան-ուոր դասակարգը կը կատարէր Արեւմտ. Եւրոպայի մէջ, անցեալ դարուն: Աւե-լի՛ն: Հայ ժողովուրդը, ըստ այս վեր-լուծումին, հակաչխարհակալ պայքա-րով միայն կրնայ ազատագրուիլ ու տիրանալ իր իրաւունքներուն, իսկ այդ պայքարը կը մղուի այսօր Երրորդ Աշխարհի յառաջդիմական ուժերուն կող-մէ,– Պաղեստինէն՝ Նիքարակուա, Էրիթ-րէայէն՝ Մոզանպիք ու Էլ Սալվատոր: Վերլուծում մըն է, որուն պիտի ուզէի հաւատալ ու նուիրուիլ: Վերլուծում մըն է, որ ունի զանազան համոզիչ կէտեր, եւ որ սակայն պէտք չէ վերածուի բա-ցարձակ Հաւատամքի կամ տեսիլքի: Զեմ կարծեր որ ըստ այս տեսութեան՝ զոր-ծելը ամէն կղզեանքի եւ փակ դուռի բա-նալին է:

Սակայն, նման զգոյշ եզրակացութիւն անգործութեան չի դատապարտեր մեզ:

CHANSON du COMÉDIEN

A la mémoire de mon Père

je serai Don Giovanni, aux manches de dentelle
grand maître fauconnier au gantelet de fer
après buisson creux si la belle est trop fière
par deux fois brûlerai l'outarde et l'hirondelle

je serai le lecteur au cadran des passions
dans ma voix Attila détruira les moissons
pleurera Papageno des moinillons pris au piège
et les violons jaloux se tairont à mes sortilèges

je boirai le poison des Borgia les calices d'hydromel
je serai l'avare se cachant dedans son escarcelle
avec le cœur de César j'aimerai l'Egyptienne
avec les mains d'Othello j'étranglerai la Vénitienne

je serai Hamlet outragé en deuil de son empire
sans réponse ma question hantera vos souvenirs
tandis qu'en blanc cortège harfangs et renards
conduiront au sommeil la prisonnière des nénuphars

mais lorsque l'Ange Azraël frappera à ma porte
je ne serai que moi sans fards ni escorte
sans Leporello ni Sganarelle
pour souffler la chandelle
alors j'accrocherai au vestiaire
les cothurnes et la pourpre jubilaire
convive sans retour du commandeur sans visage
j'endosserai seul mon habit noir de voyage

ARAXI KMPETIAN

Février, 1980.

Բացարձակին նուիրուիլ մերժել՝ արարքը մերժել չի նշանակեր: Մինչեւ 1887, հայ քաղքենիութեան անորոշութիւնն ու ըզ-դուշութիւնը ստեղծած էին անկարելի, անընդունելի, անդամալոյծ կեանք մը, եաթաղանին առջեւ: 1887–էն 1890, Հըն-չակեան եւ Դաշնակցական կուսակցու-թիւնները ընդունեցան արարքի պատաս-խանատուութիւնը եւ մերժեցին այդ անց-եալը: 1923–էն (Լօզանի դաշնագրէն ետք) մինչեւ 1973, ճիշդ 50 տարի, նոյն տե-սակի վերանորոգուող անորոշութիւններ, տեսական չփոթումներ եւ մանաւանդ գործնական ենթահողի պակասը պատ-ճառ եղան որ նորէն կրաւորական դիրք բռնէ Հայութիւնը: Պետրոս Թերզեան ճիշդ է, երբ կը հաստատէ որ «նթէ օր մը Սփիւռքի պատմութիւնը գրուի, 70-ական թուականները հաւանաբար հոն յիշուին՝ որպէս որակային փոփոխու-թեան շրջան: Այդ շրջանը՝ հայկ. տեա-բեկչութեան շրջանն է...: Տեաբեկչու-թիւնը՝ Սփիւռքի առաջին միջամտու-թիւնն է պատմութենէ մը ներս, որ իրը չէր, այլ իրեն պարտադրուած էր: Ու

●▸

●▸

ինչպէս ամէն միջամտութիւն, այս մէկն ալ կը խանգարէ... կը հրաւիրէ դիւրոխոշումի»: (Տե՛ս «Անցեալը՝ Անկարելի էր», «Յառաջ», Նոյ· 29 / 30, 1980):

Չիս հետաքրքրողը եւ մտահոգողը բացարձակապաշտ դիւրոխոշումներն են: Վահէ Օշական եւ Հայ անանուն ահաբեկիչները կրնամ տալ իրրեւ օրինակներ՝ երկու բեւեռացած դիւրոխոշումներու: Այդ ըսել չէ որ հանրութեան ծանօթ մըտաւորականն ու ստիպողաբար անանուն ահաբեկիչները բոլորովին տարբեր հաւասարամքներու կը ծառայեն: Չեմ կարծեր որ այդպէս է: Սակայն, թէեւ անոնց եզրակացութիւնները կրնան այս կամ այն պատճառով համընկնիլ, անոնք կը հասնին այդ եզրակացութիւններուն՝ բոլորովին տարբեր ելակէտներէ մեկնելով:

Վահէ Օշական՝ տաղանդաւոր բացարձակապաշտ մըն է, որ կրնայ դրել կոյս բառաչխարհի մը մէջ, ուր ոտք չէ կոխած Մարքսական մտածումը: Իր «Ընտրանիի Հարցը – Թիւ 2» կարեւոր գրութեան մէջ (որուն պէտք եղած ձեւով չանդրադարձաւ հայ մամուլը, Թիւ 1–ի առեղծած ժխորէն ետք,– տե՛ս՝ «Հայրենիք», 1 Նոյեմբեր, 1980), Օշական կը դրէ,– «Ընտրանի բառը երկու տարբեր... իմաստներով կարելի է գործածել: Առաջին իմաստով բառը կը բնորոշէ այն անհատները՝ որոնք ընկերութեան մէջ դեկավար դիրք կը գրաւեն...: Երկրորդ, աւելի սահմանափակ, սակայն շատ աւելի բացարձակ իմաստով, ընտրանի կը կազմեն անոնք՝ որոնք մարդկային արժէքներ բանաձեւողներն ու պահպանողները կը համարեն իրենք զիրենք, բանիւ եւ գործով...: Այս երկու ընտրանիներուն հակադրութիւնը ակնթախ է,– առաջինը յարաբերականին, կարելիին, գործնականին տնտեսումին հետամուտ է...: Երկրորդը՝ սակայն, բացարձակին արուեստն է: (Ընդգծումները՝ իմ կողմէս, Ա· Թ·):

Օշականի հետաքրքրական երկու յօդուածներուն հիմնական ձախողանքը կը ներկայացնեն, գոնէ ինծի համար, նման հաստատումներ, ուր երկու «ընտրանիներ» իրարմէ կը զատուին,– մէկը նուիրուած է քաղաքական եւ ընկերային կեանքի կազմակերպութեան, յարաբերականին, գործնականին. միւսը՝ մտաւորական է, եւ նուիրուած բացարձակին, «բանիւ եւ գործով»: Ինքզինքը գետեղած է պատմութեան դուրս: Օշական, նոյնիսկ երբ զգացականօրէն կ'ընդունի ահաբեկչութիւնը իբրեւ կարելի միջամտութիւն մեր պատմութեան մէջ, կը շարունակէ մերժել նո՛յն այդ պատմութիւնը, երբ կը պնդէ որ բացարձակի տարածք մը կայ, ու կայ անոր նուիրուած ընտրանի մը, «բոլորովին անկախ անձերուն ընկերային դիրքէն ու հանգամանքէն»: (Նոյն յօդուած – ուած – Ա· Թ·):

Այս ըմբռնում, զղացական, բացարձակապաշտ եւ տեսականօրէն հիմնովին սխալ մտածելակերպին մէջ կը տեսնենք թէ ինչո՛ւ Օշականի յօդուածը կարելի է հրատարակել Հ· Ց· Դ·–ի Հիւս· Ամերիկայի պաշտօնաթերթ՝ «Հայրենիք»ին մէջ: Բացարձակի այս պաշտամունքը տեսիլք մը կուտքի վերածելու եւ զայն պատուանդանի մը վրայ զետեղելու ճիգն է, հաւատք մը պատմութենէն եւ ընկերութենէն անդին գտնուող երեւակայուած տարածքի մը մէջ կառուցանելու ջանք մըն է, որ թէ՛ ապարդիւն է, թէ՛ ալ վտանգաւոր, մանաւանդ հայ մտաւորականին համար, եւ որ միաժամանակ կը մնայ պաշտօնական Հ· Ց· Դ·–ի ղեկավարութեան մտածելակերպը բնորոշող կէտ մը: (Տե՛ս՝ իմ «Փարոսը ե՞րբ վըտանգաւոր է Նաւուն» յօդուածը, «Յառաջ – Միտք եւ Արուեստ», 9 Նոյեմբեր, 1980):

Այս բացարձակապաշտութիւնը, ինչպէս ըսի, միայն Օշականեան մտայնի կառոյցին յատուկ չէ: Նոյն կորուկ ձայնն ու ոճը կը գտնուի մեր ժամանակակից ահաբեկիչներուն մօտ: Ցխնամեայ սփիւռքեան թմբիւրին նոր ելած այս սերունդը գործով կը միջամտէ պատմութեան մէջ, կը մերժէ Հայ Սփիւռքի կրթաւորականութիւնը եւ անկարելի անցեալը: Այսինքն, կը փորձէ խաղալ այն դերը՝ զոր խաղացին Հնչակեան ու Դաշնակցական կուսակցութիւնները, 1887–էն 1923: Եւ ասո՛ղ որ անո՛նց նման կը կրկնէ տեսական սխալներ:

Յատակ չէ, նախ, թէ ի՞նչ է ահաբեկչական գործով զբաղող տղոց եւ աղջիկներու՝ քաղաքական տեսութիւնը: Անշուշտ անոնց կարգախօսներն ու զանազան հաղորդագրութիւնները մեզի կը ըզգացնեն որ Մարքսական, Երրորդ Աշխարհի Զախի մօտեցումը կը բաժնեն: Սակայն, նոյնիսկ զաղտնի եւ գործին կամ արարքին նուիրուած կազմակերպութիւն մը իրաւունք չունի ժողովուրդի մը պատմութեան մէջ միջամտելու, առանց ինքնաբացատրութեան, ինքնաքննութեան եւ հաղորդակցութեան:

Կրնայ ընթերցողը ըսել,– «Այս ի՞նչ միամիտ յօդուածագիր ես, ա՛յ տղայ: Չե՞ս հասկնար որ զաղտնի կազմակերպութեան մը մասին կը գրես: Ցետոյ, անոնք ինչո՞ւ կարծիք ու խօսակցութիւն ուզեն քեզմէ, երբ իրենք լծուած են գործի, դուն՝ խօսքի: Բանտը իրե՛նք, «բանախօսը» դուն: Անոնք ի՞նչ պէտք ունին քեզի»:

Ինծի կը թուի որ այսպէս կը մտածեն նաեւ ահաբեկիչները, եւ այդ կը մտահոգէ զիս: Տեսական դիրքերու հաստատումն ու բացատրութիւնը ստորագրուած յօդուածներու չի կարօտիր: Քաղաքական վերլուծում մը Հայ Սփիւռքին ներկայացնող ահաբեկիչներ եթէ ըլլան, անպայման ստորագրութիւն չեն պահանջեր մեր բոլոր խմբագիրները: Նման տեսական հաղորդագրութիւններ հանրային մտածումի բանական նիւթ պէտք է հայթայթեն: Միայն գործով միջամտել մեր պատմութեան մէջ, սխալ է:

Ահաբեկչութիւնը, եթէ միայն թմբիրէն զարթեցուցիչ պիտի չըլլայ եւ եթէ ազդու պիտի ըլլայ, ստիպուած է մեծ հաւաքականութեան մը մտածելակերպին մէջ ալ դեր ունենալ. չի կրնար միայն գործելակերպ ըլլալ: Ցետոյ, գործ մըն է որ պէտք է տեսական վերլուծումի ենթարկուի: Թուրք դեսպան մը սպաննելն ու եւրոպական օդանաւային ընկերութեան մը չէնքը ռմբակոծել կրնան նոյն տեսութենէն մեկնիլ, սակայն կը պահանջեն ինքնավերլուծում, քանի որ բոլորովին տարբեր եւ երբեմն հակասական արդիւնքներ կրնան ունենալ: Գործի բացարձակ պաշտամունքը չի բաւեր. տեսութեան տեսական քննարկումն ալ կենսական է: Կը վախնամ որ արարքին նուիրումը կրնայ նպատակի մոռացման պատճառ ըլլալ: Նոյնիսկ Զախակողմեաններ, նոյնիսկ յանուն արբազան տեսիլքի մը պայքարողներ կրնան անցեալի Ֆաշական ահաբեկիչներու ինկած ծուղակին մէջ իյնալ, չմտածուած արարքներով: 1934 Թուականին, Ֆրանսացի աշակողմեան գրող՝ Տրիէօ լա Ռոշէլ իր «ԼԸ ՇԻՖ» գործին մէջ կը գրէր,– «Չենք գիտեր թէ ի՞նչ պիտի ընենք, բայց բան մը պիտի ընենք: Պիտի գիտնանք թէ ո՞վ ենք, երբ տեսնենք՝ թէ ի՞նչ ըրած ենք»:

Եկեղեցի մը կամ դպրոց մը չինելը յաճախ օգտակար գործեր են, սակայն, չմտածուած ձեւով ու կոյր հաւատքով զանոնք ամէն համայնքի մէջ տնկելով Սփիւռք չենք փրկեր: Նմանապէս, ահաբեկչական արարքներըն ալ գործեր են, որոնք սկիզբը բոլորովին եւ անժխտելիօրէն կենսական են, իրրեւ զարթեցուցիչ: Սակայն անկէ ե՞տք: Ոչ ահաբեկչութիւնը իրրեւ արարք, ոչ ալ հազիւ յղկուած ձախ տեսութիւնը իրրեւ տեսութիւն՝ ընդունելի են, երբ չեն ենթարկուիր տեսական վերաքննումի: Մեր ահաբեկիչներու հաղորդագրութիւնները կ'արձագանգեն մեր յեղափոխական անցեալը: «Միայն զէնքով կայ Հայոց ՓՐԿՈՒԹԻՒՆ» կը գրեն մեր ահաբեկիչները: Անցեալը ոգեկոչող այս տողերու յառաջացուցած յուզմէն, ցնցումէն եւ ոգեւորումէն ետք կու գայ հարցումը,– Այո՛, սակայն, արդեօք Սփիւռքի միակ լուրջ «զէնքը» ռումբն ու հրացա՞նն են: Դրամը, կազմակերպութիւնը եւ հեռատեսութիւնն ալ նոյնքան կարեւոր զէնքեր չե՞ն: «Ո՛ր միակ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ քո հաւաքական ուժի մէջ է» ըսողը, ուրիշ զէնքերու, ուրիշ ուժի եւ ուրիշ փրկութիւններու մասին չէ՞ր մտածեր: Առարկայապաշտութիւնն ալ բացարձակապաշտութիւն մըն է, բանիլ է, որուն կը պակսի մըտածումը: Առանց անարգելու ահաբեկիչները, կարելի է ըսել,– «ան – բան բանիլը չի կրնար սփիւռքեան ծուղակներու բանալին ըլլալ»: Առանց ինքնաքննութեան, յարատեւ տեսական վերանայումի եւ առանց հանրութեան հետ հաղորդակցութեան փորձի, այս մէկն ալ կը մնայ ապարդիւն ու մանկի չարժուամ, որքա՞ն ալ արժէքաւոր ըլլայ իր միջամտութիւնը՝ մեր անկարելի պատմութեան մէջ:

ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

16 Դեկտեմբեր, 1980

ԹԱՏՐՈՆ

Թատերախաղ մէկ արարով: Նախապէս երկու արարներով էր· հեղինակը կը վերածէ մէկ արարի: Տեսարանը կը ներկայացնէ գոց սենեակ մը, երկու պատուհաններով, ձախ եւ աջ կողմերը, զետեղուած բեմին վերի ծայրերը: Զորս տիպարներ.– «Համ», Ֆլով, Նէլ և Նէկ: Ի՞նչ տեղի կ'ունենայ· խորագիրը բառականին արտայայտիչ է: Ֆրանսերէնը իմաստը այնքան լաւ չի տար, որքան անգլերէնը «Էնտկէյմ», վերջ եւ խաղ բառերու զուգորդութեամբ: Հայերէնով կարելի է ըսել «խաղին վերջը», «վերջին խաղը» կամ, խաղ եւ վերջ բառերը միացնելով եթէ կարելի է ըսել «խաղավերջը» կամ «վերջախաղը»: Համաձայն թէ խմբագիրը ինչպէ՞ս կ'առնուի, խաղը որ հոս մահն է կամ խաղը պարզապէս: Ուրիշ ընտրութիւն մը· մահը խաղի մը վերջն է կամ ալ մահը խաղերուն վերջինն է որ կը խաղանք: Ահա այն ինչ որ տեղի կ'ունենայ: Մինչ անդերձն խորագիրը՝ վերջ եւ խաղ բառերը իրար մօտ եկած են եւ իմաստային կալուածին մէջ, դիտողին կամ ընթերցողին կը մնայ խաղին եւ վերջին միջեւ ընտրութիւն ընել, թէեւ անգլերէնն խորագրին մէջ վերջը առաջ դրուած է....: Կարճ խօսքով, մահը եւ կեանքը խաղին խառնուած են եւ մէկը կամ միւսը խաղ մըն է:

«Սպասելով Կօտոյին» (1) թատերախաղին մէջ եթէ Կօտոյին ո՞վ ըլլալը ենթակայ էր զանազան մեկնաբանութիւններու, առնուազն սակայն յստակ էր որ բան մը տեղի կ'ունենար, մարդիկ Կօտոն կը ըսպասէին: «Վերջին խաղ»ի պարագային մթնոլորտը աւելի ծանր է· առանց կասկածի սենեակ մը: Գորշ լուսաւորում, դրան մօտ կռնակի վրայ կախուած պատկեր մը»: Առաջինի պարագային մթնոլորտը յարաբերաբար աւելի մեղմ է, էսթրագոնի եւ Վլատիմիրի հոպիտի ծիծաղաշարժ երկխօսութիւնը կը թեթեւցնէ ընդհանուր մթնոլորտը: «Վերջին խաղը» ըստ հեղինակին խոստովանութեան հանդիսատեսին զիջումներ չըներ: Մահուան հետ գործ ունինք, հանդիսատեսը կը դրուի այս ծանր իրականութեան առջեւ: Թէեւ երգիծական պահեր չեն պակսիր (2):

Ոճային դրեթէ նոյն ըմբռնումը, ինչ կը վերաբերի զոյգ եւ զիրար ամբողջացնող տիպարներու պարագային: Ինչպէս Վլատիմիր – էսթրագոն, Փօծօ եւ Լաքի միասին կ'երթան, նոյն ձեւով «Համ», Ֆլով, Նէկ եւ Նէլ: Սա տարբերու թեամբ միայն որ այս թատերախաղին մէջ վերջին զոյգին դերը չատ մեծ չէ: Միւս կողմէն «Համ» գամուած է իր բազկաթոռին եւ ոտքի չի կրնար ելլել, մինչ Ֆլով չի կրնար նստիլ: «Համ» պէտք ունի Ֆլովին որ հոգ տանի իրեն, պատրաստէ, դարձնէ զինքը սենեակին չուրջը: Մինչ Ֆլով պէտք ունի «Համ»ին, որովհետեւ ան միայն գիտէ ուտեստեղէնի ամբարներուն բանալին պաղտնիքը: Մինչ Նէկ եւ Նէլ իրար հետ կ'երթան եւ գիրար կ'ամբողջացնեն, երկրորդը կին է: Անոնք գամուած են իրենց աղբամանների մէջ, «Համ»ին ծնողներն են: Անոնք նաեւ պէտք ունին Ֆլովին, որովհետեւ ան է որ հոգ կը տանի իրենց: Ֆլով «Համ»ին զաւա՞կն է արդեօք թէ որդեգիր զաւակն է՝ բնազիրը յստակ չէ այդ մասին: Մէկ բան պարզ է սակայն· «Համ» կը հրահանգէ, Ֆլով կը գործադրէ: Ինչպէս էր պարագան Փօծօյի ,որ կը հրահանգէր եւ Լաքին որ կը գործադրէր: «Սպասելով Կօտոյին» մէջ բնութիւնը ներկայ էր մերկ ծառով, դէպքը տեղի կ'ունենար գիւղական ճամբու մը վրայ: «Վերջին խաղը» չատ աւելի հեռու է բնութենէն, բնութիւնը մեռնելու վրայ է, տիպարները կը կորսընցնեն իրենց մազերը, ակռաները, իտէալները...: Միակ կապը բնութեան հետ հեռաղիտակ մըն է, որ Ֆլով «Համ»ի հրահանգին վրայ կ'ելլէ աստիճաններէն եւ կը նայի պատուհաններէն: Ա· թատերախաղի պարագային միշտ կըրկնուող մասն է «երթանք» եւ չեն կրնար երթալ որովհետեւ ժամադրուած են Կօտոյին հետ եւ զայն կը սպասեն: «Վերջին խաղ»ի պարագային Ֆլովն է յաճախ որ որ կը կրկնէ թէ պիտի երթայ եւ լքէ իր տէրը· սակայն չերթար: Նոյնիսկ թատերախաղի վերջաւորութեան, երբ այլեւս վճռականօրէն կ'որոշէ մեկնիլ, վերարկուն կը հագնի, պայուսակը կ'առնէ, սակայն չերթար: Ինչպէս վլատիմիրը եւ էսթրագոն վերջաւորութեան կ'ըսեն թէ պիտի երթան եւ չեն չարժիր: Նկատի պէտք է ունենալ երթալու գաղափարը, միշտ խաղի վերջաւորութեան, եւ չկարենալը:

Կօտոյի պարագային եթէ Բ· արարը չափակցութիւնն է Ա·ին, և ամբողջ թատերախաղը կարելի է անհամարօրէն կըրկնել, պարագան նոյնն է «Վերջին խաղ»ին: Ֆլով, երբ վերարկուն հագած եւ պայուսակը առած դրան առջեւ դուրս չելլեր, արդէն թատերախաղին սկիզբն ենք: Ուրիշ յաւելեալ պատճառ մը եւս, որովհետեւ «Համ» դարձեալ երեսը կը ծածկէ թաշկինակով մը, որ երեսը ծածկած էր խաղին սկիզբը եւ զոր կը հանէ եւ ապա վերջաւորութեան կ'ըսէ.– «Այսպէս խաղանք... եւ այլեւս չխօսինք»: «Սպասելով Կօտոյին» կը բացուի անկարելի տեսարանի մը առջեւ «ոչինչ կարելի է ընել» եւ էսթրագոն կօշիկը չի կրնար հանել: «Վերջին խաղը» հետեւելով ձեւով կը սկսի.– «Վերջացաւ, վերջացաւ... պիտի վերջանայ, թերեւս վերջանայ· (պահ մը) հատիկները կ'աւելնան հատիկներուն վրայ, մէկ առ մէկ, եւ օր մը, յանկարծ պզտիկ գաւաթ մը, անկարելի գաւաթը· (պահ մը) այլեւս պիտի չկարենան զիս պատժել· կ'երթամ խոհանոցս, երեքի վրայ երեք մեթր եւ երեք մեթր, կը սպասեմ որ սուլէ (պահ մը) գեղեցիկ չափեր են, չէ՞: Պիտի կըրնչիմ սեղանին, պատը դիտեմ, սպասելով իր (Համին) սուլիչին»: Ֆլովն է ըսողը· չորս անգամ կը կրկնէ վերջացաւ բառը, երբ խաղը դեռ նոր կը սկսի: Առաւել այս ոճային նմանութիւններուն, երկու թատերախաղերը կը վերջանան տղեկի մը երեւումով: Մինչ «Կօտոյի» պարագային տղեկը Կօտոյի պատգամբերն է եւ անձնապէս բեմ կու գայ, «Վերջին խաղ»ի պարագային, Ֆլով հեռադիտակով կը տեսնէ տղեկը եւ անչուշտ տարբեր իմաստ ունի:

Ո՞վ է «Համ»ը եւ ի՞նչ կը ներկայացնէ «Վերջին խաղ»ը՝ տարբեր քննադատներ անչուշտ տարբեր մօտեցումներ ունին: Ամբողջ խաղին առանցքը «Համ»ն է· անձնապէր, եսակեդրոն, իշխող («համ»ը անգլերէնն կը նշանակէ՝ մուրճ· ժողովրդական խօսակցական լեզուի մէջ կը նշանակէ նաեւ՝ դերասան): Մինչ Ֆլովի անգլերէնն հնչիւնը կը նմանի որոշ չափով «քլու»ի՝ գամ Ֆրանսերէնն (անգլերէն գամին կ'ըսեն «նէյլ», յիշենք որ տիպարներէն մէկը կը կոչուի Նէլ, որ կըրնայ նաեւ «Համ»ին հարուածած գամերէն մէկը ըլլալ):

Արդեօ՞ք այս իմաստները կը նոյնանան իրենց պատկերացուցած տիպարին հետ (3): «Համ»ը կրնայ նոյնանալ բռնատիրութեան հետ: Ֆլով ամբողջական հընազանդութիւն է: Մինչ Նէլ եւ Նէկ պարտաւոր են լսելու «Համ»ին պատմութիւնները, կատր մը անուշեղէնի փոխարէն: «Համ» կրնար բազմաթիւ աղքատներ փրկել եւ չընար, թէեւ ունի իր աղքատները եւ որոնց այցելութեան կը ղրկէ Ֆլովը: Մայր Փէկկը (կրնայ «Համ»ին համանուհին ըլլալ) կը մեռնի, որովհետեւ «Համ» կը մերժէ կատր մը լամբի իւղ տալ անոր: Մութին մէջ կը ձգէ զինք, ինչպէս ինքն է, կոյր է եւ ոչինչ կը տեսնէ:

Մարթին Խասլին կը յիշէ ռուս թատերագիր Նիքոլայ Լվրէնիովի մենախօսութիւններէն մէկը, որ տեղի կ'ունենայ իվանով անուն մարդու մը մէջ: Սրճարանի մը մէջ նստած, ան կը մտածէ փախչիլ երգչուհիի մը հետ, իր զգացումները այս կ'ըսեն իրեն, մինչ իր միտքը ցոյց կու տայ իրեն բարոյականին անհրաժեշտութիւնը՝ մնալ կնոջը հետ: Այս վիճակին մէջ է, երբ կապար մը կը խոցէ սիրտը: Իվանով անձնասպան եղած է: Հաւանական չէ որ պէտքէթ կարդացած ըլլայ այս գործը, բայց թատերախաղին մէջ որոշ տուեալներ կան, որոնք կը թելադրեն որ եղածը մենախօսութիւն մըն է: Գոց միջոցը ուր տեղի կ'ունենան դէպքերը: Երկու փոքրիկ պատուհանները կը ներկայացնեն աչքերը եւ ուրկէ Ֆլով կը դիտէ իր հեռադիտակով: «Համ» կոյր է, քմայքոտ եւ զգացական: Ֆլով կը ծառայէ՝ որպէս «Համ»ի զգայարանքներ

ՎԵՐՋԱԽԱՂԸ

FIN DE PARTIE

Ֆ. Հարցրած — Ոչ մեկը կարծես չէ թե մեր ապրած ժամանակը կ՚ուզէ նորէն ապրիլ։ Ինչո՞ւ ոչ ոք կ՚ուզէ վերադառնալ անցեալ։

Պ. Պատասխանած — Ոչ ոք կ՚ուզէ վերադառնալ անցեալ, որովհետեւ ոչ ոք գոհ է ներկայէն։ Ամէն մարդ կ՚ուզէ ապրիլ ապագային մէջ, որովհետեւ ապագան միշտ ալ աւելի լաւ է քան անցեալը։

Ֆ. Հարցրած — Ուրեմն դուն կը կարծե՞ս, որ ապագան աւելի լաւ պիտի ըլլայ։

Պ. Պատասխանած — Ես ոչինչ կը կարծեմ, ես միայն կը յուսամ։

Ֆ. Հարցրած — Ի՞նչ է յոյսը։

Պ. Պատասխանած — Յոյսը «Յոյն»ի մը նման է, որ կը սպասէ, որ «Ձայն»ը մը ըսէ իրեն, թէ ինչ պիտի ընէ, որպէսզի «Ձայն»ը մը ըսէ իրեն, թէ ինչ պիտի ընէ։ Ես կը սպասեմ, որ «Ձայն»ը մը ըսէ ինծի, թէ ինչ պիտի ընեմ, որպէսզի ես ալ ընեմ զայն։

Ֆ. Հարցրած — Ինչո՞ւ «Յոյն»ի մը նման։

Պ. Պատասխանած — Որովհետեւ «Յոյն»ը կը սպասէ, որ «Ձայն»ը մը ըսէ իրեն, թէ ինչ պիտի ընէ, որպէսզի ինք ալ ընէ զայն։ Ան

RENÉ CHAR

ou l'éclair poétique

«Le poète se remarque à la quantité de pages insignifiantes qu'il n'écrit pas». Par cette formule, René Char caractérise bien l'extrême concision d'un art qui refuse de s'attarder à ses sources événementielles. Volontiers aphoristique, le langage du poète épouse une dynamique qui abolit les contraires et entraine la fulguration de l'instant («l'éclair me dure»). L'œuvre de René Char, attentive à se définir pour mieux s'affranchir, fait du resserrement de la parole la condition d'un élargissement de son sens. Héritier d'Héraclite, Char privilégie toujours une tension interne qu'aiguise le surgissement d'un douloureux obstacle à dépasser: « Au centre de la poèsie, un contradicteur t'attend. C'est ton souverain. Lutte loyalement contre lui ».

Né en 1907 à l'Isle-sur-Sorgue, René Char grandit dans la propriété des Névons qui sera plus tard chargée, dans son œuvre, des affects conjugués de la jouvence et du deuil. Ses premiers poèmes, écrits entre 1922 et 1926, paraissent en 1928 sous le titre *Les cloches sur le cœur*. La publication d'*Arsenal* en 1929 vaut à Char l'amitié durable de Paul Eluard qui l'introduit parmi les surréalistes; c'est d'ailleurs en collaboration avec Eluard et André Breton qu'il compose en 1930 *Ralentir travaux*. L'écriture éclatée du *Marteau sans maître* - recueil qui, en 1934, réunit tous les poèmes écrits depuis 1927 — traduit «l'hallucinante expérience de l'homme noué au Mal, de l'homme massacré et pourtant victorieux». «Entraîneur d'hypnose», le poète emprunte la «torche du prodigue» pour transformer son désespoir en espoir intransigeant, avec l'assurance qu'«abondance viendra». Char n'en dénonce pas moins prémonitoirement l'irruption insidieuse de la barbarie qui, dans *Placard pour un chemin des écoliers*(1937)et dans *Dehors la nuit est gouvernée* (1938), devient, sous la forme d'un chaotique et impétueux afflux d'images, une puissance obscure et paralysante à laquelle il convient de substituer «le visage nuptial» de l'amour salvateur. Si Char s'éloigne dès 1934 du surréalisme, c'est parce que «la parole dépourvue de sens» lui paraît alors bien légère face au déploiement des fascismes européens et à l'imminence de la seconde guerre mondiale.

La guerre va simultanément l'engager dans le combat armé contre l'occupant nazi — il devient en 1942 chef d'un maquis de Provence sous le pseudonyme de capitaine Alexandre — et dans un approfondissement de la connaissance par l'écriture. Si *Seuls demeurent* (1945) convie beauté et vérité aux salves de la délivrance, les *Feuillets d'Hypnos* — paru la même année et qui sont des notes prises au jour le jour dans les aléas de la Résistance, «notes... écrites dans la tension, la colère, la peur, l'émulation, le dégoût, la ruse, le recueillement furtif, l'illusion de l'avenir, l'amitié, l'amour» — retracent une errance lucide et responsable vers la lumineuse beauté appelée à survivre aux armistices platoniques. «Né de l'appel du devenir et de l'angoisse de la rétention», le poème consent, avec une fougue toute rimbaldienne, à affronter un inconnu qu'il pulvérise.

Lorsque Char émerge de l'affrontement, il porte sur soi les traces de la traversée du pire — ces «ailes de communication entre notre souffle reposé et nos fièvres les plus fortes» —, mais il a hâte de retrouver la faim de vivre, la libre complainte de l'amour et la saveur précieuse de l'amitié; l'après-guerre marque d'ailleurs le début de ses liens avc Camus, Braque, Matisse, Giacometti. Cependant la «sérénité crispée» du poète ne peut enrayer le travail souterrain de la mort qui prend peu à peu le visage dévorant de la mémoire et tend à obstruer un avenir auparavant pourvoyeur de vastes étendues. Aussi, dans *La Parole en archipel* (1962), le poète éprouve-t-il le sentiment d'avoir perdu son «temps vrai» et de parler dans la dislocation. Il ne fait plus partie des «matinaux» qui savaient guetter en pleine nuit le rougeoiment de l'aube. L'obsession fragmentaire s'accentue encore dans un texte au titre très explicite, *l'Age cassant* (1965).

René Char éprouve alors le besoin de reprendre racine, de retrouver cette source métaphorique et réelle qu'est la Sorgue — dans sa pièce poètique *Le soleil des eaux* (1949), il en a fait son personnage principal —, de retourner en amont de son enfance, de quérir des lieux aimés (comme certains parages d'Alsace, des parcelles de Luberon, Thouzon, Venasque). Puis le poète s'adresse aux éléments et en vient à célèbrer la «pluie giboyeuse» grâce à laquelle il ne souffrira plus «rupture, dessèchement ni agonie» mais se confondra au terme épars de la vie. Dans *Le Chien de cœur* (1968), la mort réapparaît pourtant, menaçante, dans une lumière «nue, agrandie, péremptoire, se brisant de toutes ses artères contre nous». L'effroi et la joie se font dès lors escorte dans «un vide à déséperément recenser», face à un «avenir déjà raturé». Char, qui sait que «la poésie vit d'insomnie», livre justement en 1972 dans *La nuit talismanique* un ensemble d'œuvres graphiques réalisées, «faute de sommeil», sur des écorces de bouleau entra 1955 et 1958; il y joint des poèmes plus récents où ressurgit une «réalité quasi sans choix, assaillante, assaillie, qui exténuée se dépose, puis se dresse, se veut fruit de chaos et de soin offert à notre oscillation».

Si, dans *Aromates chasseurs* (1976), Orion vient soudain reprendre place au cœur d'un siècle où, selon le poète, «l'espace intime» et «l'espace circulaire» ont été irrémédiablement séparés l'un de l'autre, c'est pour ouvrir «un troisième espace en chemin, hors du trajet des deux connus» — espace qui, à n'en pas douter, se confond avec ce monde de l'art dans lequel Char ne cherche jamais le pardon mais où il trouve ses «alliés substantiels» célébrés dans les nombreuses éditions de *Recherche de la base et du sommet:* les philosophes, des Présocratiques à Nietzche et Heidegger; les poètes, de Baudelaire à Arthur Rimbaud et Paul Eluard; et surtout les peintres, ses contemporains et amis, dont les plus grands (Braque, Picasso, Matisse, Miro, Vierra Da Silva, De Staël, Giacometti, Brauner) ont illustré son œuvre grave qui, «à proximité des urnes de la mort», ne cesse d'accomplir une mission audacieuse et fragile de reconnaissance.

Les principaux ouvrages de René Char son publiés chez Gallimard, et certains dans la collection de poche «Poésie — Gallimard».

lettres françaises

par

Daniel LEUWERS

BORIS VIAN

ou la gentille insolence

Né en 1920 à Ville-d'Avray, Boris Vian connaît très jeune les premières atteintes de la maladie. Souffrant de cardiopathie, il traverse une enfance protégée et choyée, dans un milieu aisé. Ses études sont assez ternes; l'adolescent se plie mal à la discipline scolaire mais il se forge une culture très personnelle qui a pour toile de fond la civilisation américaine découverte d'abord à travers le cinéma et le jazz, puis à travers la littérature. Marié à vingt-et-un ans, Boris Vian obtient peu après son diplôme d'ingénieur de l'Ecole Centrale des Arts et Manufactures de Paris. Mais à l'ennui des études et à la routine du métier, il préfère le rituel des surprise-parties et la musique de jazz qu'il pratique comme trompettiste. De plus, il entreprend de faire œuvre d'écrivain, «histoire d'amuser les copains». Il écrit dès 1942 son premier roman (demeuré longtemps inédit) *Trouble dans les Andins*, puis *Vercoquin et le plancton* (publié en 1947), sorte de défense et illustration — sur un fond de folklore estudiantin — de la surprise-partie.

L'année 1946 est particulièrement féconde. En plus d'une pièce de théâtre (*l'Equarrissage pour tous*), Boris Vian achève son chef-d'œuvre *l'Ecume des jours*, rédige un autre long roman, *l'Automne à Pékin*, et décide, à la demande d'un éditeur, de fabriquer à la hâte un pastiche de roman américain qu'il signe du pseudonyme de Vernon Sullivan et intitule *J'irai cracher sur vos tombes*. Publié à la fin de l'année 1946, le livre suscite à la fois le succés et le scandale. Les hardiesses érotiques de l'ouvrage et les doutes quant à l'existence de Vernon Sullivan (dont l'éditeur révélera finalement qu'il n'est autre que Boris Vian, son prétendu traducteur) valent désormais à l'auteur un durable cortège d'intolérance et de mépris. Trois autres livres de Vernon Sullivan paraitront néanmoins (*Les Morts ont tous la même peau*, 1947, *Et on tuera tous les affreux*, 1948; *Elles se rendent pas compte*, 1948), qui témoignent du goût de Vian pour les actions bien charpentées du roman policier américain.

Ces ouvrages faciles où l'érotisation est systématique auront le seul tort d'éclipser la sortie en 1947 de *l'Ecume des jours* que Raymond Queneau salue cependant comme «le plus poignant des romans d'amour contemporains». Dans cette œuvre où les fantasmes de dégradation et de maladie président au ballet feutré de la mort angoissante, la cruauté et la tendresse s'entrelacent pour créer une poètique atmosphère de tragédie douce-amère. Dans un Avant-Propos, Boris Vian clame très clairement l'individualisme («les masses ont tort et les individus toujours raison») qui caractérise son œuvre et qui est perceptible dans le recueil de nouvelles *Les Fourmis* (1949) ou dans les romans *l'Herbe rouge* (1950) et *l'Arrache-cœur* (1953). Mais ce qui caractérise davantage encore la création de Boris Vian, c'est l'inlassable fantaisie avec laquelle l'auteur déforme la langue française, manque de respect aux idiotismes et aux proverbes, recourt à l'argot, altère les noms propres (rebaptisant Jean-Sol Partre et la comtesse de Bovouard le célèbre couple existentialiste). Astuces, coq-à-l'âne, néologismes, calembours et contrepéteries ponctuent l'écriture des romans ou les variations spatio-temporelles sont incessantes et où les personnages sont toujours guettés par la mort violente.

Dans ses poèmes, recueillis en 1962 sous le titre significatif *Je voudrais pas crever*, Boris Vian considère avec une insolence désespérée la mort, qui l'emportera prématurément en 1959. Mais, avant de disparaitre, l'auteur aura rejoint en 1952 le Collège de Pataphysique auquel son goût de la provocation et du canular — qu'exprime l'énorme farce *Le goûter des généraux* — le destinait tout particulièrement. Il aura également traduit de nombreux romans policiers ou fantastiques, écrit une multitude de chansons et collaboré durablement à la revue *Jazz Hot*.

Si un vaste courant de sympathie fait escorte à l'œuvre depuis la mort de son auteur, il est essentiellement le fait des jeunes générations, qui, sous la gentille — mais non moint subversive — insolence à l'égard du langage, aiment à découvrir une généreuse saveur de liberté.

ANDRÉ PIEYRE DE MANDIARGES

ou le goût de l'insolite

D'une écriture précise et précieuse, André Pieyre de Mandiargues se plait à explorer les voies «du bizarre, du fantastique, de la violence, pour ne pas dire de la licence et de la brutalité, du panique et du funèbre, du cruel, du convulsif et de l'incontrôlé». Son œuvre privilégie l'insolite qui réside au cœur du quotidien.

Né en 1909 à Paris, Pieyre de Mandiargues fait des études d'archéologie, puis se sent poussé à la poésie par la lecture d'Agrippa d'Aubigné, des poètes élisabéthains, des romantiques allemands, ainsi que des surréalistes. Ses premières œuvres poètiques, telles que «*l'Age de craie* (1935) et *Dans les années sordides* (1943), aiment à enchevêtrer les fils du rêve et de la réalité. Quant à ses premiers récits — *Le musée noir* (1946) et *Soleil des loups* (1951), ils allient le grotesque et le tragique pour créer, dans la lignée d'Edgar Poe et de Villiers de l'Isle-Adam, un climat fantastique qui prend des teintes plus feutrées dans *Marbre* (1953) et *Le lis de mer* (1956) où s'exprime le goût de l'auteur pour les rites de l'initiation amoureuse. En accédant à la dimension romanesque avec *La Motocyclette* (1963) et *La Marge* (Prix Goncourt 1967), l'œuvre fait voisiner l'amour physique avec la mort sanglante. Pieyre de Mandiargues place toujours ses personnages — de préférence des jeunes filles ou de beaux êtres diaphanes — dans une sorte de théâtre de la mort où les forces démoniaques sont soulevées par des égarements dans le domaine érotique.

Cet héritier hautain du surréalisme, qui rejoint le mouvement en 1947 et en signe dès lors les déclarations les plus importantes, à une prédilection pour l'Italie standhalienne à laquelle il consacre en 1965 un essai, *Beylamour*. Grand voyageur ayant sillonné l'Europe, l'Orient méditerranéen puis connu le Mexique, Pieyre de Mandiargues reste avant tout un esthète qui, tout en développant les superbes rêveries de sa création personnelle, cherche le refuge complice des «belvédères» qui permettent de percevoir la beauté sous ses formes les plus incongrues et secrètes. C'est ainsi que l'auteur s'attache à cerains lieux comme Bomarzo et ses «monstres», de même qu'à un univers pictural qui, de Jérôme Bosch à Bona de Mandiargues, son épouse à qui il adresse en 1971 l'affectueux hommage intitulé *Bona l'amour la peinture*), passe par Paul Klee, Max Ernst et Jean Dubuffet, ses complices sur les chemins baroques de la surréalité.

PRINCIPAUX OUVRAGES:

Récits: *Le Musée noir*, Laffont, 1946.
Soleil des loups, Laffont, 1951.
Marbre, Laffont, 1953.
Le lis de mer, Laffont, 1956.
Feu de braise, Grasset, 1959.
Porte dévergondée, Gallimard 1965.
Mascarets, Gallimard, 1971.

Romans: *La motocyclette*, Gallimard, 1963.
La Marge, Gallimard, 1967.

Imprimé Sur Les Presses Du Journal «HARATCH»-83, Rue D'Hauteville-75010 Paris Commission Paritaire: N° 55935

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՓԵՏՐՈՒԱՐ
3
MARDI
3 FÉVRIER
1981

LE NUMERO 2 F.

ՀԱՅԱՐԱՏ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE OCCIDENTALE
83, RUE D'HAUTEVILLE, 75010 PARIS
Directrice : ARPIK MISSAKIAN

Tél. : 770-86-60 — C.C.P. Paris 15069-82 E
Fondé en 1925 — 51027317 A R.C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 300 Ֆ. - Վեցամսեայ : 160 Ֆ.
Արտասահման : Տար. 350 Ֆ. - Հատը : 2 Ֆ.

56րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 14.834

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

56e ANNÉE — No 14.834

ԱՀԱԲԵԿՉՈՒԹԻՒՆ

ՄԻԼԱՆՈՅԻ ԵՂԵՌՆԱՓՈՐՁԻՆ ԵՏՔ

ԻՏԱԼԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Յունուար 28–էն ետք, Յունուար 29–ին ալ, իլ ճիոռնալէ, *Միլանոյի օրաթերթը* կրկին կ'անդրադառնար հայկ. ահաբեկ – չութեան:

×

Դժուար է գտնել հայ ահաբեկիչներու օգտագործած կայանը խորագրին տակ, ԹԵրթին աշխատակիցը կը գրէ Թէ եղեռնափրձէն 24 ժամ յետոյ, փնտռտուքներ կ'ըլլան ճշդելու համար վայրը ուրկէ մեկնած են ահաբեկումները: Ինչպէս նըման այլ պարագաներու (օրինակ՝ եղեռնափորձերը Հայկ. 5–ին Թրքիշ էդլայնգի եւ Մոնտատոռիի դէմ), ոստիկանութիւնը իր ուշադրութիւնը կը դարձնէ հայ գաղութին վրայ, որ տարիներէ ի վեր կ'ապրի եւ կ'աշխատի քաղաքին մէջ: Այն տըպաւորութիւնը կայ սակայն, որ կը խարխափեն մութին մէջ, նաեւ անոր համար որ տեղեկութիւններ կը պակսին այս փոքր գաղութին մասին, որ հանդիպման կէտ մըն ալ չունի բացի՝ Չենթրօ տի ինոֆիւմանթացիոնէ տէլլա Ֆոլթուռա առմենա–էն, ուր հազուադէպօրէն պիրար կը գտնեն: Միլանոյի Հայերը, անցեալին ալ, հրապարակաւ դատապարտած են ահաբեկչական արարքները: Ոմանք կը խորհին նոյնիսկ Թէ ահաբեկումներու հեղինակները կ'ուզեն վարկաբեկել իրենց գաղութը:

Ռումբերու պատճառած վնասները 100 միլիոն (լիռ) կը նկատուին, ըստ առաջին զնահատումի մը:

Թերթը կը յայտնէ Թէ Սիւիսէռի կը բաւենակը, վիա վիթթօռո Փիզանի ամէն մեծ վնասներ կրած է, 5 ցուցափեղկերէն միայն մէկը եղածին պէս կեցած է, որովհետեւ հակառումբ ապակեփեղկ ունէր: Պայթումը այնքան զօրաւոր եղած է, որ վնասուած են 3 կառքեր, մօտերը կեցած: 5 անցորդներ ալ Թեթեւօրէն վիրաւորուած են եւ բժշկական խնամք ստացած են Ֆաթէբենէֆրաթելլի բայց նոյն պիչերը տուն վերադարձած են: Օդանաւային պիծերու դրան սենեակը փակ մնացած է ամբողջ օրը, Յունուար 28ին եւ միայն Յունուար 29ին կրցած էր մաս մը բանալ ժողովուրդին: Ընդհակառակն, Փիացցա Գաւուռ, գործունէութիւնը բնաւ չէ դադրած:

Այս լրատուութենէն զատ եւ ճիշդ կողքին, իլ ճիոռնալէ հրատարակած է Զիւրիխէն Թղթակցութիւն մը Տառիս տ'Ալոյի ատորագրութեան ներքեւ: Հոն, Թղթակիցը կը բացատրէ այն պատճառները, որոնք «Թշնամութիւն» ստեղծած են Զուիցերիոյ եւ Հայկ. Գազանի Բանակին միջեւ: Կը յիշէ Ալէքի եւ Սիւզիի ձերբակալութիւնը: Կ'ըսէ Թէ «ՀԳԲ–ը կ'ամբաստանէ Զուիցերիան, որ հարկ եղածին չափ չէ պայքարեր 1886–ի (?) Լարդերոն առեն»...:

Ներկայիս, կ'ըսէ յօդուածագիրը 3000 Հայեր կ'ապրին Զուիցերիա ու կը յիշէ Թէ ՀԳԲ.ի երկրորդ ամբաստանութիւնը, շատ աւելի տակաւ է, քանի կը վերաբերի Սիւզիի եւ Ալէքի բանտարկութեան պայմաններուն: Կ'ըսէ Թէ ՀԳԲ.ը սպառնացած էր և կարմիր Խաչի պատուիրակութիւն մը զացած այցելած էր բանտարկեալներուն եւ անոր տեղեկագիրը հրապարակուած էր Երեքշաբթի օր մամուլի ասուլիսի մը ընթացքին (այդ տեղեկագրին մանրամասնութիւնները տես՝ «Ծառայ», Յունուար 30, Ա. էջ): Վերջապէս, Տառիս տ'Ալօ կը վերջացնէ իր Թղթակցութիւնը Սիւզիի դատապարտութեան լուրով, աւելցնելով Թէ Ալէքի դատավարութիւնը տեղի կ'ունենայ Փետր. 9–ին:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՆՈՐՊԷՐ ՍԵԿԱՌ, Թղթատարի նախկին նախարար եւ պատուիրակ – նախարար, ներկայիս, նախարարապետին մօտ, մեռաւ 58 տարեկանին, Թոքերու խլիր – դէ: Տարիներէ ի վեր, հիացում պատճառով քաղուքեամբ մը, «սառնճնած էր», ըստ արդիական բառամթերքին, իր հիւանդութիւնը եւ կոչ ըրած մեծ ծխողներուն, որ զգոյշ ըլլան եւ պզտիկ հաճոյքներու չզոհեն իրենց առողջութիւնն ու կեանքը: Ինք եղած էր մեծ ծխող մը (40՝ օրական) եւ երբ հիւանդութիւնը եկած էր, արդէն ուշ էր: Թէ իրրեւ մարդ եւ Թէ իրրեւ քաղաքական դէմք, յարգանքի առարկայ է նաեւ իր հակառակորդներուն կողմէ: Յուղարկաւորութիւնը կը կատարուի Հինգշաբթի, ի ներկայութեան Հանրապետութեան նախագահին:

ՊԱՐՍԻԿՆԵՐԸ գժգոհ են Ֆրանսայէն, որ Միրաժ օդանաւներ յանձնեց Իրաքի, առջի օր: 4 կամ 6 օդանաւ է 60–ի ապրանքի վրայ: Ֆրանսայի Արտաքին նախարարութիւնը կը ճշդէ Թէ այս յանձնումը կը վերաբերի 1977–ի համաձայնագրերու, բայց եւ այնպէս կը հակասէ Ֆրանսայի յանձնառութեան պատերազմի մէջ գտնուող երկրի մը զէնք չտալու: Փարիզի պարսկական դեսպանատունը յայտարարութեամբ մը ըսաւ Թէ Ֆրանսա կ'ուզէ կործանել իրանեան յեղափոխութիւնը եւ Թեհրան երբեք պիտի չմոռնայ Ֆրանսայի ըրածը:

ԼԻՈՆԷԼ ԺՈՍՓԷՆ ընկերվարական կուսակցութեան նոր առաջին քարտուղարը, ի պատասխան համայնավարներուն առաջարկներուն (համայնավար նախարար եթէ Միթերան նախագահ ընտրուի) ըսաւ, Եւրոպա Մէկի «մամուլի ակումբէն» որ հարցը այժմէական չէ եւ Թէ համայնավար կուսակցութեան պահանջը «խոտոր կը համեմատի անոր ղեկավարութեան ներկայ քաղաքականութեան հետ»: Մնաց որ, Միթերան, եթէ ընտրուի պիտի լուծէ Ազգ. Ժողովը եւ ռեֆորմանական նոր ընտրութիւններու ձեռնարկէ ինչ որ կրնայ նոր դիմագիծ մը տալ Ժողովին:

ՍԵԶԱՌները, որոնք կը համապատասխանեն ամերիկեան Օսքառներուն, բայց Ֆրանսական չարժանկարին համար, բաշխուեցան, Շաբաթ իրիկուն Փարիզի Փալէ Տէ Քոնկրէին մէջ: Տրուած մրցանակները սակայն բաւական ազմուկի եւ քննադատութեան դուռ բացին քանի 12 մրցանակի վրայ՝ տասը արուեցան Ֆը բանսուա Թրիւֆոյի «Վերջին Մեթրօ»ին: Որքան ալ յաջող ըլլայ Փիլմը, արդար չի նկատուիր այսքան անտեսում ուրիշ ալ յաջող ժապաւէններու: Ուրեմն Վերջին Մեթրօն ստացաւ լաւագոյն փիլմի, լաւագոյն բեմադրիչի, լաւագոյն սենարիոյի, լաւագոյն դերասանի, լաւագոյն դերասանուհիի, լաւագոյն երաժշտութեան, լաւագոյն նկարներու, լաւագոյն բեմազարդարման, լաւագոյն ձայնի, լաւագոյն մոնթաժի 10 մրցանակները: Դերասաններն էին՝ Քաթրին Տընէօվ եւ Ժեռառ Տըփարտիէօ: Երկու «մնացած» մրցանակները կը վերաբերէին լաւագոյն երկրորդ դերերուն, զորս ստացան Ժաք Տուֆիլօ եւ Նաթալի Պայ: Ամէնէն խիստ գրութիւններէն մէկը ստորագրած էր, երկուշաբթի առաւօ, Տոմինիք Ժամէ, Քոթիտիէն տը Փարիի մէջ, «խեղճ Ֆը բանական սինեմա» խորագրին տակ:

ՊՈԼՈՑ մէջ 500 փրոֆէսէօր, երկրորդական ուսման, հարցապնդուած են 2 օրուան մէջ, որովհետեւ քաջալերած են աշակերտները կարդալու պարսիկ բանաստեղծ Սամէտ Պահրենճիի հէքեաԹները, Թէեւ այդ բոլոր պերքերը գըրուած են Շահին օրով բայց հոն, հեղինակը ցոյցուն կերպով կը հակադնէ իր ձախ հակումները: Խուզարկութիւններ ալ կատարուած են ինը գրատուներու մէջ: Մեւս կողմէ, ոստիկանութիւնը ձերբակալած է 49 կասկածելիներ Աստանայի մէջ, ձախ Թէ աջ, որոնք պատասխանատու կը նկատուին 6 դասատուներու սպանութեան, Սեպտ. 18–ին: Պոլսոյ մէջ ձերբակալուած է նաեւ լրագրող – գրաքննադատ Հալիփ Սանտալճը, 57 տարեկան, որ կ'աշխատակցէր ծայրայեղ – ձախ Տէմոքրաթ Թերթին:

ԵՐԵՒԱՆ ⇄ ՓԱՐԻԶ ՀԵԹԱՑՈՂ

ԵՐԵՒԱՆ, Արմէնփրէս, Յունուար 20 – 21

ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԱՆՁԱՒՆԵՐԸ

Եղեգնաձոր շրջանին մէջ յայտնաբերուած լայնատարած անձաւները գետնա–փոր թանգարաններ կը դառնան՝ սահմանուած զբօսաշրջիկներուն: Նախապատրաստական աշխատանքներ կը կատարուին լուսաւորութեան եւ օդի փոխոխութեան ուղղութեամբ: Արձաններուն մօտ փոխադրակառքերու կանգառներ կը հաստատուին:

× Արթիկ շրջանի Հառիճ գիւղին մէջ նադարեան Հառիճավանքը, պատմական յուշարձաններու շարք մը, ճարտարապետական թանգարանի կը վերածուի:

× Գօշավանք, Իջեւան շրջան, հիմնուած է 1188–ին, Իվանէ Զաքարեան իշխանին ալաքցութեամբ եւ առակագիր Մխիթար Գօշի կանքերով: Եղած է հոգեւոր, մշակութային եւ կրթական կեդրոն: Հոն կը բացուի թանգարան մը՝ նուիրուած Հայ գրչութեան պատմութեան եւ Մխիթար Գօշի կեանքին ու գործունէութեան:

× Ինքնատիպ թանգարան մը կը ստեղծուի Մուղնի գիւղին մէջ, Աշտարակ: Զանազան պատճառներով տեղափոխուած յուշարձաններ հոն կը մէկտեղուին:

× Նորոգութեղու վրայ են Տաթեւի համալիրին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին եւ Առինջ գիւղին խաչքարերը:

× Վերանորոգուեցաւ Հայրավանքը եւ իր նախկին տեսքը ստացաւ: Կը գտնուի Այրիվան գիւղին հիւսիս – արեւելքը, Սեւանի ափին, ժայռոտ – հրուանդանի մը վրայ, կամօ շրջան: Կառուցուած է Թ – ԺԱ. դարերուն:

×

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ՝ ՕՓԵՐԱՆ

× Հիմնական նորոգութեանց ենթարկուելէ ետք, Անոյշի ներկայացումով բացումը կատարուած է Երեւանի Օփերային: Անդրանիկ ներկայացումին հրաւիրուած են Օփերան նորոգած ճարտարապետները, ճարտարապէտները, շինարարները:

– Հոյակապ այս չէնքը, յայտարարած է Օփերային գլխաւոր բեմադրիչը Տիգրան Լեւոնեան, հմայք եւ շուք ունի: Կրնայ դոհացում տալ ամէնէն խստապահանջ հանդիսատեսին ալ: Բեմը նոր տեսք ըստացած է, համակարգը մեքենայացուած է արդիական սարքերով: Ներկայացումներուն համար լայն կարելիութիւններ ստեղծուած են:

Ներկայ խաղաշրջանի ներկայացումներուն չարքին են Արմէն Տիգրանեանի Դաւիթ Բէկ օփերան եւ Գրիգոր Եղիազարեանի Արա Գեղեցիկ բեմադարը:

×

ԳԻՐՔ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Երեւանի մէջ լոյս տեսած է «Ազատեւի հովտի պատմութեան եւ կուլտուրայի յուշարձանները» խորագրուած հատորը՝ հեղինակութեամբ Իսկանդար Էլչարեանի, փոխ – նախագահը Պատմական յուշարձաններու պահպանութեան հայկական ընկերակցութեան:

Ազատեւի մէջ պահպանուած են քարէ դարեան եւ յաջորդող ժամանակաշրջաններու պատմական, մշակութային եւ ճարտարապետական բազմաթիւ յուշարձաններ՝ բերդեր, ամրոցներ, վանքեր եւ այլ կառոյցներ:

Շրջանը մշակութային կեանքի կարեւոր վայր հանդիսացած է: Մինչեդա–րուն հոն աշխատած են Մխիթար Գօշ, Յովհաննէս Տարօնացի եւ ուրիշներ: Հոն ծաղկած է գրչութեան արուեստը, ինչպէս նաեւ ժողովրդական արհեստները:

Գիրքին մէջ նկարագրուած եւ բնութագրուած են չորս տասնեակ մը հին շինութիւններ, բոլորն ալ կարեւոր իրենց պատմական արժէքով: Առանձին գլուխներ յատկացուած են Գօշավանքին, Հաղարծինին, Մակարավանքին եւայլն: Կան լուսանկարներ, քարտէս – ուղեցոյց:

×

ԱՐՈՒԵՍՏԱՆՈՑԸ՝ ԹԱՆԳԱՐԱՆ

Նկարիչ Մինաս Աւետիսեանի արուեստանոցը, Երեւանի կեդրոնական չէնքերուն մէջ, կառավարութեան որոշումով թանգարանի վերածուած է:

Մինաս Աւետիսեանի վրձինին պատկանած են հարիւրի մօտ գեղանկարներ, որոնք տեղ գրաւած են ոչ միայն նոր, այլեւ մայրաքաղաքին այլ թանգարաններուն եւ անհատական հաւաքածոներուն մէջ: Իրրեւ արժէքաւոր նիւթեր մէկտեղուած են ողբացեալ արուեստագէտին նամակները, արուեստին մասին արտայայտած միտքերը, ժամանակակիցներու յուշերը:

Նախատեսուած է այս տարի մեծ ցուցահանդէս մը կազմակերպել Երեւանի մէջ, ապա Մոսկուա, Լենինգրատ եւ Խորհ. Միութեան այլ քաղաքները, ցոյց տալով արուեստագէտին ստեղծագործական ամբողջական աշխարհը:

ՓՈՒԹՊՈԼ

ՄԱՐՍԷՅԼ. –

Հ. Մ. Լ. Մ. – Արծիւը 0–ի դէմ 4 կէտով, Սենիֆրաքայի իր դաշտին վրայ յաղթեց Իւ – էս Միշլիսի: Կիսախաղը արդէն կը վերջանար այս արդիւնքով՝ 4 – 0:

ՄԱՀՄԵԴԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԶԱՐԹՆՈՒՄ

Այս խորագիրը կարելի է տարբեր ձեւով ալ արձանագրել: Օրինակ՝ մահմե–տականներու ահ, մահմեդականութեան ծաւալում եւայլն: Հիմնականը, սակայն, կը մնայ իրողութեան մը սահմանումը, այն թէ՝ ժամանակէ մը ի վեր այդ աշ–խարհը ինքնապիտակցութեան արամագ–րութեամբ կը շարժի, իր ներքին էու–թեան փնտռտուքը կը կատարէ եւ, մա–նաւանդ կը տարածուի մերժելով օտա–րամուտ երեւոյթները: Ինչ տը մաբէ, – մօտաւոր բացատրութեամբ՝ ծովայոր – ձանք, – ինչպէս կը բնորոշէ շարժումը Մոնրէալի լ'Աէքթուալիթէ հանդէսին Թղթակցուհին Քրիսթիան Պերթիոմ, երեք ամիս ըղձագայելէետք մահմեդա–կան աշխարհին զանազան երկիրները:

Պարսկուհի մը դիտել կուտայ Թղթակ–ցուհին, թէ ճիշդ կը կրէ եւ նաեւ չա–տը մը կ'անցընէ իր դէմքին վրայ: Ըը–նորհակալութիւն ձեր տաքսիին համար, բայց չատրով կը տարբերիմ ձեզմէ: Այլ խօսքով՝ ընորհակալութիւն արեւմտեան կենցաղին, քաղաքակրթութեան մուտքին համար, բայց եւ այնպէս ես տարբեր եմ ձեր աշխարհէն: Ահա մահմեդականու–թիւն հիմնակէտը, մտածումը:

Պահ մը երեւակայեցէք, թէ կիսով կամ ամբողջութեամբ քօղարկուած կիներ կը դիտեն ամերիկեան – եւրոպական ժա–պաւէնները: Հոն կիները ազատ կեանք կը վարեն, այրերուն նման, արդ, մերին – նե՞րն եւս պէտք է ձերիններուն նմանին, կը հարցնէ Փրոֆ. Անուար Կամալ, Կա–հիրէի Համալսարանի դասախօսներէն մէկը: Պէտք է զարմանա՞լ, երբ կը մեր–ժենք ընդունիլ ապրելակերպի որոշ ձեւ մը, հոգեբանութեան կամ մտայնութեան որոշ ըմբռնում մը:

Մէկ բան յստակ կը դառնայ: Արեւ–մուտք այլեւս լուսադյն եւ միակ օրի–նակը չի հանդիսանար մահմեդական աշ–խարհին բազմամիլիոն մարդոց, առնը–ւազն ասոնց մէկ կարեւոր զանգուածին համար:

750 միլիոն են, Քրիստոնեաները՝ 950: Մ'իաստուածութիւն դաւանող վերջին կրօնքը՝ մահմեդականութիւնը, որ 1·400 տարուան անցեալ ունի, միակն է, որ դեռ կը ծաւալի, կը տարածուի: Աւոր հետեւորդներուն ծնունդին ահը ամէնէն բարձրն է աշխարհի մէջ՝ 2,5 տոկոս Ին–տոնեզիա եւ Եգիպտոս, 3,5 տոկոս Ի–րաք, Իրան եւ Փաքիստան, 7 տոկոս ա–րաբական ամիրայութիւնները: 45 միլիոն կը ներկայացնեն Խորհ. Միութեան մէջ, 2·000–ին կրկնապատկուած պիտի ըլ–լան:

Այդ աշխարհը կ'ընդգրկէ 70 երկիրներ եւ կը տարածուի Ափրիկէի կէսին վրայ, Մերձ. Արեւելք, արաբ – իրանեան ծո–ցը, Ասիա, Ինտոնեզիա, Խորհ. Միու–թեան մէկ մասը եւ հողակտոր մը Չի–նաստանի մէջ: Նաեւ տեղեր՝ Եւրոպա: «Մահմեդականները կը տարածուին, հա–կառակ Հրեաներու նենգութիւններուն, Քրիստոնեաներու ատելութեան եւ հա–մայնավար փոթորիկին», կը գրէ Ալ Տաուրա շաբաթաթերթը, Եգիպտոս:

Քանի մը տուեալներ կուտայ Թղթակ–ցուհին: Այսպէս, ըստ Ափրիկեցիներէն մէկը մահմեդական էր 25 տարի առաջ: Երկու տարիէն երկուքէն մէկը մահմե–տական պիտի նկատուի: Անգլիա, ներ–կայիս, 1,5 միլիոն մահմեդական ունի իր սահմաններէն ներս: Հասարակաց Շուկայի օտար աշխատաւորներուն 40 տոկոսը նոյնպէս մահմեդական է:

*ՄԱՌՇԷ որոչեց չգլխաւորել Մոսկուա գացող (փետր. 23) համայնավար պատուիրակութիւնը, որ պիտի մասնակցի կուսակցական 26-րդ համագումարին: Կը նախընտրէ չբացակայիլ ընտրապայքարի ժամանակ: Միւս կողմէ, Մոսկուա կ'ամբաստանէ Պէռլինկուէռը որ զօրավիդ կը կենայ «հակընկերվարական ուժերուն»: Արդարեւ, Հռոմի Փանորամա շաբաթաթերթը հրատարակած է այն նամակը, զոր Դեկտեմբերի կիսուն Կրեմլին ղրկած է Իտալիոյ համայնավար կուսակցութեան, մեղադրելով զայն, որ զօրավիդ կեցած է «այն ուժերուն, որոնք Լեհաստանի մէջ, իսկական արշաւի մը ձեռնարկած են ընկերվարութեան դէմ»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊՕՂՈՍ Բ. նոր ճամբորդութեան մը ձեռնարկեց: Պապը, այս անգամ, Ասիա կ'երթայ: Փաքիստան կարճ էջէ մը կ'անցնի Փիլիպպեան կղզիները, որ Ասիոյ միակ քրիստոնեայ բերդն է (85% կաթողիկէ): Այս իննը-րորդ ճամբորդութիւնը 12 օր պիտի տեւէ: Փետր. 23-ին, Պապը Թոքիօ կը հասնի (400 հազար ճափոն կաթողիկէ կայ միայն.): Ճառ մը պիտի խօսի Հիրոշիմա:

ՀԱՐԱՒԱԾԻՆ ԵՄԻՆԻ Փարիզի (Իէնա) դեսպանատունը եղեռնափորձի մը առարկայ եղաւ կիրակիէն երկուշաբթի լուսնալուիք գիշերը: Նիւթական վնասները չատ մեծ են: Երկուշաբթի առտու դեռ մէկը տէր չէր եղած ահաբեկչական ապարքին, միայն տեղւոյն վրայ թուղթ մը գտնուած էր՝ «յիշեցէք Կոպերնիկ» (ակնարկութիւն ռուս Կոպերնիկի սի-նակոկին դէմ կատարուած եղեռնափորձին):

ՆԱՓՈԼիի չրջանը թեթեւ երկրաշարժ մը եղաւ, կրկին, կիրակի օր, մեծ խուճապ ստեղծելով:

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՄՈՎ

ՄԱՏՐԻՏի բանտի մը մէջ, 30 տարեկան պասքի մը՝ Խոսէ Առկի Իզակուիռէի մահը, 9 օրուան հարցաքննութեան եւ չարչարանքի հետեւանքով մեծ յուզում ըստեղծած է երկրին մէջ եւ էքա-ն, որու դեկավարներէն մէկը կը նկատուի ենթական, առիթը կ'ունենայ կրկին վերագըտնելու ազդեցութիւն մը, զոր կորսնցուցած էր ութ օր առաջ առեւանգուած ճարտարապետին սպանութեամբ: Շաբաթ մը առաջ ընդհանուր գործադուլը էքա-ի դէմ էր, այս անգամ ճիշդ հակառակն է եւ այս մահը, անգամ մը եւս խնդրոյ առարկայ կ'ընէ խաղաղութեան վերահաստատումը պասք գատաւոն մէջ: Արդարութեան նախարարը քննութիւն բացած է եւ հարցրքննող 5 ոստիկաններ ձերբակալուած են: Խոսէ Իզակուիռէ ձերբակալուած էր Փետր. 4-ին Մատրիտի մէջ, հրացանաձգութեան մը ընթացքին: Ամբողջ մարմինը արիւնուցերով լեցուն է, ոտքերն ու ձեռքերը՝ այրուցքներով, աչքերն ու թոքերը արիւնահաթախտ: Խմնրսթի Ինթէրնէյշընըլ իր տեղեկագրին մէջ արդէն յայտնած էր թէ չարչարանքի ենթակայ են Սպանիոյ մէջ քաղաքական բանտարկեալները: Ամէն պարագայի մէջ, Սպանիա այս մեռելով փառաւոր նուէր մը ըրաւ Պասքերուն եւ մէկ անգամէն ջնջեց թագաւորին քալայցելութեան ազդեցութիւնը:

ՏՐՊԼԻՆԻ մէջ, Ուրբաթէն Շաբաթ լուսնալուիք գիշերը ահաւոր հրդեհ մը ծագած է պարասրահի մը մէջ, ուր խռնուած էին երիտասարդներ: 15 վայրկեանէն հրոյ ճարակ դարձած էր ամբողջ տիսմոթէքը, ուր 48 մեռեալ եւ 130 վիրաւոր կար, մէկ մասը՝ ծանր վիճակի մէջ: Անկարելի ալ չէ որ արկածի հետեւանք չըլլայ այլ՝ ոճրային: Ազգային սուգ հռչակուեցաւ Իրլանտայի մէջ: Մայր մը յանկարծամահ եղած է, որուն սուր տաղնապի մը հետեւանքով, իմանալով որ պարասրահը գտնուող իր եղբէք գաւակները, զորս մեռած կը կարծէր, ողջ են:

ՊՈԼՍՈՑ նախկին քաղաքապետը Ահմէթ Իսվան, սոցիալ – դեմոկրատ երեք ամիս է Սելիմիյէի զինուորական բանտը կը գտնուի: Իր տունէն «առեւանգուած է» Նոյ. 13-ին: 5 օր ալ ուրիշ չէնք մը տարած են, ուր այլ բանտարկեալներ չարչարանքի տակ էին: Դահիճները կ'ուզէին որ իրեն ծայրայեղ մատնէ քա-

նի մը սոցիալ – դեմոկրատներ բայց նախկին քաղաքապետը դէմ դրած է: Ներկայիս միչտ բանտն է առանց որոչ ամբաստանութեան մը իրեն դէմ:

ՄԱՌՇԷ որոչեց չգլխաւորել Մոսկուա գացող (փետր. 23) համայնավար պատուիրակութիւնը, որ պիտի մասնակցի կուսակցական 26-րդ համագումարին: Կը նախընտրէ չբացակայիլ ընտրապայքարի ժամանակ: Միւս կողմէ, Մոսկուա կ'ամբաստանէ Պէռլինկուէռը որ զօրավիդ կը կենայ «հակընկերվարական ուժերուն»: Արդարեւ, Հռոմի Փանորամա շաբաթաթերթը հրատարակած է այն նամակը, զոր Դեկտեմբերի կիսուն Կրեմլին ղրկած է Իտալիոյ համայնավար կուսակցութեան, մեղադրելով զայն, որ զօրավիդ կեցած է «այն ուժերուն, որոնք Լեհաստանի մէջ, իսկական արշաւի մը ձեռնարկած են ընկերվարութեան դէմ»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊՕՂՈՍ Բ. նոր ճամբորդութեան մը ձեռնարկեց: Պապը, այս անգամ, Ասիա կ'երթայ: Փաքիստան կարճ էջէ մը կ'անցնի Փիլիպպեան կղզիները, որ Ասիոյ միակ քրիստոնեայ բերդն է (85% կաթողիկէ): Այս իննը-րորդ ճամբորդութիւնը 12 օր պիտի տեւէ: Փետր. 23-ին, Պապը Թոքիօ կը հասնի (400 հազար ճափոն կաթողիկէ կայ միայն.): Ճառ մը պիտի խօսի Հիրոշիմա:

ՀԱՐԱՒԱԾԻՆ ԵՄԻՆԻ Փարիզի (Իէնա) դեսպանատունը եղեռնափորձի մը առարկայ եղաւ կիրակիէն երկուշաբթի լուսնալուիք գիշերը: Նիւթական վնասները չատ մեծ են: Երկուշաբթի առտու դեռ մէկը տէր չէր եղած ահաբեկչական ապարքին, միայն տեղւոյն վրայ թուղթ մը գտնուած էր՝ «յիշեցէք Կոպերնիկ» (ակնարկութիւն ռուս Կոպերնիկի սի-նակոկին դէմ կատարուած եղեռնափորձին):

ՆԱՓՈԼիի չրջանը թեթեւ երկրաշարժ մը եղաւ, կրկին, կիրակի օր, մեծ խուճապ ստեղծելով:

ՓՈՒԹՊՈԼ

—o—

ՄԱՐՍԷՅԼ. – Հ. Մ. Ը. Մ. – Արծիւ կիրակի փետր. 15-ին, իր դաշտին վրայ 0-ի դէմ մէկ կէտով յաղթեց Սալոնի, Փրովանսի բաժակի մրցումներու չարքին եւ որակուեցաւ 8-րդ աւարտական – ներուն համար:

×

Լը Մաթէն – Թրիպիւնը, իր կարգին առաջին էջը կը հրատարակէ դատավարութենէն տեսարան մը, ուր կը տեսնուին Արա, հիւանդապահուհին եւ փաստափանը եւ որու տակ կ'արձագանգէ վճիռին: Երրորդ էջին վրայ, կը հրատարակէ երկու ուրիշ նկարներ եւ գրեթէ նոյն ձեւով կատայ դատավարութեան նկարագրութիւնը: Կը յիշէ փաստափանին պաշտպանողականը, որ յուզումով պիտի յայտնէ մէկ ճշմարտութիւն՝ հայ ժողովուրդին չարչարանքը: Այդ պատմութիւնն է որ մեղմացուցիչ դէպք յայտնացուց է Արայի՝ բանբերը սպանուած ժողովուրդի մը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ 1980-ԻՆ

(Ի. եւ վերջ)

Ի. ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Վիճակագրութեան մէջ չէ մատնանշուած պիւզանտեասութեան համախառն, այսինքն՝ բոլոր տեսակի արտադրու-թիւններուն ամէն տոկոսը, որ ըստ ծը-րագիրին պէտք է 4,1 ըլլար: Ցամէնայն դէպս նուազ եղած է նախանցեալ տար-ուան բաղդատմամբ, քանի ոչ միայն չէ իրագործուած ծրագրով նախատեսուած 854 միլիոն ռուբլիի արտադրութիւնը, այլեւ իր արձանագրած 779 միլիոնով պակաս եղած է նախանցեալ տարիէն (813 միլիոն ռուբլի):

Այս կապակցութեամբ հարկ է դիտել տալ, թէ ինչպէս նկատել տուած էինք «Ցառաջ»ի մէջ անցեալ Յուլիսին, դար-նան եղանակը խիստ աննպաստ եղած էր Հայաստանի համար: Տեղատարափ անձ-րեւները, կարկտահար փոթորիկները, ձիւն եւ ցուրտ: Կ. Դեմիրճեան տաքերային ա-դէտներ որակած էր աւելցնելով միաժա-մանակ, թէ սխալ պիտի ըլլար, եթէ միայն բնութեան վերագրուէին անյաջո-ղութիւնները: Ցամէնայն դէպս, ձեռք առնուած միջոցները մեծ ըլլալով հան-դերձ, ինչպէս կ'երեւի վիճակագրութե-նէն, բնութեան ազէտը իր բացասական անդրադարձը ունեցած է անխուսափելի կերպով:

Գիւղատնտեսական արտադրութիւն-ներուն պատկերն է եղած հետեւեալը: Հացահատիկ՝ 237,800 թոն, միայն ցո-րենը՝ 148,400 թոն: Ծխախոտ՝ 17,000 թոն: Շաքարի ճակնդեղ՝ 129,200 թոն: Գետնախնձոր՝ 251,000 թոն: Բանջարեղէ-նը՝ 458,100 թոն: Պտուղ՝ 130,400 թոն: Մսեղէ՝ 205,300 թոն:

Նախանցեալ տարուան բաղդատմամբ միայն գետնախնձորի արտադրութիւնն է, որ 28,500 թոնով աւելի եղած է: Մը-խախոտը մնացած է նոյնը: Բանջարեղէ-նը աննշան նուազումով մօտաւորապէս նոյնը: Մնացեալները՝ հացահատիկ (բա-ցի ցորենէն) շաքարի ճակնդեղ, պտուղ, եւ խաղող յաջորդական կարգով նուազ արտադրութիւններ արձանագրած են 80,300 թոն, 24,700 թոն, 25,700 թոն եւ 38,500 թոն:

1980 Յունուար մէկէն մինչեւ 1981 Յունուար մէկ կոլտնտեսութիւններուն, միջտնտեսային ձեռնարկութիւններուն, սովխոզներուն եւ պետական այլ անտե-սութիւններուն մէջ, ինչպէս նախանցեալ տարի, միայն կովերուն թիւը աւելցած է, իսկ խոզերուն, ոչխարներուն, այծե-րուն թիւը նուազած է:

Մեխին արտադրութիւնը՝ 93,400 թոն, զրեթէ տասը հազար թոն աւելի եղած է նախանցեալ տարիէն, չարունակելով ան-բաւարար մնալ բնակչութեան ընթացիկ պահանջներուն համար: Կ. Դեմիրճեան անցեալ տարի քննադատած էր միեւ ար-տադրութիւնը նուազեցնող չարք մը չըր-ջաններու պատասխանատուները: Հա-կիճ՝ 465 միլիոնէն քիչ մը աւելի, նա-խանցեալ տարիէն առաւել: Կաթ՝ 483,100 թոն, նախանցեալ տարիէն նը-ւազ: Բուրդ՝ 4721 թոն, նոյնպէս նուազ նախանցեալ տարուան բաղդատմամբ:

×

ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ. – Պետական եւ քօօփերաթիվ ձեռնարկութիւններու ու կազմակերպութիւններու, կոլտնտեսու-թիւններու, ինչպէս նաեւ բնակչութեան կողմէ 1980-ին կառուցուած են 16,600 բնակարաններ եւ առանձնատուներ՝ 1·065·000 քառակուսի մեթր բնակելի ընդհանուր մակերեսով: Ասիկա հնարա-ւորութիւն տուած է բարելաւելու 105·000 հոգիի բնակարանի պայմանները: Շին-ուած են 22·600 տեղով նախակրթարան-ներ, 6·500 տեղով մանկապարտէզ – ման-կամատուր, 460 մահճակալով հիւանդա-նոցներ: Ինչպէդ միշտ, շինարարութեան պատկերը գոհացուցիչ չէ: Աշխարհ, բացի մանկապարտէզ – մսուրներէն, ո-րոնց ծրագիրները հինգ հարիւրով աւելի եղած են, բայց նուազ նախանցեալ տա-րիէն, միւս ճիւղերունը թէ՛ ծրագրով նա-խատեսուածէն, թէ՛ նախանցեալ տար-ուան համեմատութեամբ, ետ մնացած են:

×

Գ. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՑԼ ՏՈՒԵԱԼՆԵՐ

1980-ին բանուորներուն եւ պաշտօնեա-ներուն տարեկան միջին թիւը աւելցած է 35·000 եւ ներկայացուցած է 1·185·000: Կոլտնտեսականներունը վեց հազարէն քիչմը աւելիի նուազումով ներկայացու-ցած է 78·700:

Բանուորներուն եւ պաշտօնեաներուն միջին աշխատավարձը հասած է մօտ 163 ռուբլիի: Կոլտնտեսականներունը չէ մատնանշուած: Գրուած է միայն, թէ «աճել է կոլտնտեսականների աշխատան-քի վարձատրութիւնը»:

Բնակչութեան «ոչխալ եկամուտները» անձ գլուխ հաշուով, նախանցեալ տար-ուան նման աւելցած են 3,5 տոկոս:

Անցեալ տարի կազ ստանալու կարե-լիութիւն ունեցած են հօթը հազարէն պակաս բնակարանները, բաղդատմամբ նախանցեալ տարուան: Ներկայացուցած են 20·000 տուն:

Ուսման բոլոր մարզերուն մէջ գոնը-ւած են մօտաւորապէս 1·153·000 հոգի:

Քաղաքներուն եւ գիւղերուն հանրային գրադարաններուն թիւը փոքր յաւելու-մով բարձրացած է 1·350–ի: Գիրքերուն քանակը՝ անցեալի մօտ քսան միլիոնէն առաւել քսան միլիոն:

Հրատարակուած գիրքերուն եւ գըր-քոյկներուն տպաքանակը երեք տարիէ ի վեր մնացած է նոյնը՝ 11 միլիոն:

Շարժանկարի սրահները՝ երեք յաւե-լում, հասնելով 840–ի: Միւս կողմէ, ժապաւէններուն յաճախորդներուն թիւը 29 միլիոնէն իջած է 28 միլիոնի:

Թժիշկներուն թիւը հարիւրի յաւելու-մով բարձրացած է 10·800–ի:

Հայաստանի բնակչութեան թիւը, 198 Յունուար 1–ին, արձանագրած է 3·118·600: Մէկ տարուան մէջ յաւելում 39·600 հոգի:

Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ

ԴՊՐՈՑԻ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐԸ

ԶՄԻՒՌՆԻՈՑ

ՀԱՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ ՄԷՋ

(Թ. ԴԱՐ)

—o—

(Ի. և վերջ)

Ժամանակի արեւմտահայ յառաջադէմ մանկավարժութիւնը իր լուսաւորական ծրագիրը կը սկսէր նախակրթարանի բա-րեկարգումէն: Ազգային լուսաւորութեան ընթացքը այդ ժամանակէն ձեռք կը բե-րէ համակարգուած բնոյթ, դաստիարա-կութիւնն ու կրթութիւնը կը դիտուին իբրեւ դիտութիւն, իսկ նախակրթարա-նի սկզբունքը՝ անոր անկիւնաքարը: Ա-րեւմտահայ մանկավարժներու՝ Մ. Մա-մուրեանի, Ռ. Պէրպէրեանի, Ե. Մու-րատեանի եւ այլոց դասագիրքերը մեծ մասամբ նկատի ունին նախակրթական ուսումը: Մանկավարժները կը ձգտէին նախակրթարանը տարածել նաեւ գիւ-ղը: Անոր հետ կը կապուէր նախակըր-թական ուսման հիմնական եւ միօրինակ ծրագրի հարցը, որ կ'առաջադրուէր 1870-ական թուականներուն: Նախակըր-թարանի ուսման ծրագիրը անոնք կը հա-մապատասխանեցնէին ժողովուրդի ընկե-րային – անտեսական պահանջներուն եւ կը տանէին գործնական հունով: Ազգա-յին լուսաւորութեան բարեփոխումը Մա-մուրեան կը պատկերացնէր նախակըր-թարաններու լայն ցանցի հիմնումով: Ան կը մերժէր «բարձրագոյն» միջնա-կարգ կրթութեան «ուռած ծրագրերը»՝ խճողուած գրաբարի, ճարտասանութեան եւ տրամաբանութեան դասերով: Մա-մուրեան կ'առաջարկէր գիւղացիներու բա-ժանման յատակ կարգ՝ թաղային դըպ-րոցները վերածել պարզ նախակրթա-րաններու, այնուհետեւ ստեղծել երկ-րորդական դպրոցներ:

Միջնակարգ եւ երկրորդական կրթու-թեան զարգացման նախապայմանը նա-խակրթարանի վերակառուցման մէջ կը տեսնէին նաեւ անուանի մանկավարժներ Ե. Տէմիրճիպաշեան եւ Ց. Իփէկճեան: Վերջինս 1870ական թուականներուն վա-րած էր Կ. Պոլսոյ Նուպար – Շահնա-զարեան գիւղոյղ տնօրէնութիւնը, ապա մեկնած Լօզան եւ հետեւած գործնական դասընթացքի: Հոն ուսումնասիրած էր յառաջադէմ մանկավարժական տեսու-թիւնները ու ժողովրդական կրթութեան ամբողջ համակարգը: «Արեւելեան մա-մուլ»ին գրկած իր թղթակցութիւններով ան կը պաշտպանէր արեւմտահայ լու-սաւորական գործը վերակառուցելուն հետամուտ շարժումը: Թերթին մէջ տըպ-ուած իր «Կրթութիւն ի Լօզան եւ ման-կավարժական հրահանգք» յօդուածա-շարքին մէջ ան տեղեկութիւններ կու-տար զուիցերական կրթական ցանցի վե-րաբերեալ եւ կը չեշտէր եւրոպական սկզբունքներու համեմատ նախնական եւ երկրորդական վարժարաններու վերա-կառուցման անհրաժեշտութիւնը: Իփէկ-ճեան կ'առանձնացնէր քնազիտական ա-ռարկաները ու արհեստագիտական ու-սուցումը: Ոչ այնքան վճռականօրէն, ինչպէս Մամուրեան, ան եւս կը հակա-դրուէր կրօնաբարոյական դաստիարա-կութեան: Միայն կրօնքը չէ, նկատել կուտար ան, որ կրնայ բարոյական զար-գացման ազդակ ըլլալ· այդ դերը աւելի կատարելութեամբ կրնան խաղալ բնական ու հանրային դիտութիւնները: Բարոյա-կան դաստիարակութեան մէջ ան կը նը-շէր ընտանիքին դերը, որ պիտի դիւրա-ցընէր կրթութեան ու դաստիարակու-թեան գործը: Գիշերիկական, մասնաւոր եւ բարոյական դաստիարակութիւնը Իփէկ-ճեան կը լծորդէր գլխաւոր պատգամներուն: Այս հարցին մէջ անոր մտածումները գլխաւորաբար կ'ուղղուին դէպի գաւառի անբարեկարգ դպրոցները: Ազգային վարժարանի էական չարիքը Իփէկճեան կը տեսնէր հարուստ ծնող-ներու կամայականութիւններու մէջ: Ուստի, իր գլխաւոր կանոնագրու-թեան մէջ չատ յստակօրէն կը սահման-ուին անօրէնի եւ մանկավարժական խոր-հուրդի, ուսուցիչներու եւ աշակերտնե-րու պարտականութիւնները, իրաւունք-ներն ու փոխյարաբերութիւնները:

Բնագիտական առարկաները կը կազմեն Իփէկճեանի նախնական եւ երկրորդա-կան կարգի գլխաւոր ծրագիրներու հատատուն մասը: Արեւմտահայերու ազգային կրթութեան ծրագրի միօրինա-կանացումը եւս լուրջ մտահոգութիւն կը պատճառէր այս մանկավարժին, որուն համաձայն, Կ. Պոլսոյ բոլոր գլխոցները պէտք է ենթարկուէին կրթական խոր-հուրդի ընդհանուր վերահսկողութեան եւ հաշուետու պիտի ըլլային անոր ծը-րագրի ու կանոնագրութեան իրականաց-ման համար:

1878–ի կէսերուն Իփէկճեան կը ըս-տանձնէ Զմիւռնիոյ հայկական վարժա-րաններու տնօրէնի պարտականութիւնը:

ՕՐԱԳՐԻ ԷՋԵՐ

ԳՐԵՑ՝ ԶԱՐԵՀ Մ. ՈՐԲՈՒՆԻ

– Ինչ որ չեմ հասկնար Գլօտէլի կըն-քահայրութիւնն է, այս ազուէսին ծու-ղակը ինկար:

– Մկրտութեանս օրը խզուեցայ անոր հետ: Գլօտել է ինչ որ կայ հակաքրիս-տոնէական, ան հին կտակարանի մարդն է: Քրիստոսը խաչել տուող քահանայա-պետը:

Ըսի երբեն որ ան նոյնիսկ կրնար կրկին խաչը հանել Յիսուսը, եթէ գալու ըլլար նորէն:

– Այո, պատասխանեց, պէտք է:

Գլօտէլի քրիստոնէութիւնը եկեղեցին է, այսինքն ոչ թէ մարդուն ազատագը-րութեան մեքենան, այլ մանուանդ անոր ճնշման գործիքը:

– Ես դեռ առաջարկ պիտի բերեմ, ա-ւելցուց խանդավառուած, բայց նաեւ լաւ քրիստոնեայ ըլլալ, կը զգամ որ դեռ զոհողութիւնս չեմ կատարած: Պիտի առա-ջարկեմ՝ Պապը աշխատակից համայնա-վարութեան հետ, ճշմարիտ քրիստո-նէութեան տեղը հոն է, եթէ նոյնիսկ համայնավարութիւնը քանդէ բոլոր եկե-ղեցիները: Հռովմէացիները բոլոր մի-ջոցներով հալածեցին քրիստոնէութիւնը, բայց ան մնաց, յաղթեց: Համայնավա-րութիւնը պիտի օգնէ իսկական քրիստո-նէութեան վերածնունդին: Պատմուածք մը ունիմ գրելիք՝ «Վերջին Եկեղեցին» որ պիտի ըլլայ առաջինը վերածնած քը-րիստոնէութեան: Բայց պիտի սպասեմ տակաւին, որովհետեւ չեմ ուզեր որ ըս-ուի թէ «Տրովադայի ձին եմ»: Դուր-սէն ղրկուած մը:

Սէն Դրօքեզ, 25 Յունիս, կիրակի· – Այս առաւօտ Մաքսիմը աղօթագիրքը ա-ռաւ եւ գնաց եկեղեցի:

– Ես կը սիրեմ գիւղերու այս համեստ եկեղեցիները, ուր միայն աղքատներ կան, իսկական քրիստոնէական մթնոլորտ մը:

26 Յունիս· – Մաքսիմին հետ գացինք Պօվալլոն, Կոլֆ Օթել: Ուշ է արդէն: Բոլոր սպասաւորները բռնուած են: Մի-սին գացինք ծովափ, լողացինք, թաղե-լու համար այս ձախորդութիւնները:

27 Յունիս· – Մաքսիմը հեռաձայնեց բժիշկ Վերթիէին, որ խոստացաւ բարե-խօսել Կոլֆ Օթելի տնօրէնին, ինծի հա-մար: Այս յոյսով կը մեկնիմ:

– Կանչէ՛ ինծի, ըսաւ Մաքսիմ, եթէ կարգի փորձանք մը ունենաս:

Կը վերադառնամ Մարսիլիա: Դժողքս: Երկուշաբի առաջ երբ Սկիւտարի ընկե-րոջս ըսի, Մարսիլիա կը վերադառնամ, մնայուն:

– Ես այդ բանը պիտի չընէի, պատաս-խանեց: Ինծի անանկ կուգայ թէ ձախո-ղած մարդու մը վերադարձը պիտի ըլ-լար աւելի դէպի իր վատ օրերու վայ-րը: Անկումը:

Նոյն իրիկունը· – Ժամը վեցը երեսուն անց հասայ տուն, այսինքն՝ եղբօրս տու-նը: Նամակներու կոյտ մը: Կնոջս նա-մակները, կ'իմացնեն քննութեան յաջո-ղութիւնները: Սթելլա խէժի գործարա-նին տնօրէնը, Նէօ – Պրոնզի տիրոջ ըս-պառնական նամակները: Դժողքը իր բո-ցերը տարածեց չուրջս:

(Տեարակին լուսանցքին վրայ) Բնու-թիւնը հիմա նկարին վրայ է: Հոս է որ կը սկսի արուեստին գործը: Արուեստագէ-տը կանգնած է բնութեան եւ նկարին մի-ջեւ, իր տենչանքներով, երազներով, իր այրուցքներով, որոնք կը վխտան ու խ-րար կը հրմշտկեն, իրար կը հալածեն գալ հանդչելու համար նկարին վրայ՝ ա-նոր տալով իր մէկ դրոշմը, անոր վրան դնելով իր ճանկը: Հոս նկարը կ'ենթար-կուի արուեստագէտին սահման չճանչցող կամքին: Այնատեն նկարը կը դադրի նմանիլ բնութեան կամ իրականութեան (ո՞ր իրականութեան) ու կը դառնայ ինքը նոր իրականութիւն մը, այսինքն՝ արուեստ:

Մարսիլիա, 28 Յունիս· – Առջի օր նըս-տեր էինք Էսմալի պատշգամբը: Քաղցր էր իրիկունը: Սէն Դրօքեզի նաւահան-գիստին վերեւ խաղաղ լուսին մը կը պըս-պղար հէքեաթային լուսաչուխտ փառ-ծովուն վրայ: Մանուածրներու զբօսանա-ւերը իրենց կայմերը ցցեր էին լուսնակա-յին դիմացը: «Փրոֆէսէօր»ը նստեր էր իր չքախումբով, դեղեցիկ Անգլուհիներ, մերկ ուսերով, արեւէն այրած մորթով եւ նկարիչներ: «Փրոֆէսէօր»ը իր հակա-կրելի սրածայր մօրուքը կը շարժակէր, այսինքն՝ կ'երգէր կլիթաւի ընկերակցու-թեամբ: Մաքսիմ կ'ատէր այդ խումբը: Կարծեմ զանոնք մոռնալու համար էր, որ սկսաւ ալգասեան եւ վերմանական կա-տակներ պատմել: Իր պատմութիւննե-րուն կը պատասխանէի հը՞, այո, հը՞, այո–ներով:

(Շար· 9)

ԱՅՍՕՐՎԱ ՀԱՐՑԵՐ

— ՀԱՐՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ —

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԿԱՆԱՑ

ՎԱՀԱԳՆԻ

Ֆրանսիայի ի պատիւ մեր տարած յաղթութեան՝ Պօղոս մեզ ասաւ– ծոյս է, որ եթէ Աղջիկ մարդ մեռնի ու թաղեն, ան ալ ոտքի կելլայ։ Իրաւ կըսեն, որ ան ալ մեռնի, ան ալ կրնայ իր ոտքերուն վրայ մեռնիլ։ Ես ալ ուզեցի ոտքի մեռնիլ, ինչպէս որ ուզեցի ոտքի ապրիլ։ Ես ալ ուզեցի ոտքի մեռնիլ, ինչպէս որ ուզեցի ոտքի ապրիլ։ Ես ալ ուզեցի ոտքի մեռնիլ, ինչպէս որ ուզեցի ոտքի ապրիլ։

Տիկին Սեդա Կիւլպոլեան, Մինաս եւ Սրբուհի Պաղտասար ցաւով կը ծանուցանեն իրենց մօր եւ մեծ – մօր՝

ՀԱՅԿՈՒՀԻ ԿԻՒԼՊՈՂԼԵԱՆԻ
(Ծնեալ Մեսրոպեան)

մահը, որ պատահեցաւ Փետր. 12–ին:

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Շորեքշաբթի, Փետր. 18ին ժամը 8·30ին Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին, ուրկէ մարմինը կը փոխադրուի Լա – Սիոթայի գերեզմանատունը ամփոփուելու համար ընտանեկան դամբարա – նը:

Մահագդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել:

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Պետրոսեան եւ Քընեազեան ընտանիքը իրենց սիրելի բարեկամուհին, Տ. Ա– րաքսի Ակոնայեանի ցաւալի մահուան առ– թիւ, փոխան ծաղկեպսակի 300 Ֆ. կը նուիրեն «Ցառաջ»ի բարգաւաճման:

Ի ՅԻՇԱՏԱԿ

Նաւարշ Միսաքեանի յիշատակին, Պ. Զաւէն Յովհաննէսեան 100 Ֆ. կը նուի– րէ «Ցառաջ»ին:

×

Այրի Տիկին Մ. Ըսըրլը իր ամուսնոյն՝ Գեղամ Մ. Ըսըրլըի յիշատակին 100 Ֆ. կը նուիրէ Սամուէլ – Մուրատեան վարժա – րանին, 100 Ֆ. «Դպրոցասէր»ին (ստա – նալ «Ցառաջ»էն) եւ 100 Ֆ. «Ցառաջ»ին:

DONNE COURS DE
GUITARE et de TAR
Musique Occidentale et Arménienne
VASKEN SOLAKIAN
Tél.: 736. 99. 25

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ Տէսինի վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ՝ բոլոր ընկերուհիները, Թէյասեղանի մը չուրջ, Փետրուար 16, ժամը 8·30–ին, Տէսինի Մշակոյթի Տան մէջ: Կը խնդրուի ընկե– րուհիներէն ներկայ գտնուիլ:

J. PIERRE et SONI YAPOUDJIAN

Agents Généraux

A. G. F.

TOUTES ASSURANCES:
Commerçants - Artisans - Auto
Vie - Habitation - Industrie
46, Bd. GENERAL LECLERC
92110 - CLICHY
Tél.: 737. 15. 12

50-ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԿՈՅԹ

ՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՓԱՐԻԶԻ ՇՐՋԱՆԱՅ

Կիրակի, Մարտ 1, կէսօրէ վերջ ժամը 14·30–ին:
Salle de la Chimie — 28 bis, Rue St. Dominique
Paris 7e — (Métro: Invalides)
Մասնակցութեամբ՝ Հայ Արիներու Միութեան բոլոր Շրջաններուն, ու Ֆրանսական եւ օտար Սկաուտական կազմակերպութեանց
Սկաուտական մասնաւոր յայտագիր
Ներկայացումներ՝ Գայլիկներէն, Թեւիկներէն, Սկաուտներէն եւ Արհնոյշներէն:
Զուարճալի հայերէն, հայկական պարեր եւ երգեր:
Սկաուտական ներկայացումներ, Շրջանային ներկայացում:
Մուտք՝ 25 Ֆ.

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԳԱՍԱԼՕՍՈՒԹԻՒՆ

կազմակերպութեամբ՝
ՆԻՍԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԻ
Փետրուար 22, կիրակի, ժամը 16–ին
Հայ Մշակութային «Օշական» սրահը
183 *bis, Bd. de la Madeleine — NICE*
կը դասախօսէ ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ
Ն ի ւ թ ՝
«ՍՓԻՒՌՔԸ ԵՒ ԱՆՈՐ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԺԵՒՈՐՈՂ ԱԶԴԱԿՆԵՐԸ»
Մուտքը ազատ է:

UGAB - JEUNES OUVERTURES

Notre Cine - Club présente
"LE TRIANGLE"
Film arménien d'Henrik MALIAN
Version originale
Sous-titré en français
Le JEUDI, 19 FEVRIER, à 20h.15
au Centre Culturel Alex Manoogian
118, *Rue de Courcelles, Paris* 17e

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Ալֆօրվիլի կապոյտ Խաչի վարչու – թիւնը իր խոր ցաւակցութիւնները կը յայտնէ Աղաւնի Օսգանեանին և ընտանե– կան բոլոր պարագաններուն իր մօր մահ– ուան առթիւ: Ցաւակցութիւններ նաեւ Տէր եւ Տիկին Սէրժ Սիմոնեանի եւ ըն – տանեկան բոլոր պարագաններուն իրենց մօր Այրի Տիկին՝ Արաքսի Սիմոնեանի մահուան առթիւ:

ՊԱՏՐԱՍՏՈՒԵՑԷՔ...

ԵՐԵՒԱՆԻ ՏՐԱՄԱԹԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ՖՐԱՆՍԱՑԻ ՄԷՋ

5 ՅՈՒՆԻՍ — 15 ՅՈՒԼԻՍ

Լուսանկարութիւն

Ի ՊԱՏԻՒ
ԸՆԿԵՐՈՒՀԻ ԱՏՐԻՆԷ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ

Ֆրանսահայ կապ. Խաչի Փարիզի մաս– նաճիւղը, հաճոյքը ունի պատուելու, իր վաստակաւոր ընկերուհիներէն՝ ԱՏՐԻՆԷ ԳԱԶԱՆՃԵԱՆԸ, (Արժանթինէն), եւրո – պա իր շրջապտոյտի առիթով:

Կը հրաւիրուին բոլոր ընկերուհիները, համակիրները եւ բարեկամները:

Կիրակի 22 Փետրուար կէսօրէ վերջ ժամը 16–ին, Մշակոյթի Տան մէջ:
17, *Rue Bleue, Paris* 9e

YAN'S CLUB
5, Ave. Reille, 75014 - Paris

CONCERT
A la mémoire de son Président
HAIG ESSABALIAN
Mercredi, 18 Fév. à 20h.45, au Club

Avec la collaboration de:
HOVANES ANASTASSIAN
Quatuor à Cordes SEVAN
Emmanuel Kouyoumdjian, Françoise Queguiner, Hovanès Anastassian, Paul Frithof.

Avec la participation de:
ANNA KARAKAIA
EUGENIE ALECIAN
Programme: AIVAZIAN, MIRZOYAN, KOHARIG GHAZAROSSIAN, KOMITAS.

Possibilités de diner après le concert
Réservations au Club: 589.20.48

ATTENTION
CHANGEMENT DE DATE

DANS LE CADRE DES FESTIVITES
DU 60e ANNIVERSAIRE
LA CROIX ROUGE ARMENIENNE
présente
«ՄԽԻԹԱՐ ՅՈՒՍԱՓԱՅԾԱՏ»
L'ETOILE DE L'ESPOIR
Film parlant français
d'après le célèbre roman historique de SERO KHANZADIAN
1er MARS, DIMANCHE
à 20 h. 30 précises
CINEMA COSMOS
76, Rue de Rennes, 75006 - Paris
Métro: Saint Sulpice
Entrée: 20 F.
Les billets sont en vente chez:
— *Ets. K. BAKERDJIAN:*
35, *Rue de Trévise, Paris* 9°
— *Librairie PALOUYAN:*
9, *Rue de Trévise, Paris* 9°
— *Restaurannt EREVAN:*
29, *Rue Bergère, Paris* 9°
Réservation par téléphone:
— *NAVASSARTIAN* - 985. 36. 53
— *SAGHATELIAN* - 854. 35. 74
Լիոնի մէջ՝ Մարտ 29–ին:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ա.Նդրանիկ Խաչատուրեանի մահուան առթիւ, Տիկին Լիւսի Զապունեան կը նուիրէ 50 Ֆ. Ալֆօրվիլի Կապոյտ Խա – չին:

MARSEILLE

La Section Culturelle de
L'UNION GENERALE ARMENIENNE
DE BIENFAISANCE
organise
Le Vendredi, 20 Février, à 21 h.
A son siège — 33, *Cours Pierre Puget*
Une Conférence
par M. GERARD DEDEYAN
(Professeur à l'Université de Montpellier)
Thème de la Conférence:
3000 *ANS D'HISTOIRE ARMENIENNE*

TRANSTOURS
ORGANISE
UNE GRANDE CROISIERE EN MER NOIRE
20 JOURS, DONT 7 JOURS A EREVAN

— 21 Avril, TOULON: embarquement à partir de 14 h. Départ à 16 h. Soirée «Faisons connaissance».
— 22 et 23 Avril: En mer, Election de la «Reine de la croisière».
— 24 Avril: Le PIREE — ATHENES
— 25 Avril: KOUSSADASI (Turquie)
— 26 Avril: en mer. 27 Avril: SOTCHI

×

l'Itinéraire peut-être modifie comme suit:
— Lundi, 27 Avril: SOTCHI - EREVAN. Par avion sans changement de prix.
— 28 Avril: TBILISSI, d'où départ pour EREVAN par autocar.

28 Avril au 3 MAI; EREVAN

— 4 Mai: par avion ODESSA. — 5 et 6 Mai: ISTANBUL.
— 7 et 8 Mai: en mer; détente et plaisir de la vie à bord.
— 9 Mai: NAPLES — 10 Mai: TOULON
Prix par personne, depuis: 4580 F. (4 *couchettes*), 6310 F. (2 *couchettes*) *etc.*
Supplément taxes de port, visa et frais d'obtention 200 F.

×

TRANSTOURS
Organise aussi plusieurs voyages pour l'Année 1981.
Avec les meilleures conditions et des prix imbattables.
Hôtel COSMOS à MOSCOU et Hôtel ARMENIA à EREVAN 1e classe

24 AVRIL et 1er MAI à EREVAN

De PARIS:
— 1e Voyage: du 17 Avril au 2 Mai
— 2e Voyage: du 5 Août au 20 Août — 3e Voyage: du 5 au 19 Octobre.
— 4e Voyage: du 7 au 21 Septembre.
De MARSEILLE:
— 1e Voyage: du 3 Août au 17 Août
— 2e Voyage: du 7 au 21 Septembre. — 3e Voyage: du 5 au 19 Octobre.

○ PARIS — MR. OUNDJIAN: 25, Rue d'Argenteuil, 75001. Tél.: 261.58.28
Mercredi et Vendredi: de 14 à 18 h.
○ MARSEILLE — Z. ALEXANIAN: 11, Rue du Bassin, SAINT - JULIEN
Tél. 93. 04. 90 — (42) 83. 31. 55
○ LYON — CHEMIDIKIAN: Rue Chardonnet, N° 16, 69120 Vaulx-en-Velin
○ VALENCE — N. KASBARIAN: 9, Rue Sully; Tél.: 868. 53. 05

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՆՈՒՇԵԱՆ խումբի զնդակահարեալ– ներու գերեզմաններուն աւանդական այ– ցելութիւնը 22 Փետրուար, Կիրակի ա– ռաւօտ:

Ժամադրավայր, Փորթ – տը – Շուալի մէթրոյի արճարանի առջեւ ժամը 10–ին սկսեալ: Թափօրը առաջնորդուած ծաղ – կեփունջերով, դրօշակիրներով ու մի – ջազգային զինանագիտական ու ֆրան – սական իշխանութեանց ներկայացուցիչ – ներով դէպի Իվրիի գերեզմանատուն ճամբայ կ'ելլէ ժամը 10·30–ին:

Սիրով կը հրաւիրուին ազատութեան, Ֆրանսայի ազատագրման ու հակաֆա – շիստ պայքարի հերոսներու – հայ եւ բոլոր ազգերու պատկանող – յիշատակը յարգողները:

×

Նոյն օրը, Կիրակի 22 Փետրուար ժամը 11–ին, Պուշ – տիւ – Ռոնի Օպանյը քա– ղաքին մէջ – Մարսէյլի արուարձան – բացումը կը կատարուի ՄԱՆՈՒՇԵԱՆ պողոտային, մասնակցութեամբ քաղա – քին երեսփոխան – քաղաքապետ Պ. Խա– մոն ԳԱՐՍԻՆԻ ու քաղաքապետական Խորհուրդի անդամներուն, ինչպէս նաեւ Ֆրանսացի եւ հայ անձնաւորութեանց: Ներկայ կ'ըլլան Մարսէյլի, Լիոնի, Կըր– նոպլի, Նիսի եւ այլ քաղաքներու հայ նախկին Ռազմիկներ ու Դիմադրական – ներ: Փարիզէն նախկին Ռազմիկներու եւ Դիմադրականներու պատուիրակութիւն մը գլխաւորութեամբ Պ. Գ. ՊԱԳԼՐՃԵԱ– ՆԻ կը մասնակցի արարողութեան:

Օպանյի ինչպէս նաեւ Մարսէյլի եւ շրջանի մեր ազգակիցները կը հրաւիր – ուին իրենց ներկայութեամբ բարձրացը – նել հայութեան համար պատուաբեր այս արարողութեան հմայքն ու արտայայտել իրենց համակրանքը Օպանյի քաղաք – պետական խորհուրդին:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԲԱՆԱԿԻ
ՀԱՅ ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԻԿՆԵՐՈՒ
ՄԻՈՒԹԻՒՆ

Imprimé Sur Les Presses
Du Journal «HARATCH»
83, Rue D'Hauteville — 75010 - Paris
Commission Paritaire: N° 55935

ՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ՋՈՐԵՔՇԱԲԹԻ
ՓԵՏՐՈՒԱՐ
18
MERCREDI
18 FÉVRIER
1981

LE NUMERO 2 F.

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE OCCIDENTALE
83, RUE D'HAUTEVILLE, 75010 PARIS
Directrice : ARPIK MISSAKIAN

Tél. : 770-86-60 — C.C.P. Paris 15069-82 E
Fondé en 1925 — 51027317 A R.C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 300 Ֆ. - Վեցամսեայ : 160 Ֆ.
Արտասահման : Տար. 350 Ֆ. - Հատը : 2 Ֆ.

56ԴՊ ՏԱՐԻ — ԹԻՒ 14.845

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

56e ANNÉE — No 14.845

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՀԱՄԱՀՕՂՈՎ ԳԱԿԱՆ ՊԱՏԹԱԿԱՒԻՄ

(ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ 60-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ)

Գաւառէն Երեւան, Փետրուար 16էն 18, Հայաստանի ժողովուրդն է, որ կը ցցուի կարմիր նորակարդ բռնատիրութեան դէմ: Հանրապետութեան խորհրդայնացումէն՝ 1920 Դեկտ. 2, հազիւ երեք ամիս եաք: Ազգային եւ ընկերային իր արժանաւորութեանը տէր Հայաստանի պիւզանդիւնն եւ աշխատաւորութիւնն է, որ կարճ ժամանակի ընթացքին կը հաստատէ «ռազմական կոմունիզմ»ին բնոյթը:

Բռնագրաւումներ՝ անձարձակ եւ անհաշիւ տարողութեամբ: Ձերբակալութիւններ մտաւորականներու, պետական, կուսակցական դէմքերու: Հայ բանակի անձիտում՝ սպաներու աքսորով: Ա.ռնոց չարքին՝ Սարտարապատի կերտիչներէն զօրավարներ Նազարբէկեան եւ Սիլիկեան: եւ, վերջապէս, կացինահարում՝ ներ, գնդակահարումներ Երեւանի բանտին մէջ:

Այսպէս, ո՛չ միայն ահ ու սարսափի մթնոլորտ, այլեւ սեւով ճերմակի վրայ արձանագրուած համաձայնագիրի մը ուժ յօդուածներուն ոտնահարումը: 1920 Դեկտ. 2–ին «Ռ· Ս· Ֆ· Ս· Հ· լիազօր ներկայացուցչութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ» կնքուած համաձայնագիրին կատարեալ անտեսումը, բռնաբարումը:

Միւս կողմէ կը դրժուին ազգային – քաղաքական գետնի վրայ դրուած հրապարակային խոստումները: Դեռ Դեկտեմբեր 1–ին, Հայաստանի խորհրդայնացումէն մէկ օր առաջ, Բագուի Սովետներու հանդիսաւոր նիստին, Ազգը – բեջանի Ցեղկոմի նախագահը՝ Նարիման Նարիմանով, կը կարդայ իր գլխաւորած մարմնին Դեկլարացիան... Խորհ· Ադրբեջանը զիջում է եղբայրական Հայաստանին Լեռնայինն Ղարաբաղը, Ջանգեզուրը եւ Նախիջեւանը...: 11–րդ բանակի հրամանատար Օրջոնիկիձէն՝ ցայտարարութիւնը կ'որակէ «պատմական մի ակտ», եւ այն ալ՝ մեծագոյն կարեւորութիւն ներկայացնող:

Դիւանագիտական յայտարարութիւն մը՝ Հայութիւնը սին յոյսերով օրօրելու համար: Որպէսզի չուտով կնքուի խորհրդայնացման համաձայնագիրը:

Զանգեզուրը կ'ազատի՝ չնորհիւ իր ընդդիմութեան խորհրդային բանակին դէմ: Լեռնային Ղարաբաղն ու Նախիջեւանը ցայսօր կը մնան Բագուի սահման – ներուն մէջ: Ոտնահարելով տարրական իրաւունքները Հայ ժողովուրդին:

Թիֆլիսէն Երեւան ժամանած ամենայն Հայոց բանաստեղծը՝ Ցովհ. Թումանեան, Մարտ 24ին, կը հեռագրէ Օրժոնիկիձէին: Ակնառես ըլլալէ եաք իրա – ժարձութեանց: «... Ռազմաճակատում ընկեր կոմունիստները որոշ կերպով ասում էին, որ ամբողջ յեղափոխութեան ընթացքին կարմիր բանակը աւելի անհիտ ներս չի վարել...»: Որովհետեւ, իրա – րու դէմ ելած են մէկ կողմէ Հայաստանի բանուորներն եւ աշխատաւոր գիւղացիները, միւս կողմէ Համայնավարներու գինուած խումբերը: Թումանեանի հաստատումն է այս:

Անմիտ եւ անխմաստ, արդարեւ, որովհետեւ իշխանութեան գլուխն անցած Ռեւկոմը, հակառակ կասեցումներու եւ Մոսկուայի նման լրջախոհ Համայնավարներու, փորձեց գործադրութեան դնել «Ռուսիոյ օրինակը»: Անտեսեց Հայաստանի իւրայատուկ պայմանները ու Հայ ժողովուրդին ակնկալութիւնները, յոյսերը: Կասեցումը, Մոսկուան հրաժարեցան Ռեւկոմէն՝ տարակարծիք գտնուելով իրենց ընկերներուն գործադրած իրաւունքները Հայ ժողովուրդին:

ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼ

Փետր· 16 թուակիր *Միլիյէթ*–ը, Տօյլ Մաբ Մաճըսի ստորագրութեամբ խմբագրական օրագրերը՝ «Թորոսիք-օ Սքար»ի մէջ (ի դէպ նոյն յօդուածագիրը այս նիւթին շուրջ գրած էր Հերքլտի Ցուն – ուար 24/25 թիւին մէջ – «Ճառաջ» Ցուն– ուար 27 – եւ հաւանաբար նոյն յօդուածն է) լոյս տեսած յօդուածի մը ակնար – կելով, ի մէջ այլոց7 հետեւեալ յայտ – նութիւնները կ'ընէ: Ինչպէս պիտի տեսնուի, Թուրքերը քաւական «լաւա – տեղեակ» են եւ ծանօթ նոյնիսկ ներքին «տարակարծութիւններու»...

×

Վերջերս, Թուրք դիւանագէտներն ու անոնց ընտանիքի անդամները թիրախ առնող հայկ· ահաբեկչական նոր շար – ժում մը՝ անշեղ կարգապահութեամբ իր գործունէութիւնը կը շարունակէ: 15 Թուրք դիւանագէտներ սպաննելով հան – դերձ ցարդ ոչ մէկ անդամը ձերբակալուած հայկ· ահաբեկչական կազմակեր – պութեանց ամէնէն կարեւորը՝ մարքսիստ հակումով Հայկ· Ազատագրական Գաղտ– նի Բանակն է: Ներկայիս, Միացեալ – Նահանգներն ալ ներառեալ՝ 6 երկիրնե – րու մէջ կազմակերպուած մարքսիստ հակումով այս ահաբեկիչները՝ մոլե – ռանդ ձախակողմեաններու կողմէ կը ղեկավարուին: Լիբանան, Ֆրանսա եւ Միացեալ – Նահանգներու մէջ ապրող ու– նեւոր ընտանիքներու զաւակներէն բաղ – կացած ահաբեկչական այս խումբը՝ Ա– րեւելեան Անատոլուի կարեւոր մէկ հո – ղամասին Հայերու վերադարձումը կը պահանջէ:

Իսկ ներկայիս, աշխարհի զանազան երկիրներուն մէջ ապրող 6 միլիոն Հա – յեր, յիշեալ ահաբեկիչները քաջալերե – լու կամ չքաջալերելու հարցին շուրջ տարակարծիք են: Միւս կողմէն, Պէյ – րութէն ղեկավարուող եւ Դաշնակ անու– նով պատմական հայ ահաբեկչական կազ– մակերպութեան մաս կազմող եւ ալա – կողմեան հակումով երկրորդ խումբ մը՝ «Հայկ· Ցեղասպանութեան Արդարադատ Մարտիկներ»ը ալ՝ «Հայկ· Ազատագը – րական Գաղտնի Բանակ»ին հետ տարա – կարծիք են: Այս վերջիններս, Թուրքիա– յէն վերադրաւելի հողերուն՝ ներկայի Խորհ· Հայաստանին կցումը կը նախա – տեսէն: Մարքսիստ դաղափարապաշտու– թենէ խրտչող Լոս – Անճըլըսի մէջ բը – նակող բազմաթիւ հայ նշանաւոր դեր – ծատէրեր եւ փրօֆէսէօրներ ալ, Հ· Ա· Գ· Բ·–ին՝ Ճօրճ Հապաշի գլխաւորած պաղեստինեան ազատական չարժումին կողմէ ղեկավարուած ըլլալը կը հաստա– տեն: Ահաբեկիչներու մեծամասնութիւ – նը, ներկայիս՝ Պէյրութի մէջ համա – խմբուած ըլլալով հանդերձ, ոչ անոնց կեդրոնատեղին եւ ոչ ալ՝ հետքերը գըտ– նել կարելի է:

×

Նորէն հայկ· ահաբեկչական կազմա – կերպութեան մը կողմէ ամերիկեան մա– մուլին ղրկուած հաղորդագրութեամբ մը, Խորհ· Միութեան՝ հայկ· ահաբեկ– չութիւնը գործնապէս քաջալերած ըլլա – լու վարկածը հերքուած է:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՔԱՐԱՇԻԻ մէջ, Պապին ժամանումէն հազիւ 15 վայրկեան առաջ, ձեռնառումբ մը պայթած է, սպաննելով այն ահաբե– կիչն իսկ, որու ձեռքն էր: Երկու հոգի ալ ծանրօրէն վիրաւորուած են: Երեք – շաբթի օր Ցովհ· Պօղոս Բ· Մանիլ կը հասնէր, ուր 50 հազար զինուոր պաշար– ման վիճակի մէջ գտնուող քաղաքի մը պատկերը կուտային մայրաքաղաքին: Հոս ալ, հակառակ ձեռք առնուած բոլոր մի– ջոցներուն, ահաբեկիչ մը բռնուած է, որպէս քահանայ ծպտուած:

ՏՈՂԱՐԸ նոր մրցանիչ մը կոտրեց առ– ջի օր (Երկուշաբթի) 5 Ֆ· 20–ի հասնե – լով Փարիզի սակարանը: Մառքը, սա – կայն, կը չանայ ինքզինքը գտնել:

ՊԱՍՔ ԳԱԻԱՌԸ ամբողջ մեռած երկրի մը պատկերը կը պարզէր Փետր· 16–ին, չարչարանքի տակ մեռած պասք մար – տիրոսին յուղարկաւորութեան առթիւ: Ութ օրուան ընթացքին, նոյն չրջանը երկրորդ զանգուածային գործադուլն է, որ կը կազմակերպէր բայց այս անգամ – ուան պարզուած պատկերը նախընթաց չունէր:

ՀԱՄԱՑՆԱՎԱՐՆԵՐԻ եւ ՍԷ – ԹԷ – ԹԷի անդամներէ կազմուած fոմանեtio մը ըս– տիպեցին Երկուշաբթի իրիկուն, որ հե – ռատեսիլի Անքէն 2 կայանը դադրեցնէ ուղղակի սփռած իր յայտագիրը, նուիր– ուած երիտասարդութեան: Վիճաբանա – կան հանդիպումը, զոր Անքէն 2 կազմա– կերպած էր Եւրոպա Մէկ կայանին հետ, իրրեւ նիւթ ունէր «20 տարեկան, ի՞նչ բանի համար»: Հրաւիրուած էին 17–էն 25 տարեկան 33 երիտասարդներ, փա – լաս, եւ հարցումներ պիտի ընէին եօթը անձնաւորութեանց: Հաւաքոյթը նոր սկսած էր երբ նախ Թռուցիկներ սկսան «թռչիլ» սրահին մէջ, ապա աղմուկը կը մեծնար, ցոյցի բնոյթ կ'առնէր եւ յայ – տարերին պատասխանատուն՝ Ժ· Փ· Էլ– քասաշ վերջ կուտար յայտագրին, յայտ– նելէ եաք համայնավարներուն. «Ե– թէ այս է, լրատուութեան ազատութեան ձեր ըմբռնումը, չատ լա՛ւ»: Կը պարզը– ւէր նաեւ թէ կեղծ հրաւիրատոմսներ տպուած էին եւ այդ ձեւով է որ «կազ – մակերպուած ցուցարարներ» կրցած էին ներս մտնել: Անշուշտ բոլորովին տարբեր բացատրութիւն կուտայ Իւմանիթէ, որու համար ազատութիւն չկայ, միայն պեղ – ծարարութիւն եւ դրաքնութիւն կը տի– րեն...:

ԱՆԳԱՐԱՑԻՆ կը հաղորդեն որ ապա – հովութեան ազգային խորհուրդը մէկ ա– միս պայմանաժամ կուտայ «բոլոր Թուրք քաղաքացիներուն, արտասահման ա– պաստանած եւ ընդդիմադիր վարչակար–

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

դին» որ Թուրքիա վերադառնան եւ իշ – խանութեանց ներկայանան հակառակ պարագային պիտի զրկուին իրենց քա – ղաքացիութենէն»: Թրքական հպատակու– թեան օրէնքը բարեփոխող հրովարտակ – օրէնքը կ'ըսէ· – «Ոեւէ անձ, որ զոր– ծած է կամ կը գործէ Թուրքիոյ դէմ երբ արտասահման կը գտնուի, այս օրէնքի հրատարակութենէն սկսեալ, երեք ամսը– ւան պայմանաժամ մը կը վայելէ – մէկ ամիսէ իջած երբ պատերազմական վի – ճակ հռչակուած է – երկիր վերադառ – նալու եւ իշխանութեանց ներկայանալու համար: Միւս կողմէ, Թուրք բանուորա– կան կուսակցութեան նախագահուհին՝ Տիկին Պեհիճէ Պոռան, 71 տարեկան, որ ներկայիս Պելժիա ապաստանած է, ի բացակայութեան դատապարտուեցաւ 8 տարի եւ 9 ամիս բանտարկութեան եւ 11 ամիս հսկողութեան տակ բնակու – թեան:

ՕՏԱՐ, ԳԱՂԹԱԾ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐՈՒ հարցը կը շարունակէ լայն տեղ գրաւել մամուլին մէջ, համայնավարներու «հա– կազաղթող» արշաւանքին առթիւ: Այս առթիւ կը յիշուի թէ 1980ի սկիզբը, Ֆը– րանսայի մէջ 4 միլիոն 124·317 օտար աշխատող կար: Ազգերու գետնի վրայ, բաժանումը հետեւեալն է· – Փորթու – կալցի՝ 866·610, Ալժերացի՝ 782·111, Սպանացի՝ 445·368, Մարոքցի՝ 399·952, Թունուզցի 183·782, անհայրենիք ապաս– տանեալ (ափաքրիտ) 108·566, Ֆրանսա– խօս Ափրիկեցի 106·102, Թուրք՝ 92·772, Եուկոսլաւ 70·550, զանազան 414·530: Կան նաեւ 782 հազար Եւրոպայի հասա – րակապետութեան երկիրներէն: Գլխաւոր կեդրոններն են՝ Փարիզեան շրջան, Ռոն – Ալփ, Փրովանս – Քոթ տ'Ազիւր, Հիւ– սիս եւ Լոռէն:

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹԻՒՆԸ քիչ մըն ալ ա– ւելցաւ Ֆրանսայի մէջ, Ցունուարի ըն – թացքին: Պաշտօնական աղբիւրներու համաձայն Դեկտեմբերէն Ցունուար գոր– ծազուրկներու թիւը մէկ միլիոն 632 հա– զարէն անցած է մէկ միլիոն 680 հազար 300–ի (առաւել 3%): Իւմանիթէ սակայն անգործներու բուն թիւը երկու միլիոնէն աւելի կը գտնէ:

ՁՈՐՍ ՍԱՀՄԱՆՔՆԵՐ, որոնք ամբաս – տանուած էին, որ երախայ ծեծած ու բռնաբարած են գլխաւորեցան Ութատ եւ Թապուք, Ուրբաթ իրիկուան աղօթքնե – րէն եաք:

ՓԱՐԻԶԻ մէջ եղեռնափորձ մը եւս գործուեցաւ, երկուշաբթիէն երեքշաբթի լուսանալիք գիշերը, այս անգամ քարու – քանդ ընելով կրթական նախարարութեան առաջին յարկը: Սրարքին տէր եղաւ քոմսիքական խումբը:

«ՊՐԱՒՏԱ» որ ճշմարտութիւն կը նը – շանակէ եւ Խորհ· համայնավար կուսակ– ցութեան պաշտօնաթերթն է (այսինքն՝ երգիծաթերթ չէ) կը մեկնաբանէ Ֆը – րանսայի մէջ, այլեւս ի գործ դրուած «ապահովութիւն եւ ազատութիւն» օրէն– քը, ու կը գրէ «Ֆրանսական իշխանու – թիւնները կրնան այլեւս արգիլել որեւէ ցոյց կամ տողանցք» ու կ'աւելցնէ· – «Աշխատաւէր Ֆրանսան վրդովումով դի– մաւորեց իշխանութեանց այս նոր յար– ձակումը ժողովրդավար նուաճումներուն դէմ»...: Երբ ամէն ոք գիտէ, որ Խոր– հրդային Միութիւնը օրէնք մը հանած է ըստ որուն չեն արգիլուած միայն այն ցոյցերն ու տողանցքները զոր իշխանու– թիւնները կը կազմակերպեն, Պրաւտայի այս եռանդը Ֆրանսայի ժողովրդավար սկզբունքները պաշտպանելու աւելի հա – մով կը դառնայ անշուշտ:

թէ յեղափոխութեան քաղաքականութեան հետ:

Լենին, համաժողովրդական ըմբոստու– թեան սանձումէն քիչ եաք, Ապրիլ 11ին, Ա.Լ· Միանիկեանի միջոցաւ դրաւոր կը յիշեցնէ Անդրկովկասի Կարմիր Իշխանա– ւորներուն, թէ պէտք չէ հետեւին Ռու – սաոյ օրինակին: Դառնան կոյր կամակա– տարները հոն «ժամանակաւոր» կերպով գործադրուած «Ռազմական կոմունիզմի» քաղաքականութեան:

Զգաստութեան հրաւէր՝ ուղղուած ա– նոպաներուն, բռնութիւնը իրրեւ ընկեր – վարութեան ճամբայ նկատող մարդոց հասցէին:

Այս տարրական ճշմարտութիւնը չըմ – բռնեցին պատմութեան մէկ վայրկեա – նին իշխանութիւնը իրենց ձեռքը անցու– ցած օրուան Համայնավար իշխանաւոր – ները:

Անխուսափելին արձանագրեց նոյն պատմութիւնը:

Համաժողովրդական ապստամբու – թիւն: Ցանուն ազատութեան, անկախու– թեան, քաղաքական եւ ընկերային տար – րական իրաւունքներու յարգումին:

Փետրուար 18–ը ժողովուրդի մը ար – դար խոյանքն է՝ ընդդէմ բռնատիրու – թեան:

Հայոց դարաւոր պատմութեան մէկ նոր էջին վկայութիւնն է այս:

Ժ· Մ·

ՕՐՈՑԻ ԿՅԱՆՔԻՑ

Թիվ 2ԱՐԻ Ը· ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԻՉՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս ՍԵՐԳԵՅ ՄԱՐԿՈՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ ՀԱԿՈԲ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ ՀՐԱՉՅԱ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ ՀԱՅԿ ՄԱՆԱՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԱԲԻԱՆՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ ՍԱՄՎԵԼ ՏԱՐՈՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ ՀՐԱՉՅԱ ՉԱՔՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ ՀՐԱՉՅԱ ՍՄԲԱՏՅԱՆ

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ

ՎԱՅՐԱԿԱՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑ

Ինչպես հայտնի է, Եղիշե Չարենցի մահից հետո նրա ընտանիքը ապրել է ծանր նյութական պայմաններում։ Ամուսինը՝ Սոֆյա Լեոն-Չարենցը, ստիպված է եղել աշխատել, որպեսզի կարողանա կերակրել երեխաներին։ Ահա թե ինչու նա ստիպված է եղել հրաժարվել Չարենցի ձեռագրերի մի մասից, որոնք նա նվիրել է Երևանի գրականության և արվեստի թանգարանին։

Ներկայումս Սոֆյա Լեոն-Չարենցը ապրում է Ֆրանսիայի հարավում՝ Նիցցա քաղաքում։ Նա ծանր հիվանդ է։ Ֆրանսիայի Կոմունիստական կուսակցության «Ումանիտե» թերթի թղթակիցը հանդիպել է Սոֆյա Լեոն-Չարենցի հետ և զրուցել նրա հետ։

Ստորև տպագրվում է այդ զրույցի ամփոփումը։

— Ես ծնվել եմ Ռուսաստանում, Սանկտ-Պետերբուրգում, 1902 թվականին։ Հայրս ռուս էր, մայրս՝ հայուհի։ Ես ապրել եմ Ռուսաստանում մինչև 1921 թվականը։ Այդ տարի ես ամուսնացա Եղիշե Չարենցի հետ։ Ես ինքս ևս գրում էի, և մեր տունը հաճախ էին այցելում գրողներ, արվեստագետներ։ Ես ծանոթացա Մանդելշտամի, Ախմատովայի, Մայակովսկու, Բլոկի, Գորկու, Ալեքսեյ Տոլստոյի, Ալեքսանդր Գրինի, Ալեքսանդր Բլոկ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Պ. Սուրէն Մուրատեան եւ զաւակը Տիգրան Ճիպօղլեան, Մահաքեան, Սալամէ, Քէօսէեան եւ Տէր Մովսէսեան ընտանիքները չնորհակալութիւններ կը յայտնեն բոլոր անոնց որոնք անձամբ, նամակով, հեռագրով, ծաղկեպսակնե-րով եւ նուիրատուութիւններով մասնակից եղան տարաբախտ՝

ՊԵՐՃՈՒՀԻ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ

մահուան առիթով ստեղծուած սուգին։

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Կապոյտ Ծաչի Վալանսի մասնաճիւղը խոր ցաւակցութիւն կը յայտնեն Տէր եւ Տիկին Պետրոս Աբրահամեանի եւ ընտանեկան պարագաներուն իրենց հօր Ահարոն Աբրահամեանի մահուան առթիւ։

Ի ՅԻՇԱՏԱԿ

Սէն Թէթիէն.— Պ. Սարգիս Փիլիկեան 500 Ֆ ·կը նուիրէ «Յառաջ»ին, իր եղբօր՝ Յակոբ Փիլիկեանի մահուան առթիւ։

×

Այրի Տիկին Մարիամ Կէօզիւմեան իր ամուսնոյն՝ Յարութիւն Կէօզիւմեանի մահուան քառասունքին ի յիշատակ, Փոխան հոգեհանգիստի 500 Ֆ· կը նուիրէ Ալֆորվիլի Ս· Մեսրոպ Կրթարանին (ըստանալ «Յառաջ»էն)։

ՆԱՄԱԿԱՏՈՒԻՓ.— Կը խնդրուի Պ. Տէր-ատէրեանէն, որ 350 Ֆ·ի բաժնեգին մը ղրկած է ուղղակի «Յառաջ»ի փոստի հաչիւին (ՍԷ-ՍԷ-ՓԷ) իր լրիւ հասցէն ղրկել վարչութեան։

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

—o—

կազմակերպութեամբ՝
ՆԻՄԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԻ
Փետրուար 22, կիրակի, ժամը 16-ին
Հայ Մշակութային «Օշական» սրահը
183 *bis, Bd. de la Madeleine — NICE*
կը դասախօսէ ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ
Ն ի ւ թ՝
«ՍՓԻՒՌՔԸ ԵՒ ԱՆՈՐ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԺԵՒՈՐՈՂ ԱԶԴԱԿՆԵՐԸ»
Մուտքը ազատ է։

UGAB - JEUNES OUVERTURES

Notre Cine - Club présente

"LE TRIANGLE"

Film arménien d'Henrik MALIAN
Version originale
Sous-titré en français
Le JEUDI, 19 FEVRIER, à 20h.15
au Centre Culturel Alex Manoogian
118, *Rue de Courcelles, Paris* 17e

RECITAL UNIQUE
DE
HAROUT
ET SON ORCHESTRE DES U.S.A.
A L'OLYMPIA
22 MARS, DIMANCHE, A 20 .30

———×———

Location ouverte:—

○ *Aux guichets de l'OLYMPIA.*
○ *TELE CONDORCET; Clamart - Tél.:* 645. 34. 69
○ *LA CAPPADOCE; Tél.:* 375.05.30
○ *VAROU: Issy-les-Moulineaux - Tél.:* 644. 40. 60

PRIX UNIQUE: 50 F.

UNION DES ANCIENS ELEVES
MOORAT - RAPHAEL

ՄՈՒՐԱՏ ՌԱՓԱՑԷԼԵԱՆ
ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Dans les Salons de l'Hôtel SOFITEL (Porte-de-Sèvres)
LE SAMEDI, 7 MARS, à 20 h. précises.

GRAND DINER DANSANT

Sous la Présidence d'Honneur de
CHARLES AZNAVOUR

Avec la participation de:
— l'Ensemble Traditionel Arménien ACHURI;
— le Chanteur VIGUEN;
— et LES TZIGANES IVANOVITCH.

Soirée dansante, à partir de 23 h.; animée par:
BERNARD DEDEDJIAN et son Orchestre.

Résérvation: ANTREASSIAN Garbis : 528. 64.67 — *GASPARIAN:* 236.48.19

MARSEILLE

La Section Culturelle de
L'UNION GENERALE ARMENIENNE
DE BIENFAISANCE
organise
Le Vendredi, 20 Février, à 21 h.
A son siège — 33, Cours Pierre Puget
Une Conférence
par M. GERARD DEDEYAN
(Professeur à l'Université de Montpellier)
Thème de la Conférence:
3000 *ANS D'HISTOIRE ARMENIENNE*

Ս· ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Կիրակի օր, Փետրուար 22, Վեւոնդ - եանց Քահանայից յառաջիկայ ժամին ա-ռիթով, Փարիզի Ս· Յովհաննէս - Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ մէջ ժամը 10-ին կը մատուցուի եպիսկոպոսական հանդիսաւոր պատարագ։

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԳԻՒՏ ԵՊՍ· ՆԱՐԳԱՇԵԱՆ

Ի ժամ Պատարագի կը կատարուի մասնաւոր Հոգեհանգիստ Փարիզի եւ շրջանի եկեղեցիներուն մէջ ծառայած վախճանեալ առաջնորդներու եւ հոգեւորականներուն համար։

Փարիզի և շրջաններուն մէջ ծառայած առաջնորդներն ու հոգեւորականները եղած են.—

Վեր. Տ. Արք· Քիւպարեան, Ար-տաւազդ Արք· Սիւրմէեան, Գէորգ Արք· Իւթիւճեան, Գրիգորիս Եպս· Պալաքեան, Կոմիտաս Վրդ· Սողոմոնեան, Սուքիաս Վրդ· Պարոնեան, Յովհաննէս Քհնյ· Հիւնքէրպէկեան, Սահակ Քհնյ· Իւթիւճեան, Կոմիտաս Քհնյ· Սկպեան, Բառնաբաս Քհնյ· Խնտամեան, Աբիսո-ղոմ Քհնյ· Թորոսեան, Մեսրոպ Քհնյ· Մեսրոպեան, Վահան Քհնյ· Խոյեան, Բարթող Քհնյ· Թապըմճեան, Գէորգ Քհնյ· Դաւիթեան, Լեւոն Քհնյ· Աբօլանեան, Գարեգին Քհնյ· Տէօվլէթեան, Մկրտիչ Քհնյ· Աբօլանեան, Գէորգ Քհնյ· Նիզամեան, Ներսէս Քհնյ· Գանճեան, Գրիգոր Քհնյ· Ճէպէճեան, Յուսիկ Քհնյ· Ադամեան, Վարդան Քհնյ· Պաղտասլը-եան, Յարութիւն Քհնյ· Ճօրճուլեան, Ադդէ Քհնյ· Փայլակեան, Եսայի Քհնյ· Ալթունեան, Թովմաս Քհնյ· Մինասեան, Մաշտոց Քհնյ· Թիւֆէնկճեան։

Կը հրաւիրուի մեր ժողովուրդը ազօ-թելու բազում տարիներ իր Եկեղեցւոյն ծառայած հոգեւորականներուն համար, ինչպէս նաեւ Հայց· Առաքելական Եկե-ղեցւոյ բարգաւաճման համար։

Imprimé Sur Les Presses
Du Journal «HARATCH»
83, Rue D'Hauteville — 75010 - Paris
Commission Paritaire: N° 55935

ARMÉNIE 81

ՁԱՏԻԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

PAQUES A ETCHMIADZINE

DU 15 AU 30 AVRIL 1981

Accompagnateur: VAROUJAN SARKISSIAN

———×———

CIRCUIT CULTUREL

MOSCOU, EREVAN et LENINGRAD
DU 12 AU 27 AVRIL 1981

Accompagné par: Berdj DJEZVEDJIAN

VOYAGE PROMOTIONNEL DE 12 JOURS

SUR VOL SPECIAL

DU 02 AU 13 AOUT 1981

— **Possibilités d'extension jusqu'au 17 Août** —

Départ de Lyon: 3700 F.
Départ de Paris: 3500 F.

Prix comprenant: l'Avion, l'Hôtel « Arménia », la Pension complète, les Excursions quotidiennes, le Visa et l'Assurance.
Avec Accompagnateur qualifié de l'agence

Consultez-nous pour les programmes détaillés et le calendrier des départs.

Renseignements et Inscriptions:

A PARIS:
LEVON BAGHDASSARIAN
SABERATOURS
3, Rue de l'Arrivée
Imm. CIT - 7e étage
75749, Paris — Cedex 15
Tél.: (1) 538. 67. 47

A LYON:
VAROUJAN SARKISSIAN
SEVAN VOYAGES
48, Cours de la Liberté
69003 — LYON
Tél.: (7) 860. 13. 66

A MARSEILLE:
JACQUES CHELELEKIAN
WASTEELS
87, La Canebière
13001 — Marseille
Té.: (91) 95. 90. 12

Ընդունելութիւն

Ի ՊԱՏԻՒ
ԸՆԿԵՐՈՒՀԻ ԱՏՐԻՆԷ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ

Ֆրանսահայ Կապ· Ծաչէն Փարիզի մասնաճիւղը, հաճոյքը ունի պատուելու, իր վաստակաւոր ընկերուհիներէն՝ ԱՏՐԻՆԷ ԳԱԶԱՆՃԵԱՆԸ, (Արժանթինէն), երեկոյ-պա իր չրջապտոյտի առիթով։

Կը հրաւիրուին բոլոր ընկերուհիները, համակիրները եւ բարեկամները։

Կիրակի 22 Փետրուար կէսօրէ վերչ ժամը 16-ին, Մշակոյթի Տան մէջ։
17, *Rue Bleue, Paris* 9e

L'EPHORIE
DE L'EGLISE ARMENIENNE
D'ISSY - LES - MOULINEAUX
présente
A U
CENTRE CULTUREL FRINGHIAN
6, Avenue Bourgain

FEVRIER:
— *Jeudi, 26 Février:*
Diapositives sur l'Arménie occidentale
MARS:
— *Jeudi 5 au Samedi 14 Mars:*
Exposition de peinture de P. Tchakmakian. Vernissage le 5 Mars à 19h.
— *Jeudi, 19 Mars:*
Diapositives sur la RSS d'Arménie.
— *Jeudi, 26 Mars:*
Conférence sur l'Eglise Arménienne dans le monde.
par le Père Murone Kevikian

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Լիոնի Հայ· Առաքել· Եկեղեցւոյ վարչութիւնը չնորհակալութեամբ առացած է հետեւեալ նուէրները· — Այրի Տիկին Յոհարիկ Գէորգեանէ 17·000 Ֆ·, մի Ոմն 5·000, Պ· Պուլիքեան 2·500, Պ· Կարպիս Ճընկարեան, Արման Մկրտիչեան, «Լիոնի Հայ Տիկնանց Միութիւն» 1000-ական, Լիոնաբնակ Պարսկահայեր 1200, Պահա-տուրեան, եւ Կապոյտ Ծաչի Լիոնի մասնաճիւղ 500-ական, Պ· Արման Ուզունեան 300 Ֆ·, Տիկին Գըլըճեան 200 Ֆ·: Եղիսաբէթ Վարդանեանի մահուան առ-թիւ փոխան ծաղկեպսակի Խժտահարեան ընտանիք 150, Այրի Տիկին Արմենուհի Վարդանեան, Տէր եւ Տիկին Մինաս Սան-թիքեան, Փօլ Վարդանեան, Տէր եւ Տիկին Գուիէր Սանթիքեան, Տէր եւ Տիկին Վահագն Վարդանեան 100-ական, խումբ մը Տիկիններ 100, Տիկին Տաթլեան 100, Տէր եւ Տիկին Զէքեան 50, Պ· Շահէն Խէմէքեան 50, Խումբ մը Տիկիններ Հայ-կազեան Վարժարանին 110 Ֆրանք։

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՓԵՏՐՈՒԱՐ
19
JEUDI
19 FÉVRIER
1981

LE NUMERO 2 F.

ՀԱՅՐԱՆԻՔ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ_ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE OCCIDENTALE
83, RUE D'HAUTEVILLE, 75010 PARIS
Directrice : ARPIK MISSAKIAN

Tél. : 770-86-60 — C.C.P. Paris 15069-82 E
Fondé en 1925 — 51027317 A R.C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 300 Ֆ. - Վեցամսեայ : 160 Ֆ.
Արտասահման : Տար. 350 Ֆ. - Հատ : 2 Ֆ.

56ԿԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 14.846 | Fondateur : SCHAVARCH MISSAKIAN | 56e ANNÉE — No 14.846

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ԼԻԲԱՆԱՆ

ՆՈՐ ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄ ԵՒ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

Բաւական ատենէ Լիբանան խօսիլ չէր ար-ար իր մասին, բացի երբեմն – երբեմն իսրայէլեան ռմբակոծումներէն հարաւ – Լիբանանի վրայ: Մնացեալը՝ անբնական կեանքը այլեւս բնական բնոյթ առած էր եւ ամէն մարդ յարմարած էր անյարմար կացութեան: Բայց յանկարծ մտահոգութիւնները կրկին մէջտեղ կ'ելլեն եւ յոռետես նախատեսութիւններն ալ չեն պակիր: Լիւսիէն Ժորժ, Մոնտի մէջ այդ առընչութեամբ վերլուծում մը կ'ընէ, որ ցոյց կուտայ թէ որքան խախուտ է կացութիւնը: Լրագրողը կը ճշդէ սակայն թէ «խռովութիւնները այն աստիճանին չեն հասած որ Լիբանան այժմէական առաջին կարգն անցնի – շատ մեռեալ պէտք է, Պէյրութի այդ տխուր նախապատուութիւնը տալու համար – մինչդէպերը հարկ եղածին չափ նշանակալից են, որպէսզի Լիբանանցիները մոռանան»:

Ինչ նոր բան պատահած է, ուրեմն, այս մտահոգութեանց դուռ բանալու համար: Նախ կայ յորդանանցի դիւանագէտին հարցը: Առեւանգուած է չուրջ 10 օր առաջ եւ միշտ անգտանելի է եւ ծանրագոյն կէտը կը նկատուի քանի լիբա-նանեան կառավարութիւնը սուրիական սպառնալիքներու թիրախ է: Լիբանանի Պաաս կուսակցութեան սուրիամիտ ճիւղը բուռն ամբաստանագիր մը հրապարակած է Պէյրութի իշխանութեանց դէմ, կեդրոնացած Արտաքին նախարար Ֆուատ Պութրոսի վրայ: Գլխաւոր մեղադրանքն այն է, որ Պէյրութի իշխանութիւնները կը թուին բաժնել այն տեսակէտը, որ Դամասկոս մատ ունի այդ առեւանգու-մին մէջ: Սուրիամիտ Պաասը կ'ըսէ սիւննի նախարարապետին, «կամ ազդոհոսանքին հետեւիլ եւ կամ հրաժարիլ»:

Միւս ճակատը՝ քրիստոնեայ, որոշ զոհողութիւն կը տիրէ, գլխաւորաբար Պէյրութ ձէմայէլի եւ Հանրապետութեան նախագահին՝ Սարգիսի շուրս յայտնուած-կան տեսակցութեանց պատճառով: Միւս կողմէ դաշնային, ասիկա պատճառ է, որ «կողմնակալութեան» մեղադրանքին տակ ըլլայ, մանաւանդ որ Թայէֆի իսլամական վերահսկողութեան ալ չէր խնայած ոչ ոքի եւ չեշտած այն հարցերը զորս Լիբանանի առջեւ կը դնէ պաղեստինեան ներկայութիւնը: Սուրիա լուռ հանդուրժութիւն մը տուած էր, ինչ ալ չատ տաք ըլլալով ՊԱԿ-ի հետ այս շրջանին:

×

Տեղւոյն վրայ սակայն լարուածութեան գլխաւոր պատճառը այլ է: Երկու անցքերէն, որոնք կան քաղաքին մէկ շրջանէն միւսը անցնելու համար, մէկը՝ Սոտեքօ փակ է փետրուարի սկիզբէն ի վեր: Ոչ ոք արդէն կը համարձակի այդ անցքին դիմել արեւելեան կամ արեւմտեան գօտիէն միւս գօտին անցնելու համար, այնքան բազմացած են հրացանաձգութիւնները, «առանձին» կրակ բացողներու կողմէ:

Ուրիշ վտանգ մըն ալ, Պէյրութ ձէմայէլ միւնուորական մարզում հաստատուած է քրիստոնեայ գօտիին դպրոցներուն մէջ, 17 հազար երիտասարդ պահեստաւորները պատրաստելու համար:

Լիւսիէն Ժորժ յոռետեսութիւնը կը տանի հոն, ուր կ'եզրակացնէ. – «Նախագահական պաշտօնաշրջանը վերջ կը գտնէ 1982 Սեպտ. 23–ին, եւ հարցը այն չէ թէ ո՞վ պիտի յաջորդէ նախագահ Սարգիսի, այլ՝ մէկը պիտի յաջորդ՞է: Եւ թէ հակառակ պարագային եթէ Լիբանան պայթի, ինչ բռնութիւններ պիտի կանխեն կամ հետեւին այդ պայթումին»...:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՍՊԱՆԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ծոցը տապնոպ մը ծնած է չարչարանքի տակ մեռած պասք քաղաքական բանտարկեալին պատճառով: 7 բարձրաստիճան պաշտօնեաներ հրաժարած են արդէն:

ՄԻԼԱՆՈՅԻ մէջ «կարմիր Զոկատները» տէր եղան ահաբեկումի մը, որու զոհ գնաց քաղաքին հիւանդանոցին անօրէնն բժիշկը՝ Լուիճի Մառանկոնի:

ԱՆԹԻԼ 2 հեռատեսիլի կայանին վի-ժած բանակավէճ – հանդիպումէն ետք, ամէն կողմէ յարձակումները կը չատնան համայնավար կուսակցութեան վրայ: Մնաց որ Սեկկիի բերած վաւերացումը այդ բիրտ միլիամուրեան գինքը կը նետէ ամբոխավար ընտրապայքարի մը մէջ: Արդէն ամէն ինչ՝ դաշինք, տոկ, երիտասարդ կը շահագործուին ասոր – անոր եւ մանաւանդ համայնավար ընտրապայքարին համար:

ԼԵՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ դադրեցուցին լրենց գործադուլը, իշխանութիւնները արտօնած ըլլալով որ անկախ սենտիքա մը կազմեն:

ՀԱՆՐԱՑԻՆ ԿԱՐԾԻՔԻ քննութիւնները կը տեղան ամէն օր, ամէն կողմ, ընտրապայքարի այս շրջանին: Քոթիտիէն տը Փարի վորձեր է Ֆրանսացիներուն կարծիքն առնել քաղաքական դէմքերու վրայ եւ հաստատուեր է որ ամէնէն սնոպն է՝ Ժիսքար տ'Էսթէնն, ամէնէն ձանձրացուցիչը՝ Պառ, ամէնէն աննշանը՝ Տըպրէ:

ՇԻՐԱՔ բացատրեց Երեքշաբթի երե-կուն, հեռատեսիլի Ա. կայանէն, որ իմաստութեան ճամբան է, փրկելու համար Ֆրանսան: Ինչպէս բոլոր թեկնածուները, ինք ալ գիտէ թէ ին՛չ պէտք է ընել վերջ տալու համար դրամահոսութեան, անգործութեան, բարձրացնելու համար Ֆրանսայի վարկը եւլն. եւլն.: Հարցը այն է սակայն, որ երբ թեկնածու մը ընտրուի, կը պարզուի թէ այլեւս բնաւ չի գիտեր թէ ի՞նչ պէտք է ընել...:

1981 ՅՈՒՆՈՒԱՐԻՆ 1853 ձեռնարկ. սնանկացած են ինչ որ 42%ի յաւելում մը կը նշանակէ մէկ տարուան ընթացքին:

ԻՐԱՆՑԻ ՔԱՌԱՍՈՒՆ ՄՏԱՒՈՐԱԿԱՆ – ՆԵՐ կոչ մը ըրած են Իրանցիներուն, ուր կ'ը դատապարտեն ղեկավարները, որոնք «քանիցս բռնաբարած են ժողո-վուրդին ընկերային եւ անհատական իրաւունքները եւ կեցուցած են ժողովրդական յեղափոխական չարժումին ընթացքը»:

ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼ

«ԿԱ՛Մ ՀԱՅԱՍՏԱՆ, ԿԱՄ՝ ԳԵՐԵԶՄԱՆ»...

—o—

Փետր. 17–էն «Թէրճիւման» օրաթերթը սկսած է հրատարակել նոր «Թերթօն» մը հանդստեան կոչուած դնդապետի մը՝ Հասան Ֆեհմի Լոհանլըի յուշերը – Թեամբ եւ «Հայկ. ահաբեկչութեան ծնունդ տուող պատճառներ» խորագրով: Յօդուածաշարքը կը «խոստանայ» հետաքրքրական ըլլալ եւ նոր «լոյս» սփռել 1453–էն (կ. Պոլսոյ գրաւումը) ցայսօր ապրուած ժամանակաշրջանը ընդգրկող «Հայոց Պատմութիւն» մը գրելով, ան – չուշա Թրքական ակնոցով դիտուած:

Յաջորդով կը սկսինք տալ գլխաւոր հատուածները: Առաջին յօդուածը, ունի արդէն այլապէս «չահեկան» երկրորդ խորագիրը մը՝ «Կամ Հայաստան, կամ գերեզման»...:

ԵՐԵՒԱՆ ⟷ ՓԱՐԻԶ
ՀԵԹԱՏԻՊ

ԵՐԵՒԱՆ (Արմէնփրէս Փետր. 10 – 12)

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԸ

Հրազդան գետի վրայ կառուցուող Մա-սիս – Նուռնուս երկաթուղիի երկկարկանի կամուրջին շինարարութիւնը վերջ գտած է: Հայաստան հին ու հաղուագիւտ կամուրջներու երկիր է, ուր պահպանուած է մօտ 40 միջնադարեան կամուրջ: Ահ-խարհի հնագոյն կառոյցներէն է Սանահինի կամուրջը Դեբեթ գետի վրայ: Ճարտարապետական հոյակապ կոթողը կառուցանել տուած է Իվանէ եւ Զաքարէ Զաքարեանի քոյրը՝ Վանենի Թագուհի, ժի. դարու վերջաւորութեան: 1725–ին Աղա Մահմէդ խանի հրոսակները ոչնչացուցած են կամուրջի արձանագրած խաչքարի այն մասը, որուն վրայ գրուած էր կառուցման թուականը: Շուրջ 800 տարի է, որ անոր վրայ եր-թեւեկը չի դադրիր: Պազալտէ շինուած, 18 մեթր թռիչք եւ 60 մեթր երկայնք ունեցող կառոյցը, դիմացած է դարերու փոթորիկներուն եւ հասած մինչեւ մեր օրերը: Այդ կամուրջին վրայէն անցած են Սայաթ Նովա եւ Յովհաննէս Թումանեան: Հռչակաւոր է ծիրանագոյն տուֆէ կերտուած Աշտարակի եռաթռիչք կամուրջը Քասախ գետի վրայ, որ շինուած է 1664–ին եւ որուն երկայնքը 76,2 մեթր է: Ժողովուրդը աւանդութեամբ պահպանած է զայն կառուցանողին՝ քանաքեռցի Խոջա Փշաւի անունը: Կամուրջին դիմաց կը բարձրանայ փոկաբերդ կոչուող ժայռը: 325 տարի է, որ ժայռերու պէս կանգուն այս կամուրջը կը ծառայէ մարդոց: Հնագոյն կառոյցներէն են Երեւանի կամուրջը Հրազդան գետի վրայ (1679), զոր «Վէրք Հայաստանի» վէպին մէջ նկարագրած է Խաչատուր Աբովեան, Օշականի կամուրջը Քասախ գետի վրայ, կառուցուած 1706–ին, Գառնիի կամուրջը Ազատ գետի վրայ (ԺԶ. – ԺԷ. դարեր): Շարունակելով կամրջաշինութեան դարաւոր աւանդութիւնները, Հայաստանի ճարտարապետները ստեղծած են նոր ու ինքնատիպ կամուրջներ: Լաւագոյն կոթողներէն են 1945–ին կառուցուած «Ճաղթանակ» կամուրջը Հրազդան գետի վրայ, 1956–ին կառուցուած Հրազդանի մեծ կամուրջը, որ վերջերս նորոգուած ու դարձած է աւելի գեղեցիկ ու դիմացկուն:

ԿՄՄԻԹ

ԾԱՂԿԱԲԱՐ
ԹԷ ԾԱՂՐԱԲԱՂ

—o—

Ահա ես եմ՝ Խելօք Զալօն: Ու կը բերեմ ձեզի փունջ մը ծաղիկ՝ հաղուած սփիւռհայ մամուլէն: Ես ըսեմ՝ ծաղկամաղ, դուք ըսէք՝ ծաղրաբաղ: Ծաղիկները՝ մամուլէն, կամիքն ալ ինձմէ:

×

«Հայրենիք» օրաթերթի մէջ հրատարակուած է հետեւեալ ծանուցումը (2 Հոկտ. 1980). «Տիթրոյթի Հայ Կեդրոնը կը կազմակերպէ ճաշկերոյթ – պարահանդէս մը «ՄԵՐ ԱՊԱԳԱՆ» նշանաբանով:

– Արդիւնքը միայն փայլուն կրնայ ըլլալ...

×

«Ազդակ» օրաթերթի 8 Յունուար 1981ի թիւէն սա խորագիրը. «Մի՛չտ աղքատ եւ մի՛չտ խնդրարկու Թուրքիան»...

– Որ յարատեւութեան փաստ է...

Նոյն օրաթերթը 9 Յունուարին. «Զօրավարները կը կրծեն Թրքական մամուլի ազատութիւնը» կը խորագրէ...

– Յարատեւ ապերասանութեան կը յաջորդէ՝ անօթութիւն:

×

«Արեւ» օրաթերթի 11 Դեկտեմբեր 1980–ի համարէն սա առածը. «Երկան – կութեանդ բուն դրամագլուխը քու մէկդ փնտռէ»:

– Ասոր կ'ըսեն ներդրում...

Որուն կը յաջորդէ (12 Դեկտեմբեր) սա խորագիրը. «Տարաժամ վրիպապատումմ»...

– Կամ վրիպատար ժամավատնում:

×

Դարձեալ «Ազդակ» 14 Յունուար 1981ին կը խորագրէ. «կարեւորը օրօրուիլն է» ... ու քիչ մը անդին. «մեր ուղին»...

– (Առանց մեկնաբանութեան)...

×

Ց. Քիւրքճեանի քիչ մը ամէն տեղ հրատարակուող «Լեզուական հարցեր»էն սա մէկերերումը. «Գոնէ արեւմտահայ ականջներու՝ աղբահաւաքման դրութիւն ձեւը բաւական հաչա կը հնչէ»...:

– Հոս ալ կարեւորը բութն է:

×

Եգիպտահայ ««Արեւ»ին մէջ կը կարդանք. «Կոկանեան սրահի փինկ – փոնկի խումբը խլեց «Սուրբի Բրուտեան» չափ-ներն բաժակը»...

– Սուիթի–ն առեւանգուած...

Մինչ Ամերիկայի «Պայքար» օրաթերթը կը ծանուցանէ.–

« Mardirossian Funeral Home ».
— *Home, sweet home...*

Նոյն «Պայքար»էն, 16 Յունուար 1981–ին, սա յօդուածը. «Միշտ մտածեցէ՛ք քաղցկեղի մասին....

– Ուրիշ բան ըրած չունիմ:

ԽԵԼՕՓ ԶԱԼՕ

ՏԱՃԱՏ ՊՕՂՈՍԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻԻ

ՏՔՆՈՒԹԻԻՆ ԵՒ ՃԻԳ

«Յառաջ» մեր վեթերան ընկերոջ՝ Տաճատ Պօղոսեանի մահուան դոյժը հաղորդելով, իրաւամբ կը հաստատէր, թէ «Տաճատ Պօղոսեանի մահով, հին սե-բունդի ականաւոր դէմքերէն մէկը եւս կ՛անհետի, դէմքեր, որոնց կատարած դերը մեր գաղութներու ազգ. կեանքին մէջ ճակատագրական եղած է»: (*)

×

Պարզ, այլ յստակ պարբերութիւն մը, քանի հանրային ծառայութեան, նուի-րումի լման տարողութիւնը կը ցուցադրէ: Աչխատանքի, աքնութեան եւ ճիգի ամբողջական տենդին պատկերացումը կը կատարէ: Եւ, անկասկած, ափիւռքեան մեր «պատմութեան» մէջ, մեր ողբայ-եալ ընկերոջ եւ իր նմաններուն դերը կը մնայ կարեւոր, եթէ ոչ հիմնական:

Արդարեւ, կը բաւէ միայն յիշել, թէ ան չորս տասնամեակներ չարունակ, իր իսկ ջանքերով լոյս ընծայեց Բաֆֆիի օ-րացոյցը, որ ըծախնդիր աչխատանքի մը արգասիքը հանդիսացաւ, տարիէ տարի երկարող օղակներով: Օրացոյցեր, որոնց «հաւաքածոն» իրենց թուականներու մատնանչումներով, յիչատակելի դէմքե-րու կենսագրականներով, գրական-պատմագրական արձանագրութիւններ-րով, սահմանուած են մնալու այլապէս չահեկան, իրրեւ առաջադրութիւն եւ գործ: Այսինքն՝ ճիգ եւ վաստակ:

Տաճատ Պօղոսեան, որ ժամանակ մը վարեց Ալիք օրաթերթին, – նաեւ այլ թերթերու, – խմբագիրի պատասխանա-տու պաշտօնը, սկիզբէն իսկ ի յայտ բե-րաւ նախաձեռնարկ ոգի: Եւ անոր հե-տաքրքրութեանց սահմանը տարածուեցաւ զանազան երեսներու վրայ: Հիմը դրաւ Արաքս մանկա-պատանեկան մատենա-չարին, Թեհրան: Տանեակի հասնող գրքոյկներ՝ սահմանուած մանուկներու, իրենց գունատիպ եւ պատկերազարդ է-ջերով եւ հայ մանկագիրներու ըս-տեղծագործութիւններով, ընթերցա-սիրութեան եւ գրասիրութեան աւիշը ներարկեցին նորածիլներուն մօտ:

Յատկապէս կ՛ուզենք ընդգծել տարե-գիրքերու հրատարակութեանց մէջ անոր թէեւ կարճ, – երկու թիւ, – բայց յատ-կանչական աչխատանքը:

Թիւով եւ որակով նկատելի եղան հա-յերէն տարեգիրքերու եւ տարեցոյցնե-րու հրատարակութիւնը մեր իրականու-թեան մէջ: Մասնաւորաբար, արեւմտա-հայ հատուածին մօտ: Պոլիս անցեալին իր քայլը նետեց: Շարժումը չարունակ-ուեցաւ յետագային նաեւ արտասահ-ման: Դեռ ուսումնասիրելի էջ մը կը մը-նայ այս բնագաւառը: Այսուհանդերձ, կարգ մը լրոզութիւններ եւ հաստա-տումներ կարելի կը թուին ներկայիս: Այսպէս, իրենց ինքնատիպ եւ այլապէս հարուստ բովանդակութեամբ աչքառու կը մնան, բնականաբար, Թէոդիկի «Ա-մէնուն Տարեցոյց»ները, 1907–էն մինչեւ 1928: Թէոդիկ, Պոլսոյ մէջ այս ուղղու-թեամբ նոր ճամբայ մը բացաւ, կա-րելի է անվարան ըսել՝ նոր դպրոց մը հիմնեց, որմէ ներչնչուեցան յետնորդ-ները: Մասնաւորաբար, երբ նկատի ու-նենանք, թէ Թէոդիկ իր գործը չարու-նակեց արտասահման, Փարիզ: Ուրեմն՝ չարժումը ծաւալեցաւ նաեւ դուրսը, հոս թէ այլուր:

Տարեգիրքերու յատկանչական նուա-ճումներէն մէկը պէտք է նկատել անկա-կած, Ց. Ճ. Սիրունիի եւ Դանիէլ Վա-րուժանի միացեալ խմբագրութեամբ 1914–ին հրատարակուած «Նաւասարդ» գրական եւ գեղարուեստական տարե-գիրքը, չուրջ 350 էջ, պատկերազարդ եւ ճոխ բովանդակութեամբ, Ս. Փրկիչ Ազգ. Հիւանդանոցին «Ընդարձակ տարեցոյց»ը, իր հին (Ա. հատորը 1900–ին) եւ նոր (Ա. թիւը 1925) շրջաններով: Սուրէն Պար-թեւեանի «Եղիպտահայ տարեցոյց»ը, Ա. տարի, 1914, Ս. Վրացեանի խմբագրու-թեամբ լոյս տեսած «Հայրենիք տարե-գիրք, – ոսկեայ էջերը», Պոսթըն Ա. տա-րի, 1943, «Համազգայինի» տարեգիրքե-րը, խմբագրութեամբ Գ. Իփէկեանի, Պէյրութ Ա. տարի, 1936, Կարօ Գէորգ-եանի այնքան չահեկան «Ամէնուն տարե-գիրքը», որ 1954–էն մինչեւ 1967 – 68 միացեալ թիւը, Թէոդիկի դպրոցին ժա-մանակակից դիմագիծը ստացաւ իր այ-լազան երեսներովը:

Այս չարժումին մէջ, – չարքը պարզ է, թէ ամբողջական չէ, – իր առանձնայա-տուկ տեղը գրաւեց Տաճատ Պօղոսեանի աչխատասիրած Բաֆֆիի տարեգիրքը, դժբախտաբար, երկու տարի միայն:

Աչխատասիրողը, հետեւելով տարե-գիրքերու աւանդական ուղղութեան, նը-պատակ ունեցաւ հատորի մը էջերուն մէջ զետեղել ոչ միայն գաղութի մը տարե-շրջանի կեանքը, իր մանրամասնութիւն-ներով, այլեւ Սփիւռքին ու Հայաստա-նինը: Մասնաւորաբար հարուստ եղան պատմա-բանասիրական բաժինները, դիմաւորաբար կեդրոնացած իրանահայ անցեալին վրայ, այնքան ճոխ իր էջե-րով: Հարկ է ընդգծել այս կէտը, որով-հետեւ ուսումնասիրութիւնները եղան այլապէս չահեկան, բովանդակալից, աչ-խատակցութեամբը հարցերուն մասնա-գէտ գրիչներուն:

Գրական երկերու վրայ կատարուած սեւեռումները՝ ասոնց հրատարակու-թեամբ, հայ թէ պարսիկ, ստիճան մը ունէր բովանդակալից զարճուցին տա-րեցոյց – տարեգիրքին ղոյդ հատոր-ները:

Այն, ինչ որ կրնայ նկատուիլ կրկնակ յատկանչական, Տաճատ Պօղոսեանի պըր-կեր-ները մաս կը կազմեն Անդրկովկասեան Հանրապետութեանց: Ատրպատական՝ ո-րուն մայրաքաղաքն է Պաքու, Հայաս-տան՝ որուն մայրաքաղաքն է Երեւան եւ Վրաստան՝ որուն մայրաքաղաքն է Թիֆլիս: Հերթականօրէն ասոնց մէջ խօսուած լեզուները են՝ Ազերի, Հայերէն եւ Վրացերէն»: Ու այդպէս՝ քանի մը այլ բնորոչիչ մանրամասնութիւններ:

Ցանկարծ կը դադրեցնէ ուղղագրու-թիւնը ու անձամբ կը հաւաքէ թուղթե-րը, զորս կը սկսի աչքէ անցընել: Կանչ կ՛առնէ մէկ հատին վրայ: Կուկունեանին ձեռագիրն էր: Կը կանչէ պինք: Կուկուն-եան դանդաղ, բայց համարձակ կը մօ-տենայ ուսուցիչին, որ տեղէն ելլելով ապահակներու տարափ մը կը տեղացնկ աչակերտին, երեսին մերթ ընդ մերթ ընդհատելով հարուածները եւ սաստ-կելով՝ «Վրաստանը ղլխապերով կը գրուի, Վրացերէնը նոյնպէս ղլխապիր, իսկ այս ածականիդ համար (գրատախտակը ցու-ցընելով) ա՛ռ այս մէկն ալ: Մեր մէջ պա-տուհաս մի՛ակ վրացի դասընկերոջդ ազգու-թիւնը վիրաւորելուդ համար ա՛յս մէկն ալ առ հաչիւ, իսկ պատիժդ կը չարու-նակուի մէկ չաբաթ ուաքի կեցած դասըն-թացքի հետեւելով»: Ինչ եաք, հազիւ հանգարտած, ուսուցիչը բարոյախօսու-թիւն կ՛ընէ նչելով, որ սեւ ազգ պէտք է յարգանքով վերաբերի ուրիչ ազգի մը, մանաւանդ գրացի ազգի հանդէպ, յարգանք տածելով գրացի ժողովուր-դին նկատմամբ, փոխադարձաբար կը յարգուի ինք:

Տաճատ Պօղոսեան տարիներ դասաւան-դեց ազգային վարժարաններու մէջ, հայրենասիրական ոգի ներչնչելով մա-տաղ սերունդի մը, որ տարիներ չէր յա-ճախած հայկական դպրոց (Ռըզա Շահ, 1936ին, Թուրքիայէն վերադարձին ար-գիլած եւ փակած էր հայկական վարժա-րանները): Տարիներ անձնուիրութեամբ վարեց «Ալիք» օրաթերթի խմբագրու-թիւնը եւ 40 տարի հրատարակեց «Բաֆ-ֆի» պատի եւ գրպանի օրացոյցները, ո-րոնք փնտռուած էին ամէնուն կողմէ:

Իր զաւակէն կ՛իմանայի, որ մեր ու-սուցիչը երբեմն կարճ ժամանակով կը բացակայէր երկրէն մասնակցելու համար կարեւոր ժողովներու՝ Լիբանան, Եգիպ-տոս եւ այլուր:

Տաճատ Պօղոսեան էր նաեւ փնտռուած հեռատը մը, որ իր կուռ ու բովանդակա-լից ճառերով հայրենասիրական ջերմ շունչով կը վարարէր ունկնդիրներու հո-գիները:

Ցարգանք մեծ հայրենասէրի, նուիր-եալ դաստիարակի եւ ազգային անբասիր գործիչի յիչատակին:

ԿԱՑԾԱԿ ՓԱԼԱՆՃԵԱՆ
Պարչելոնա

ՍԻՐԵԼԻ ՈՒՍՈՒՑՉԻՆ՝
ՏԱՃԱՏ ՊՕՂՈՍԵԱՆԻ
ՑԻՇԱՏԱԿԻՆ

—o—

Բ. Աչխարհամարտի վերջին տարինե-րուն կ՛ուսանէի Թեհրանի Հայոց Ազգա-յին Դաստիանան վարժարանը: Նախակերք-թարանի վերջին դասարանն էի, կար-ծեմ: Մեր տեսուչն էր Ալեքսան Տէր-Վարդանեան, խիստ, պատկառանք պա-հանջող, տարեց անձնաւորութիւն մը: Հնչակեան կուսակցական մը, որ այդ տարիները ուրիչ կուսակցական ուսու-ցիչներու հետ, զանազան նահանգներէ ու գաստաններէ եկած ընտանիքներու զաւակ-ներէն սերունդ մը կը դաստիարակէր: Հայերէնի, Հայոց պատմութեան, հայ երաժչտութեան կողքին կը դասաւանդէր ան պարագերէն զանազան առարկաներ, մեծ մասամբ պարսիկ ուսուցիչներու կողմէ:

Մեր դասարանի հայերէնի ուսուցիչն էր Էմմիածնի Գէորգեան ճեմարանէն Տա-ճատ Պօղոսեան, խիստ բայց պատկա-ռաղու, հայրենասիրական ոգի ներչնչն-ղող, բարեսիրտ բայց ի հարկին կարգա-պահութեան հանդէպ ծայրայեղօրէն խստապահանջ: Մենք՝ պատանիներս, ա-ւելի երմէ կը քաչուէինք, քան տեսուչէն եւ պինք աւելի կը սիրէինք: Իր խոստու-թեան մէջ իսկ, մեր ուսուցիչը երբեմն – երբեմն հայրենասիրական գրուագներ պատմելով, դասերուն զուգընթաց հայ-րենասիրական մէկ – երկու երգեր սոր-վեցնելով հաճելի պահեր կը ստեղծէր մեզի համար: Ինք ալ կ՛երգէր մեզի հետ:

Օր մը, դասամիջոցէն եաք, զանգը հնչելուն պէս դասարան կը մտնենք ու ուաքի կը սպասենք մեր ուսուցիչին, ո-րուն մուտքով քար լռութիւն մը կը տի-րէ: Տաճատ Պօղոսեան պահ մը կը դառ-նայ դէպի գրատախտակ ու կը նկատէ անոր վրայ գրուածքի մը՝ «Էշ Վրացի»: Անմիջապէս կ՛առաջարկէ մեզի թուղթ մը առնել ու գրել, իրրեւ ուղղագրու-թիւն, հետեւեալը.

«Անդրկովկասի Հանրապետութիւն-ներ,

Աչխարհագրութեամբ ինկած է Սեւ եւ Կասպից ծովերու միջեւ, Արեւմուտքէն ու Արեւելքէն: Դէպի հարաւ՝ սահմանա-կից է Պարսկաստանի, հարաւ – արեւ-մուտքէն՝ Թուրքիոյ, իսկ հիւսիսէն՝ Եւ-րոպական Ռուսիոյ հարաւային մասին: Տարուան չորս եղանակները՝ ձմեռը եւ ամառը խիստ, իսկ գարնանը եւ աչունը բարեխառն, թէպէտ եւ կարճ: Երեք կր-

պըտումի, մէկտեղումի, ներկայացումի ակներեւ ճիգն է: Արդիւնք աքնաջան աչ-խատանքի: Մանաւանդ՝ իր ստանձնած պարտաւորութեան հանդէպ անոր ունե-ցած գիտակցութիւնը:

Անդուլ ճգնող, նուիրումով եւ զոհա-

բերութեան գիծով: Նկարագիրի կէտեր որոնք յիչատակելի կը մնան մեր վեթե-րան ընկերոջ անունին կողքին:

Եւ այս ճամբով նաեւ ուսանելի:

Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ

(*) Յունուար 23

ՕՐԱԳՐԻ ԷՋԵՐ

Գրեց՝ ՋԱՐԵՀ Մ. ՈՐԲՈՒՆԻ

Փարիզ, Կիրակի, 20 Մարտ, 1955. – Տիկին Միւրէն, Լիլին ու ես խոզի ձագի խորոված ուտելու գացինք Օաէօնի քովի ծանօթ ճաչարանը, որուն մասնագիտու-թիւնն է: Ինչ չունիմ, կէս օրէ ետք ե-րեք ժամ քնանալս արգելք կը հանդիսա-նայ, բայց այն միտքը թէ ժամը վեցին պիտի ելլեմ, զիս կը մղէ ի դին ամէն բանի քնանալու ու այդ ճիգն իսկ ամէն բան կը խանգարէ:

Կէս օրէն վերջ Զարոյենց գացինք: Այս այցելութիւնը տարիներ վերջ Հրանոյ – չին հիւանդութիւնը մարդոց հոգիներուն մէջ բացած մէկուսացումը, միտքս կը տանին խորհրդածութիւններու եւ քունս աւելի կը փախչի: Թերեւս գրելու այս ճիգս յոգնութիւն բերէ վրաս ու զիս քը-նացնէ: Հրանոյշն է այս տողերուն պատ-ճառը: Դժգոհ էին «Անի»ի մէջ երեւցած օրագրի էջերէս: Զարմանալի է որ մար-դիկ չեն հասկնար գրածիդ ճիշդ դրդա-պատճառը եւ ուրախանալու տեղ կը դժգոհին: Խոհանոցը ուղած էի նստիլ, ուր Պետրոս իր թերթին թղթակցութիւ-նը կ՛ընէր: Պատուհանը բացաւ խոհանո-ցին հոտերը ցրուելու համար:

– Եաքը կ՛ելլէ այս բաներն ալ կը գը-րէ:

Այո, ինչո՞ւ համար կը գրէ հիմա: Ո-րպէսզի Հրանոյշը զոհ ըլլայ, Պետրոսը չկարողացաւ ապրիլեան մանուկը թի-ւին համար բան մը գրել տալու: Հմայիչ է կեանքը Հրանոյշին մէջ, որ մահը եր-կու տարի թափառեցաւ մարմինը կոտ-րատելով, վտանգը վտարելով ու ամէնէն յուսահատականն անդամ ի տես անոր պիտի ուզէր սիրել կեանքը:

27 Մարտ, Կիրակի. – Ճաչարանը Տի-կին Միւրէն խօսք բացաւ Տիրուհի Զա-րափեանին իրեն տուած այցելութեան վը-րայ: Միչտ տրտունջ, միչտ դժգոհու-թիւն Անտրէ Մարսէլէն, որ պինքը լքած է:

– Չեմ հասկնար, կ՛ըսէ Տիկին Միւրէ, որ Անտրէ իր երիտասարդը կինը եւ երկու զաւակները ձգէ իրեն համար, մանաւանդ որ Փիզիքական առաւելութիւն ալ չու-նի:

– Բայց այդ տղեղ, ձանձրալի եւ խեն-թուկ աղջիկը աւելի տուաւ Անտրէին քան միւս երիտասարդը իր երկու զաւակնե-րով: Տիրուհին անոր տուաւ Նարեկի ան-հունութիւնը, հայ երաժչտութեան մաս-նակցութիւնը, որ նոր ներարկում մը տուաւ բանաստեղծ եւ երաժիչտ Անտրէ Մարսէլին, միայն թէ անկէ առնելիքը առաւ, ալ առնելիք չունի, կը նչանակէ թէ ալ լմնցած է հէքեաթը: Տիրուհին կը մնայ համակերպիլ խորհելով որ ծեր ու տաղանդաւոր աղջիկ՝ Անտրէին մի-ջոցով Ֆրանսային ճանչցուց հակայ մը որ Նարեկացին է: Այդ է իր ամբողջ կեանքին հպարտութիւնը, որ իրականին մէջ, ինչպէս շատ մը բաներու մէջ, պա-տահականութեան կը պարտի մարդ: Եթէ այսպէս եղած չըլլար եւ կամ եթէ այս-պէս եղած պիտի չըլլար եւ կամ այսպէս պիտի ըլլար: Անտրէն է որ անցաւ Զա-բաւիեանին կեանքին մէջէն եւ իմաստ մը, տեւողութիւն մը տուաւ անոր:

22 Օգոս. 1959, Սէնդ Մաոի սիւռ մէռ-(Դիչեր) Իրիկունը վարպետը դասախո-սութիւնը ինձի յանձնեց: Երկու օր է կը դասախօսեմ, բայց այս իրիկուն կարդը իրն է, տուաւ ինձի բացակայելու պատ-րուակ մը: Այսպէսով վախտատ տունը (ճամբարէն) դէպի Բոռնիք միասին անցը-նելու համար իրիկուն մը ճաչարանի մը մէջ ձկնեղէն ճաչակելով:

Արդարեւ ձկնորսներու այս ծովախոր-հին մէջ ճուկերը ուղղակի զգլխիչ են:

22 Օգոս. Սէնթ մաոի. – (Խաբեայ) Սահակեանին հետ միասին այս տարուայ հաչիւներուս ընդհանուր գումարը 350·000 Ֆրանքի կը հասնի: Այս վերջին դուռն է, ալ ազատած եմ զգայնականու-թիւններէ: Եթէ մէկը աչքերուս առջեւ մեռնի օդնութեան ձեռք չեմ երկարեր այլեւս ոչ մէկ կերպով եւ այս ոչ թէ մերժելու համար, այլ՝ ուղղելու համար ինքզինքս: Ես ամէն բանէ առաջ ինքզինքս պիտի չինեմ, բոլորովին նոր մարդ մը, մարդը:

(Շար. 11)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՀԱԳՆԻ ԱՆՎԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մեր օրերուն Նախկին Տաճարպետ ու Տաճարաշէն Մայրապետ Տէրունի Վարդապետ Ամիրեան Ալեքսանդրեցի մը կ՚ըսէ, որ «Ամէն ինչ ունի իր սկիզբն ու վախճանը, միայն Աստուածային Էութիւնը անսկիզբն ու անվախճան է»։ Ասոնք ալ ունին իրենց պատմութիւնը, իրենց ծագումն ու զարգացումը։ Ուսումնասիրելով զանոնք՝ կրնանք հասկնալ ներկան ու կանխատեսել ապագան։ Ուրեմն, ինչպէ՞ս ծագեցաւ Ուսուցչական Ինստիտուտը։ Ահա հարցումը, որ կուգայ մեզի ծնունդ տալ այս տողերուն։

Ինչպէս ամէն ինստիտուտ, ան ալ ունի իր նախապատմութիւնը։ Ան ալ ունի իր հիմնադիրները, որոնք ամէն ինչէ առաջ ունեցած են ուսուցչական կոչում։ Ան ալ ունի իր ուսուցչական կազմը, որ ամէն տարի կը նորոգուի։ Ան ալ ունի իր ուսանողները, որոնք ամէն տարի կուգան ու կ՚երթան։ Ան ալ ունի իր ուսումնական ծրագիրները, որոնք ամէն տարի կը փոխուին։ Ան ալ ունի իր ուսումնական ձեռնարկները, որոնք ամէն տարի կը նորոգուին։ Ան ալ ունի իր ուսումնական ծրագիրները, որոնք ամէն տարի կը փոխուին։ Ան ալ ունի իր ուսումնական ձեռնարկները, որոնք ամէն տարի կը նորոգուին։

Ինչպէս ամէն ինստիտուտ,

Տէր եւ Տիկին Ղազար Տէր – Գրիգորեան եւ զաւակները՝ Ժորժ, Անարէ եւ Միրիամ ինչպէս նաեւ ընտանեկան բոլոր պարագաները խոր ցաւով կը ծանուցա – նեն իրենց զաւկին եւ եղբօր՝

ԼԷՈՆ ՏԷՐ – ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Փետր· 16–ին, 50 տարեկանին, Քոլոմպ:

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Հինգշաբթի, Փետր· 19, ժամը 13·45–ին Փարիզի Ս· Յովհ· Մկրտիչ Եկեղեցին, ուրկէ մարմինը կը փոխադրուի Պուա – Քոլոմպի գերեզմանատունը:

Մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Սուրէն Մուրատեան եւ զաւակը՝ Տիգրան, Ձիպօղեան, Մահաքեան, Քէօ – սէեան, Սալամէ եւ Տէր – Մովսէսեան ընտանիքները իրենց սիրելի կնոջ, մօր, զաւկին եւ քրոջ, տարաբախտ՝

ՊԵՐՃՈՒՀԻ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ հոգեհան – դըստեան պաշտօն կատարել կու տան կիրակի, 22 Փետրուար, յաւարտ Պատարագի, Փարիզի Ս· Յովհաննէս – Մկրտիչ Եկեղեցւոյ մէջ:

—×—

Այրի Տիկին Մարի – Ժանն Խաչատուրեան, Տէր եւ Տիկին Խոսրով Կիրակոս – եան եւ զաւակը՝ Վահէ, Օր· Անի Խաչատուրեան, Օր· Մեղրիկ Խաչատուր – եան, Պ· Ժան – Փիէռ Սէֆէրեան, Տէր եւ Տիկին Մարտիրոս Խաչատուրեան, Տէր եւ Տիկին Խաչիկ Արթինեան կը ծանու – ցանեն թէ՝ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի այս կիրակի, Փետրուար 22, ժամը 11–ին, Ալֆորվիլի Ս· Պօղոս – Պետրոս Եկեղեցին, իրենց ամուսնոյն, հօր, մեծ – հօր, զաւկին եւ փեսային՝

ԱՆԴՐԱՆԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ:

Ի դիտութիւն՝ ողբացեալին յիշատակը յարգողներուն:

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Պուլվար Օսմոյի Ս· Յակոբ Եկեղեցւոյ Թաղականութիւնս իր խորին ցաւակցու – թիւնները կը յայտնէ Թաղին եւ եկե – ղեցւոյս սիրեցեալ հոգեւոր հովիւի Նշան քհնյ·ի եւ երիցկին Գուլումճեանի եւ զա – ւակներուն, իրենց մօր եւ մեծ մօր Տի – րամայր Լուսիա Գուլումճեանի մահուան առթիւ: Շնորհակալութեամբ ստացած նոյն առթիւ· – Այրի Տիկին Պէրպէրեան, – Տէր եւ Տիկին Տիգրան Ղազարեան 100– ական Ֆ· Երիցկին Գուլումճեան, Տէր եւ Տիկին Մարգարեան, Տէր եւ Տիկին Նուպար Սարօղլանեան, Այրի Տիկին Կի – լիզար Մուրատեան, Տէր եւ Տիկին Սի – վաճեան, Տէր եւ Տիկին Գազազեան, Տէր եւ Տիկին Կարօ Յովսէփեան 50–ական Ֆ· Այրի Տիկին Ա· Յօղոսեան, Այրի Տի – կին Անթառամ Ժամկոչեան 30–ական Ֆ·, Տէր եւ Տիկին Սահակ Յարութիւնեան, Օր· Խոշիկեան, Տէր եւ Տիկին Գալան – տար, Տէր եւ Տիկին Մարկոսեան Գառ – նիկ, Տէր եւ Տիկին Սարաճեան 20–ա – կան Ֆր·:

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Ընկ· Կարապետ Յովսէփեանի մահուան առթիւ իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալ ընկերոջ ընտանե – կան բոլոր պարագաներուն եւ փոխան ծաղկեպսակի՝ իր յիշատակին «Յառաջ»– ին կը նուիրեն 470 Ֆ·, հետեւեալ ընկեր – ները·– Յակոբ Պէրպէրեան, Շաւարշ Խա – չատուրեան, Տիգրան Զէքիեան, Միսաք Միրզէ, Յովհաննէս Հաբէլեան, Մամբրէ Տէր – Պետրոսեան, Նշան Պետրոսեան, Կարապետ Փափազեան, Կարապետ Յո – վակիմեան:

Ի ՅԻՇԱՏԱԿ

Տէր եւ Տիկին Մկրտիչ Գազանճեան 100 Ֆ· կը նուիրեն «Յառաջ»ին, Համ – բարձում Վէլէտեանի մահուան առթիւ:

Ս· ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Կիրակի օր, Փետրուար 22, Ղեւոնդ – եանց Գահանայից յառաջիկայ տօնին ա – ռիթով, Փարիզի Ս· Յովհաննէս – Մը – կըրտիչ Մայր Եկեղեցւոյ մէջ ժամը 10–ին կը մատուցուի եպիսկոպոսական հանդիսաւոր բազմաձայն Պատարագ:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԳԻՒՏ ԵՊՍ· ՆԱՅԳԱՇԵԱՆ

Ի ժամ Պատարագի կը կատարուի մա – նաւոր Հոգեհանգիստ Փարիզի եւ շրջանի եկեղեցիներուն մէջ ծառայած վարձան – եալ առաջնորդներու եւ հոգեւորականնե – րուն համար:

LYNE DOURIAN

DE L'OPERA

Chantera des œuvres de
REYNALDO HAHN
et des

Mélodies Arméniennes

au Tryptique

Le Mercredi, 25 Février, à 20h.45

SALLE ROSSINI
6, Rue Drouot

Invitations sans taxe à l'entrée de la salle.

○ *Pour la première fois à l'occasion de la 6ème semaine mondiale du Tourisme qui a lieu au Palais des Congrès* (Porte Maillot)

DU 14 AU 22 FEVRIER 1981

OPTIMA TOURS

Tient son Stand « ARMENIE »

Venez nombreux au:
« *Stand OPTIMA — n° 38, niveau n° 1, hall T*».

Pour chaque inscription pendant cette période, au stand une réduction exceptionelle sera accordée.

ՄԱՆՈՒՇԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՄԱՆՈՒՇԵԱՆ խումբի վնդակահարեալ – ներու գերեզմաններուն աւանդական այ – ցելութիւնը 22 Փետրուար, կիրակի ա – ռաւօտ:

Ժամադրավայր, Փորթ – տը Շուազի մէթրոյի սրճարանի առջեւ ժամը 10–էն սկսեալ: Թափօրը առաջնորդուած ծաղ – կեփունջերով, դրօշակիրներով ու մի – ջազգային դիւանագիտական ու Ֆրան – սական իշխանութեանց ներկայացուցիչ – ներով դէպի Իվրիի գերեզմանատան ճամբայ կ'ելլէ ժամը 10·30–ին:

Սիրով կը հրաւիրուին ազատութեան, Ֆրանսայի ազատագրման ու հակաֆա – շիստ պայքարի հերոսներու – հայ եւ բոլոր ազգերու պատկանող – յիշատակը յարգողները:

Ա. Ճ Ե

Նոյն օրը, կիրակի 22 Փետրուար ժամը 11–ին, Պուշ – տիւ – Ռոնի Օպանցը քա – ղաքին մէջ – Մարսէյլի արուարձան – բացումը կը կատարուի ՄԱՆՈՒՇԵԱՆ պողոտային, մասնակցութեամբ քաղա – քին երեսփոխան – քաղաքապետ Պ· Յա – մոն ԳԱՐՍԻՆԻ ու քաղաքապետական Խորհուրդի անդամներուն, ինչպէս նաեւ Ֆրանսացի եւ հայ անձնաւորութեանց:

Ներկայ կ'ըլլան Մարսէյլի, Լիոնի, Կըր – նոպլի, Նիսի եւ այլ քաղաքներու հայ նախկին Ռազմիկներ ու Դիմադրական – ներ: Փարիզէն նախկին Ռազմիկներու եւ Դիմադրականներու պատուիրակութիւն մը ղեկաւորութեամբ Պ· Գ· ՊԱԳԼՐՃԵԱ – ՆԻ կը մասնակցի արարողութեան:

Օպանյի ինչպէս նաեւ Մարսէյլի եւ շրջանի մեր ազգակիցները կը հրաւիր – ուին իրենց ներկայութեամբ բարձրացը – նել հայութեան համար պատուաբեր այս արարողութեան հմայքն ու արտայայտել իրենց համակրանքը Օպանյի քաղաք – պետական խորհուրդին:

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ
ՀԱՅ ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԻԿՆԵՐՈՒ
ՄԻՈՒԹԻՒՆ

Imprimé sur les presses du Journal «Haratch» 83, rue d'Hauteville 75010 Paris
Commission paritaire : N° 55935

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Շաւիլի Ս· Գրիգոր Լուսաւորիչ Եկե – ղեցւոյ հոգաբարձութիւնը ստացած է հե – տեւեալ նուէրները, Ֆիլիփ Օհաննէսեանի մահուան առթիւ·– Տէր եւ Տիկին Վըր – թանէս Թադէոսեան եկ· եւ զպրոցին հա – մար 200, Տէր եւ Տիկին Յակոբ Այն – եան եկ· համար 100, Տէր եւ Տիկին Գնէլ Կօշկարեան, Տէր եւ Տիկին Գեղամ Պա – րոնեան, մի Ոմն 50–ական, Տիկին Հռիփ – սիմէ Նազարեան 20 Ֆ·:

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Ի յիշատակ Ֆրանսահայ Կապ· Խաչի Փարիզի մա – նաճիւղը, հաճոյքը ունի պատուելու, ի վաստակաւոր ընկերուհիներէն՝ ԱՏՐԻՆ ԳԱԶԱՆՃԵԱՆը, (Արժանթինէն), եւրո – պա իր շրջապտոյտ առիթով:

Կը հրաւիրուին բոլոր ընկերուհիները համակիրները եւ բարեկամները:

Կիրակի 22 Փետրուար կէսօրէ վերջ ժամը 16–ին, Մշակոյթի Տան մէջ:
17, *Rue Bleue, Paris 9e*

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻԻՆ

—o—

կազմակերպութեամբ՝
ՆԻՍԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԻ
Փետրուար 22, Կիրակի, ժամը 16–ին
Հայ Մշակութային «Օշական» սրահը
183 *bis, Bd. de la Madeleine — NICE*
Կը դասախօսէ ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ
Ն է ւ թ՝
«ՍՓԻՒՌՔԸ ԵՒ ԱՆՈՐ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԺԵՒՈՐՈՂ ԱԶԴԱԿՆԵՐԸ»
Մուտքը ազատ է:

ԿՈՉ

«Անի» ԵՐԳԱՀԱԽՄԻՒԹԻՒՆ

Իսկ – լէ – Մուլինոյի «Անի» երգա – խումբը, սիրով կ'ընդունի նոր անդամ – ներ եւ անդամուհիներ: Երգի փորձերը տեղի կ'ունենան ամէն Շաբաթ երեկոյ, ժա – մը 20·30–ին, Իսկի Ս· Մարիամ Աստուա – ծածին եկեղեցւոյ սրահը՝
6, *Av. Bourgain - Métro: Mairie d'Issy*

RESTAURANT ARMENIEN

CHEZ HAGOP

—×—

9, *RUE DU NIL*, 75002 — *PARIS*

TEL. 296.37.41

—×—

SPECIALITES ARMENIENNES

DINER MUSICAL

★ **COMMUNIONS** ★ **MARIAGES** ★ **BANQUETS** ★

—×—

FERME Le DIMANCHE et LUNDI SOIR

PELERINAGE A JERUSALEM

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԵՐՈՒՍԱՂԷՄ

DU 20 AU 27 AVRIL 1981

Avec la participation du Père Norvan ZAKARIAN

Départs: PARIS, LYON et MARSEILLE.

Visites et cérémonies religieuses à Jerusalem,
et Circuit comprenant: Mer - Morte, Jericho, Tibériade, Nazareth, St. Jean d'Acre, etc....

PRIX: 3990 *F.*

(Demandez-nous le programme détaillé).

Renseignements et Inscriptions:

A PARIS:
LEVON BAGHDASSARIAN
SABERATOURS
3, Rue de l'Arrivée
Imm. CIT - 7e étage
75749, Paris — Cedex 15
Tél.: (1) 538. 67. 47

A LYON:
VAROUJAN SARKISSIAN
SEVAN VOYAGES
48, Cours de la Liberté
69003 — LYON
Tél.: (7) 860. 13. 66

A MARSEILLE:
JACQUES CHELELEKIAN
WASTEELS
87, La Canebière
13001 — Marseille
Té.: (91) 95. 90. 12

ՈՒՐԲԱԹ
ՓԵՏՐՈՒԱՐ
20
VENDREDI
20 FÉVRIER
1981

LE NUMERO 2 F.

ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE OCCIDENTALE
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
Directrice: ARPIK MISSAKIAN

Tél.: 770.86.60 — C.C.P. Paris 15069-82 E
Fondé en 1925 — 51027317 A R.C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա՝ Տար. 300 Ֆ. - Վեցամսեայ՝ 160 Ֆ.
Արտասահման՝ Տար. 350 Ֆ. - Հատը՝ 2 Ֆ.

56ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 14.847 — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — 56e ANNÉE — No 14.847

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԼԻԲԱՆԱՆ

ԵՐԿՈՒ ՀԱՅ ԶՈՀԵՐ

—o—

Ձիւդ երէկ կ'անդրադառնայինք Պէյրութի կացութեան վատթարացման եւ Սոտեքոյի անցքին վրայ, արձակագրին նոր «գործունէութեան» հետեւանքով: Փետր. 12-ի «Ազդակ»էն կ'իմանանք թէ այդ վատթարացման առեն, «կորսուած» գնդակի մը զոհ գացած է Յակոբ Տէմիրճեան, 54 տարեկան: Սոտրւ Պէյրութի մեր պաշտօնակցին տուած մանրամասնութիւնները այդ մէջադէպին առթիւ. –

«Պէյրութի հրապարակ – Սոտեքոյի վրայ, ապահովութեան կացութիւնը երէկ (Փետր. 11) երեկոյեան ժամը 5-ին անգամ մը եւս վատթարացաւ անակնկալօրէն: Մայրաքաղաքի երկու չբը – խնները իրարու կապող «բազկերակ»ին երկու կողմերուն միջեւ ծայր տուած արձակագինութիւն մը ու անոր ընկերացող կիսածանր զէնքերով հրացանաձգութիւնը շարունակուեցաւ աւելի քան մէկ ժամ, որուն ընթացքին սպանուեցաւ «արեւմտեան չբլան»էն դէպի «արեւելք» ուղղուող անձ մը՝ Յակոբ Տէմիրճեան, եւ վիրաւորուեցան երկու կիներ:

«Աւելի ուշ, ինքնաշարժներու երթեւեկը վերսկսաւ նոյն պիծին վրայ, սակայն ժամը 8-ին, քանի մը ռումբեր լինկան Սոտեքոյի չբլանին վրայ: Ծանրօրէն վիրաւորուեցան 2 անձեր, որոնք փոխադրուեցան հիւանդանոց:

Անցեալ չաբաթավերջէն ի վեր, գրեթէ առօրեայ յաճախակիութեամբ չբլան մէջ յետմիջօրէին տեղի ունեցած արձակագինութիւնը, չաբաթա – կիզրէն ի վեր արդէն իսկ խլած էր քանի մը վիրաւորներ:

«Սոտեքոյի այս մէջադէպը կը զուգադիպէր երկրի զանազան չբլաններուն մէջ ապահովութեան կացութիւնը մտահոգող կէզ կերպով խախտող այլ դէպքերու: Արդարեւ, Թրիփոլիի մէջ, առաւօտուն զինեալ ընդհարում մը տեղի ունեցած էր Ա. Զ. ուժերու եւ կարգ մը զինեալ տարրերու միջեւ, խլելով քանի մը սպանեալ, իսկ գիշերուան ընթացքին, Հարաւային Լիբանանի կարգ կարգ մը չբլանները քիրեա դարձած էին իսրայէլեան յարձակումներու:

×

«Ազդակ»ի Փետր. 14-ի թիւէն ալ կ'իմանանք թէ արձակագէնի մը փամփուշտով վիրաւորուելէ եառք, Փետր. 11-ին, մեռած է Տիկին Նորա Կուրտիկեան (ծնեալ Եաղճեան):

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՆԱԽԱՐԱՐԱՑ ԽՈՐՀՈՒՐԴԸ 140 մլ. – Լոցներ ձեռք առաւ դիւրացնելու համար վարչական ձեւակերպութիւնները: Ասոնք կը վերաբերին առաւելաբար ընկերային ապահովութեան, ընտանեկան նպաստներու, տարեց անձերու դիմումներուն, գործաւէրերու յայտարարութեանց:

ՖՐԱՆՍԱ. 8 միլիառ 400 միլիոն բաց արձանագրած է Ճունուարին, արտաքին առեւտուրի մէջ ինչ որ մրցանիշ մըն է: Արդարեւ 1973-էն ի վեր այս դումարին չէր հասած բացը: Ճանցաւորը, ան – շուշտ, կրկին քարիւղն է:

ԹՈՒՆՈՒԶԻ նախարարապետը Փարիզ հասաւ, ուր երեք օրուան պաշտօնական այցելութիւն մը կը կատարէ: Այս առթիւ երկու երկիրներու կառավարութիւնները կ'ուզեն նոր տարողութիւն մը տալ իրենց գործակցութեան:

ՓԻԼԻՊՊԻՆԵՆԵՐՈՒ մէջ Պապը սըրբացման արարողութիւն մըն ալ կատարեց ինչ որ առաջինն է՝ Հռոմէն դուրս: Սըրբացումը կը վերաբերէր Դոմինիկեան առաքելութեան մը 16 մարտիրոսներու, որոնք անէացան 1633-ին Նակազաքի (Ճափոն) – 9 Ճափոն, 4 Սպանացի, մէկ Իտալացի, մէկ Ֆրանսացի մէկ Փիլիպպեցի: Ցովհ. Պօղոս Բ. ճառերուն մէկ կուն մէջ, զգուշացուցած է աղքատները փորձութենէն գաղափարականներու, որոնք «միայն նիւթական արժէքներ կ'առաջարկեն»:

ՄԻԱՑԵԱԼ – ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ նորընծաիր նախագահը տնտեսական վերականգնումի ծրագիր մը ներկայացուց, ուր բոլոր ծախքերը կը պակսին բացի՝ պաշտպանութեան պիւտճէի ծախքերէն: Ռիկըն ընդգծեց նաեւ 35 հազար բարձրաստիճան պաշտօնեաներու աշխատավարձի նահատուած յաւելումը:

ԼԵՀԱՍՏԱՆԻ մէջ ուսանողներու անկախ Միութիւնը պաշտօնապէս արձանագրուեցաւ: Այս կարգադրութիւնն ալ կը ձգտի հանդարտեցնելու մթնոլորտը: Ասիկա կ'ամրապնդէ նաեւ կուսակցապետ Կանիայի դիրքը իր «զինակիցներուն» նկատմամբ:

ՔՈՒՐՔ ՄԱՄՈՒԼ

«ԿԱ'Մ ՀԱՅԱՍՏԱՆ, ԿԱՄ՝ ԳԵՐԵԶՄԱՆ»...

—o—

ԽՄԲ. – Ինչպէս գրած էինք երէկ, Փետր. 17-ին, «Թէրճիման» սկսած է հրատարակել յօդուածաշարք մը «Հայկ. ահաբեկչութեան ծնունդ տուող պատճառները» ընդհանուր խորագրին տակ: Առաջին յօդուածը, որու գլխաւոր մասերը կուտանք այսօր եւ վաղը կը կրէ «կա'մ Հայաստան, կա'մ գերեզման» ենթախորագիրը: «Խոստմնալից» յօդուածաշարք մը, որ կը սկսի Ֆաթիհ Սուլթան Մէհմէտէն...: Կը թուի թէ Հասան Ֆէհմի Լոհանլը հիւմուրէ ալ գերծ չէ ըլլար: Թուրքիոյ մէջ Հայերու գերեզմանները ուրեւ մասին...: Ճիշդ է որ որեւէ տեղ Հայը այդքան գերեզման չէ ունեցած...: Բայց բուն հարցը այլ է: Նման յօդուածներ կրնան իրենց բովանդակութեամբ նորութիւն չբերել բայց կը պարզեն երեւոյթ մը՝ այսքան զբաղելով Հայերով, Թուրքերը, խոստովանած կ'ըլլան որ հայկ. հարց մը կայ, ուզեն կամ չուզեն...:

×

«Հայկ. Վրէժխնդրութեան Մարտիկներ»... Այսպէս է որ կը կոչեն իրենք զիրենք: Մինչդեռ, մարտիկը՝ քալէ է, դէմ – դիմաց կը կռուի. կռնակէն չի զարներ: Քաղաքակիրթ աշխարհի մէջ իրենց ըրածներէն ամօթ չզգացողները, Թուրք Պետութեան արտասահմանի ներկայացուցիչները զարնելու պահուն՝ արդեօ՞ք իրենց անցեալին բնաւ չեն մտածեր:

«Ֆաթիհ Սուլթան Մէհմէտի 1453 թ. Կ. Պոլիսը գրաւած օրէն, մինչեւ 1980 թուականի վերջը անցած – զարձած իրողութիւնները հոս պիտի ցուցաբերեմ: Դառն իրողութիւններ...

×

«Ֆաթիհ Սուլթան Մէհմէտ, Կ. Պոլիսը գրաւելէն եառք, իր յօժար կամքով՝ Ցունաց Պատրիարքարանը ազատ ձգած եւ յատուկ իրաւասութիւններ չնորհած է: Փոքր Ասիոյ (Անատոլու) մահմետական տարրերուն միջեւ իրրեւ փոքրամանութիւն ապրող Հայերու իրաւանց եւ չահերուն պահպանման համար ալ՝ Կ. Պոլսոյ մէջ Հայոց Պատրիարքարանը հիմնեց: Ցոյներու բաշխուած իրաւասութիւնները՝ Հայերուն ալ չնորհուեցաւ: Անատոլուի մէջ ապրող Թուրքերու եւ Հայերու անձնական յարաբերութիւնները այնքան լաւ էին, որ պիտը բնակող Թուրք մը երբ իր առեւտրական գործերուն համար քաղաք կ'երթար՝ իր ընտանիքին իրաւունքին ու պատուին պահպանութիւնը Հայ դրացիին կը վստահէր: Եւ նմանապէս, Հայերն ալ նոյն վստահութիւնը իրենց Թուրք դրացիներուն հանդէպ ցոյց կուտային: Անատոլուի, Ռումէլիի եւ Կ. Պոլսոյ մէջ Հայերէն խօսող ոչ մէկ Հայ կար: Բոլոր դպրոցներու մէջ Հայկ. տառերով Թրքերէն կ'ուսուցանուէր. եկեղեցական արարողութիւնները ալ Թրքերէնով կը կատարուէին: Ամէնէն բարձր մակարդակի պաշտօններու մէջ իսկ, Հայերը՝ Օսմանեան կայսրութեան ամէնէն հաւատարիմ հպատակներն էին: Եւ եթէ, ցայսօր, Հայերը յաջողած են իրենց հաւատքը պահել ապա այդ՝ Օսմանեան Փատիշահներու կողմէ իրենց տրուած իրաւասութիւններու չնորհիւ է:

Իրարու այսքան մօտ երկու ժողովուրդներ, նոյն կայսրութեան մէջ ապրելով

ԹՐՔԱՊԱՏՈՒՄ

ԱՆԳԱՐԱ Կ'ՈՒԶԷ ՋՆՋԵԼ ՈՒՍՈՒՑՉԱՑ ՀԻՄՆԱՐԿԸ

—o—

Պոլսոյ թերթերը (Փետր. 13) հետեւ – եալ լուրը կը հաղորդեն, որ անգամ մը եւս ցոյց կուտայ թրք. իշխանութեանց սեղմումները հայ փոքրամասնութեան նկատմամբ. –

×

ՈՒՍՈՒՑՉԱՑ ՀԻՄՆԱՐԿԻ ԴԷՄ ԴԱՏ ՎԱԳՉՖՆԵՐՈՒ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

Ցաւով կը տեղեկանանք թէ Վագըֆներու Ընդհ. Տնօրէնութիւնը դատ բացած է Ուսուցչաց Հիմնարկի դէմ, պնդելով որ յիշեալ Հիմնարկին գոյութիւնը դէմ է 903 թիւ օրէնքին եւ այդ պատճառաւ ալ պէտք է ջնջուի այդ հաստատութիւնը:

Այս դատին առաջին նիստը տեղի ունեցաւ Փետր. 12-ին 6-րդ ՀիմնականԱտեանին առջեւ: Մեր քաղած տեղեկութիւններուն համաձայն, Հիմնարկի փաստաբանները իրենց բողոքն ու պաշտպանութիւնը ներկայացուցին դատարան եւ նիստը յետաձգուեցաւ 30 Մարտին:

Վագըֆներու Տնօրէնութեան կողմէ բացուած դատը անհասկնալի է. Ուսուցչաց Հիմնարկը 1965-ին ընդունուած էր դատարանի որոշումով: Թէեւ 1967-ին եւած 903 թիւ օրէնքով քննուած էր անոր ալ կացութիւնը, սակայն Վագըֆներու Տնօրէնութիւնը առարկութիւն չէր ըրած եւ 1973-ին նոյն Տնօրէնութիւնը Պաշտօնաթերթի մէջ վաւերացուցած էր անոր գոյութիւնը: Աւելի ըլլալով, այդ թուականներուն հինգ այլ չէնքի պէս – կէնները վաւերացուցած էին Հիմնարկին ի նպաստ կտակներու հետեւանքով:

Հակառակ այս բոլորին, այսօր նոյն Վագըֆներու Ընդհ. Տնօրէնութիւնը կը պնդէ թէ Հիմնարկին գոյութիւնը դէմ է 903 թիւ օրէնքին: 903 թիւ օրէնքին յիշ – եալ յօդուածը հետեւեալը կը հրահան – գէ. –

«Կարելի չէ վաւերացնել այն Վագըֆ – ները, որոնք հիմնուած են օրէնքներու, բարոյականութեան եւ բարքերու, ինչ – պէս նաեւ ազգային չահերու դէմ, կամ քաղաքական որոշ նպատակով մը եւ կամ որոշ ցեղի մը կամ համայնքի մը ան – դամներուն զօրավիժ կանգնելու նպատակներով»:

903 թիւ օրէնքին վերոյիշեալ յօդուած – ծէն վերջ է որ Ուսուցչաց Հիմնարկի գոյութիւնը ապօրէն չէր նկատուած եւ պաշտօնաթերթին մէջ ալ հրատարակուած էր իր վաւերացումը:

հանդերձ, ինչո՞ւ այս վիճակին հասած են: Հայ ժողովուրդը երբեք խոհեմ չէ եղած եւ ասոր կամ անոր դրդուածքով՝ իր անդորրութիւնն ալ կորսնցուցած է: Բան մը կայ, զոր Հայերը երբեք չեն դադրած կրկնելէ. – «կա'մ Հայաստան, կամ՝ Գերեզման»: Ահաւասիկ, 500 տարիներու իրենց այս անմիտ յամառութեան հետեւանքով՝ ո'չ Հայաստան մը հիմնուած է, եւ ոչ ալ՝ իրենց գերեզմանները յայտնի են: Թուրքիոյ մէջ ապրող Հայերը, եթէ այսօր գերեզմաններ մը ունին, այդ ալ՝ իրենց խոհեմութեան չնորհիւ է:

«Պատմութեան էջերը եթէ քրքրելու ըլլանք, Հայերու որո՞նց կողմէ գրգռուած ըլլալը բացայայտ կը դառնայ»:

(Շար. 1)

ԱՐԱ ԵՆԻԳՈՄՇԵԱՆԻ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԶՈՒԻՑԵՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ ԱՌՋԵԻ

ԽՄԲ.– Ինչպէս գրած էինք (Փետր. 12 եւ Փետր. 17), Փետր. 9–ին տեղի ունեցած իր դատավարութեան ընթացքին, Արա – Ալէք Ենիգոմշեան ձայներիզի վրայ արձանագրած էր յայտարարութիւն մը – փրանսերէն – որ ունկնդրուեցաւ նիստին ընթացքին: Հոն, Արա կը բացատրէ ամփոփ գիծերու մէջ Հայկ. Հարցը եւ այն պատճառները, որոնք զինքը մղած են զինեալ պայքարի ուղին ընտրելու: Ցաջորդական երկու թիւով կու տանք գլխաւոր հատուածները.–

×

Անունս է՝ Արա – Ալեքսանդր Ենիգոմշեան:

Ձերբակալուեցայ Ժընեւ, 1980, Հոկտ. 3ի գիշերը, զուիցերական պատժական Օրինագիրքին թիւ 226–րդ օրէնքին դէմ մեղանչումի համար:

Արդարեւ, պատրաստելու վրայ էի ե– րեք թեթեւ պայթուցիկներ, զորս պէտք է գետեղէի, աւելի ուշ ինծի նշանակեալ վայր մը:

Ընդունած էի կատարել այս յանձնա– ռութիւնը, քանի որ կը համապատաս– խանէր հայկ. հարցը լուծելու պայքարի իմ ըմբռնումին: Արդարեւ, կը խորհիմ թէ զինեալ պայքարը գլխաւոր միջոցն է լուծելու համար այս հարցը: Բայց, ի դէպ, ի՞նչ է արդեօք հայկ. հարցը՝ այ– սօր:

Երբ կ'ըսուի հայկ. հարց, կը յիշուի երբեմն, որ 19–րդ դարուն վերջը եւ մա– նաւանդ՝ 20–րդ դարուն սկիզբը Ջարդեր եղան, որոնց զոհ գացին Հայերը:

Առանց մխրճուելու հարցին պատմա– կան եւ հայկ. Ջարդերու խորքին մէջ, պէտք է չեշտեմ, հոս, որ հայ ժողո– վուրդը զոհն եղաւ 20–րդ դարու առա– ջին ցեղասպանութեան: Արդարեւ, Ա. Աշխարհամարտի ընթացքին, եւ մա– նաւանդ՝ 1915–էն սկսեալ, Օսմանեան իշ– խանութիւնները կազմակերպեցին եւ գոր– ծադրեցին հայ ժողովուրդի բնաջնջման ծրագիրը: Մօտ երկու միլիոն Հայեր ստիպուեցան լքել իրենց տուները, լքել քաղաքներն ու գիւղերը, ուր միշտ ապ– րած էին, ուր հայ ժողովուրդը կ'ապրէր հազարամեակներէ ի վեր: Այս պարտա– դիրը տեղահանութեան ընթացքին, մաս– նաւոր պատրաստուած զինեալ հրոսակ– ներ կը յարձակէին կարաւաններուն վրայ, կողոպտելու եւ ջարդելու համար աքսորականները: Այսպէս ոչնչացան հա– րիւր հազարաւոր Հայեր:

Ուրիշ հարիւր հազարաւորներ կոտոր– ուեցան այդ երկար երթին ընթացքին, յոգնութենէ, անունդի ու ջուրի պակա– սէն, որ յաճախ մերժուած էր իրենց:

Եւ վերջապէս, հարիւր հազարաւոր Հայեր, որոնք վերապրած էին այս հը– րէշային տեղահանութենէն եւ զինեալ հրոսկաններու յարձակումներէն ջարդուե– ցան օսմանեան բանակի զինուորներուն կողմէ, երբ կը հասնէին սուրիական ա– նապատը:

Բեմադրութեան վերջ կը տրուէր քա– նի մը տարի հաք, ներկայ Թուրքիոյ հայր՝ Քէմալ Աթաթիւրքի ուժերուն կող– մէ: Ամբողջութեան մէջ, աւելի քան մէ– կուկէս միլիոն Հայեր ջարդուեցան կամ դէպի մահ տարուեցան այս քանի մը «տարիներու» ընթացքին:

Արեւմտեան Հայաստանը, այսինքն՝ Օսմանեաններու դրաւած Հայաստանը պարպուեցաւ իր բնիկներէն եւ միայն քանի մը հարիւր հազար Հայեր կրցան փախիլ ջարդերէն: Անոնց մէկ մասը ա– պաստան գտաւ Արեւելեան Հայաստան, այսինքն՝ ցարերու կայսրութեան դրա– ւած Հայաստանը, ներկայիս Խորհ. Հա– յաստան եւ ուրիշ մաս մը ցրուեցաւ քիչ մը ամէն տեղ աշխարհի մէջ, կազմե– լով ինչ որ, այսօր, կը կոչուի՝ «հայկ. Սփիւռքը»:

20–րդ դարու այս առաջին ցեղասպա– նութիւնը, որու զոհ գնաց հայ ժողո– վուրդը, երբեք չճանչցուեցաւ Թուրքիոյ եւ միջազգային ատեաններու կողմէ: Աչ– խարհ կը շարունակէ լուռ մնալ այս հար– ցին նկատմամբ: Ոճրագործները երբեք չպատժուեցան եւ զոհերը երբեք հատու– ցում չստացան:

Ահաւասիկ, ուրեմն, հայկ. հարցի ե– րեսներէն մէկը:

Բայց հայկ. հարցը միայն ցեղասպա– նութեան ճանաչման եւ հատուցման հար– ցը չէ:

Գլխաւորաբար, հողային իրաւունքնե– րու հարց մըն է, այսինքն հայ ժողո– վուրդի իրաւունքը Հայաստան (Թուր– քիոյ կողմէ գրաւուած Հայաստան) վե– րադառնալու, ինչպէս նաեւ ինքնորոշման իր իրաւունքը, ինչ որ կրնայ առաջնոր– դել մինչեւ հայկ. անկախ պետութեան մը հիմնարկութիւնը:

Հողային այս իրաւունքները պատմա– կան իրաւունքներ են հայ ժողովուրդին համար, որուն ըլլալով որ հայ ժողո– վուրդը միշտ այդ հողերուն վրայ ապ– րած է, որ իբրեւ ժողովուրդ, իբրեւ ազգ, այդ հողերուն վրայ կազմաւոր– ուած է, չուրջ 3 հազար տարի առաջ: Իր պատմութիւնը կերտած է այդ հո– ղերուն վրայ: Իր յաղթանակներն ու պարտութիւնները այդ հողերու վրայ ու– նեցած է: Հայկ. հարուստ մշակոյթը, իր բոլոր երեւոյթներով եւ որու արժէքը մեծապէս կը գնահատեն ուսանողները, այդ հողերուն վրայ զարգացած է:

Կարճ՝ աշխարհի այդ չորքանը, այսօր դրաւուած է Թուրքիոյ կողմէ, եւ որ, աշխարհագրականօրէն միշտ ճանչցուած է իբրեւ Հայկ. Բարձրավանդակ, բնա– կան հայրենիքն է ամբողջ հայ ժողո– վուրդին:

Հայկ. հարցի երկրորդ բաժինն է Համազգայինի Երգչախումբը, ղեկավարութեամբ Արա Մանաշի մեկնա– բանած է «Նոր Տարուան երգ» եւ «Ազգ իմ փառապանծ» երգը, ապա լուսապատ– կերներով ներկայացուած են Մարութ– եանի կեանքին զանազան շրջանները: Երկրորդ բանախօսը՝ Բիւզանդ Կոմիտեան, անդրադարձած է Մարութեանի արուես– տի զանազան հանգրուաններուն եւ անոր նուաճումներուն: Ցօսք առնելով յոբել– եարը, շնորհակալութիւն յայտնելէ ետք իրեն հանդէպ ցոյց տրուած պատիւին համար, ըսած է. «Եղած եմ 24 երկիր– ներ, 127 քաղաքներու մէջ: Ցաճախ չեմ ունեցած ոչ մէկ ծանօթ եւ ստիպուած սափրիչ, կօշկակար, դերձակ, առաջ– ձաղորձ թէ ուսուցիչ տարրերէ թատե– րախումբ կազմած եւ բեմ բարձրացած եմ: Եղած եմ 152 տիպար՝ ոճրագործ, արիւնռուչտ թուրք սուլթան, ռուս մու– ժիկ, Ֆրանսացի կոմս, Համլէթ, Արքայ Լիր, Օթէլլօ, բայց երբեք չեմ եղած Մարութեան»:

×

Յունուար 26–ին, Իրանահայ Միու– թեան Կեդրոնի սրահին մէջ տեղի ունե– ցած է ընդունելութիւն մը ի պատիւ Մա– նուէլ Մարութեանի: Բացումը կատա– րած է Միութեան փոխ – ատենապետը՝ Ժոռա Մանուչարեան: Ցօսք առած են Նո– րիկ Ստեփանեան (Նիւ – Եորքէն) եւ Լուսիկ Մելիքեան: Բանախօսած է Իրա– նահայ Միութեան Տիկնանց Օժանդակ Մարմնի նախագահուհին՝ Մանուչ Գէորգեան, անդրադառնալով Մանուէլ Մարութեանի դերին հայ նոր սերունդի ազգային նկարագրով դաստիարակու– թեան մէջ: Յոբելեարի շնորհակալու– թեան խօսքերէն ետք ընդունելութիւնը վերջ գտած է Լեւոն Գաթրճեանի կողմէ մեկնաբնուած պարսկահայ երգահան Նի– կոլ Գալանտէրեանի երգերով:

×

Հոլիվուտի «Կարապետեան» սրահին մէջ, Յունուար 27–ին, Համազգայինի Հայրենակցական Միութիւնն է, որ յարգանքի երեկոյթ մը կազմակերպած է, իր հայրենակից Մանուէլ Մարութեանի յոբելեանին առթիւ: Բացումը կատա– րած է Միութեան նախագահ Ցարութիւն Ղազարեան: Ցօսք առած է Գուրգէն Յանճեան եւ անդրադարձած Մանուէլ Մարութեանի դերասանական եւ մտաւո– րական չնորհներուն: Գեղարուեստական յայտագրի գործադրութեան աւարտին յոբելեարը շնորհակալութիւն յայտնելէ ետք Վասպուրականի բարբառով պատ– մած է Յուսիկ եւ Արմաղան խաթունները– րու խօսակցութիւնը:

×

ԼՈՍ ԱՆՃԼԼԵՍԻ Քալիֆորնիոյ Համա– սարանի Արեւելագիտութեան Կեդրոնի հրաւէրով, Հայաստանի Ակադեմիայի Հնագիտութեան եւ Ազգագրութեան Հիմ– նարկի տնօրէն Փրոֆ. Բարկէն Առաքել– եան Լոս Անճելըս գացած է իբրեւ այցե– լու դասախօս: Համալսարանի Հայագի– տական Ամպիոնի ծրագրին մէջ փրոֆէ– սէօրը երեք ամիս կը դասախօսէ «Հնա– գիտութիւնը Հայաստանի եւ Կովկասի մէջ» նիւթի շուրջ:

ՕՐԱԳՐԻ ԷՋԵՐ

Գրեց՝ ՋԱՐԵՀ Մ. ՈՐԲՈՒՆԻ

23 Օգոս. Սէնդ Մառի սիւռ մէռ. – Նո– րէն Յաչիկը մխաքս կուգայ: Էդըըդա ին– ծի առած այցելութենէն ի վեր (1927 – ին) այս զարմանալի տղուն ճակատագի– րը միտքէս չի հեռանար: 1927ին Փարի – Փլաժ էի, ամառը: Այս անգամ Յաչիկը եկաւ, բայց ոչ հետս աշխատելու: 10 – 15 օր մնաց: Նոյն ապշահար մարդն էր, ինչ որ էր Սկիւտար Պէրպէրեան վարժա– րանը պզտիկներուն դասարանին ուսու– ցիչը: Ընկերս Գաբոնիին հետ վերջին ծայր «մօնտէն» կեանք մը կ'ապրէինք կիներու վոհմակի մը մէջ: Իոլորն ալ ազնուական կիներ էին, Ֆրանսացի եւ անգլիացի: Երբ Յաչիկը եկաւ կեանքս քիչ մը կանոնաւորուեցաւ: Բայց Յաչիկ կ'ուզէր տեսնել թէ ի՞նչպէս, ի՞նչ ար– ուեստով կը մօտենայի կիներուն: Այս ցուցադրութեան ընթացքին էր որ ծու– զակը ինկայ եւ որ տարիներ տեւած էր տուժի խաբէութեան ամբողջ ոստայնի մը մէջ ինքնութիւն պահելու ճիգս պար– զապէս, երբ պարզ կարսոններ էինք այդ կիներուն ապրած բալառներուն մէջ: Ամ– բողջ Փարի – Փլաժի մէջ ոչ ոք գիտէր թէ բալասի մէջ ծառայող էինք, ես ու Գա– բոնին, որ փախած էր Իտալիայէն Մու– սոլինիի ըչժիմին սպառնալիքներէն որ նուրբ երաժիշտ մըն էր ամբողջութեամբ երաժիշտ ընտանիքի մը մէջ: Ան ինք– զինքը «պանքիէի» զաւակի տեղ անցու– ցած էր, իսկ ես իր բարեկամը՝ ռուս բա– նաստեղծ: Կատարեալ աւեր կը գոր– ծէինք, մանաւանդ անգլիացի կոմսուհի – ներու մօտ: Գաբոնի մինակը սասպիկ տխուր էր, առանց բան մը կորնգնելու իր վայելչութենէն, ընդհակառակն, բան մը կ'աւելցնէր իր հեզնական կեցուած – քին վրայ: Սկսանք մեր կեանքի նախկին ընթացքը: Այդ շրջանին Յաչիկը ճանչ – ցաւ աղջիկ մը, որ յետագային մայրը ե– ղաւ իր երկու մանչերուն, Կարօին եւ Հայկակին:

Փարի – Փլաժի այդ ամառը Նիկողոսը իր կնոջը եւ կնոջը աղջկանը հետ եկաւ: Բայց ինքզինքը չցուցուց, մինչդեռ Տիկին Զապել Եսայեանը մանաւորապէս ինծի համար եկած էր ու անմոռանալի օրեր անցուցինք միասին ծովեզերքի աւազին մէջ խրած կիսովին: Զապել Եսայեանը իմ ճշմարիտ ջերմաչափս եղաւ, անով ես զգացի որ իմ գրական փորձերս խմաստ մը ունէին եւ ինձմէ բան մը կը սպաս– ուէր:

Կը խորհիմ թէ Փարի – Փլաժի այդ «մօնտէն» շրջանակին մէջէն առաւ Նի– կողոս իր վիպակին նիւթը:

Գալով Յաչիկին, անզսպար կը գբէր ան: Գրեթէ ամէն իրիկուն մէկ երկու քերթուած ունէր ինծի կարդալիք: Եւ քերթուածներուն մեծ մասին աղբիւրը ինծի ծանօթ էր: «Քալէ, կառապան», որ Փարի – Փլաժն է: Յաչիկ բնաւ չէր կար– դար, ես անյագ կարդացող էի: Ան միշտ կը նեղանար ինծի, կը գտնէր որ ապուշ բան է ուրիշին գրածները կարդալ, երբ գրող ենք: Աւելորդ ժամանակի կորուստ կը նկատէր ընթերցանութիւնը: Ի հարկէ, կարդալը ինծի ժամանակ էր ձգեր գը– րելու: Ամբողջ երեսուն տարի Յաչիկ Զուլֆաեանը լուռ ու մունջ ամէն օր գը– րելը լմնցուց անյաւտակ ծարաւ մը ունե– ցաւ կարդալու:

(Շար.– 12)

LIVRES RECUS:

Collection LETTRES FRANCAISES

POESIES DE VERLAINE
(1866 -- 1880)

Notes et appareil critique de Michel DECAUDIN, président du Syndicat des Critiques littéraires.

Illustré de 8 gouaches de Marguerite LEUWERS (née Haladjian), et de 8 reproductions. Composé à la main en Luce. Volume 16 x 22, relié cuir rouge, 380 p. Exemplaire numéroté de 1 à 5000.

En vente:

Par correspondance:
IMPRIMERIE NATIONALE — SEVPO
39, Rue de la Convention
75732 Paris - Cedex 15
Vente directe au public:
A l'Imprimerie Nationale, dans ses librairies.-
— 2, Rue Paul Hervieu - 75015 PARIS
— 20, Rue de la Boétie - 75008 PARIS
— 182, Rue St. Honoré - 75001 PARIS
Par agents de diffusion exclusifs.

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

1980–ին, Լիոնի մէջ, 1901–ի օրէնքի հիման վրայ՝ Ոչ մէկ իշխանութիւն ունի Ինէնգօ Միջազգային կազմակերպութեան մէջ։ Իր գլխաւոր նպատակն է ի յայտ բերել հանրային կարծիքին առջեւ հայկ. կոթողներու խաթարում, քան–դումը պատմական Հայաստանի մէջ (Թուրքիա, Պարսկաստան) եւ աշխատիլ անոնց վերականգնումին։ Մէկ տարուան ընթացքին կատարած է հետաքրքրա–կան աշխատանք։ Հրատարակութիւն պրքոյկի մը հայկ. վանքերու, եկեղեցի–ներու, պալատներու վերականգնումին նուիրուած։ Տիափոզիթիվներու լուսար–ձակում Ինէնգօ Ակումբներու (Ֆրանսա–յի մէջ կան 150 ակումբներ) ընդհանուր համագումարին, Մոնթելիմարի մէջ, Ապրիլ 1980–ին։ Ձամբորդութիւն Արե–ւելեան Թուրքիա, փաստաթուղթերու եւ վկայութիւններու համար։ Հայկ. ճար–տարապետութեան ցուցահանդէս, Լիոնի մէջ, եւ նաեւ սքաժ Հայկ. Մշակոյթին նուիրուած։ Ճարպերութիւններու մաս–կում Փարիզի Ինէնգոյի եւ Ցուշարձան–ներու Միջազգային Խորհուրդին հետ։ Այս ջրջանակներէն ներս, պատասխանա–տու անդամները չեն անդիտանար. քայ պիտեն թէ ամբողջ մշակոյթ մը անէացման ենթարկուած է Արեւելեան Թուր–քիոյ մէջ, սակայն անզօր են։ Ինէնգոյի օրէնքներու համաձայն չհասպրդուած երկիրն է որ պէտք է ներկայացնէ, պա–հանջը եւ այս պարագային անշուշտ Թուրքիան։ Ամենամեծ դժուարութիւնը հոս է։ Ասոր համար հարկ է ծրագիրը ուած անխոնջ եւ համբերատար աշխա–տանք հանրային կարծիքի մը պատրաս–տութեան համար եւ ... Թուրքիոյ հա–մաձայնութեան համար։ Այս դասախօ–սութիւնը որուն հետեւեցան չորջ հա–րիւր քան հոգի եւ մեծ մասամբ Ֆրան–սացիներ ու երիտասարդներ տեղեկա–տուութեան եւ քարոզչութեան դրական ձեռնարկ մը եղաւ։

×

Ցուցահանդէսը վերջացաւ Փետրուար 9–ին։ Երկու վերջին օրերուն բազմու–թիւնը, ինը հարիւր յիսուն հոգի, բա–ցայայտօրէն կ'ապացուցանէ անոր գտած յաջողութիւնը։ Այցելուներու ընդհանուր թիւը, թանգարանի քարտուղարութեան համաձայն, կը հասնի վեց հազար եր–կու հարիւրի։ Ինչպէս ըսած էինք չորջ հարիւրէն վաթսունը ոչ Հայեր են որոնք մեծ հետաքրքրութեամբ քաղաքակրթ–թութիւն մը, մշակոյթ մը տեսան. տե–սան ու զարմացան, տեսան ու հիացան, տեսան ու գնահատեցին եւ ուզեցին աւե–լին գիտնալ, աւելի սերտել գնելով Հա–յոց պատմութիւնը եւ մշակոյթը ներկա–յացնող հատորները, ուղղելով բազմաթիւ հարցումներ։ Մարսէյլի լիսէներէն, դըպ–րոցական հաստատութիւններէն եղան խմբական այցելութիւններ։ Այս բոլորին մէջ ընթերցողը պիտի ըսէ, իսկ Հայե՞–րը։ Հայերը, այո, Մարսէյլէն եւ շրջ–կակայ քաղաքներէն եկան ու այցելեցին։ Երբեմն տեսանք «նոր» դէմքեր։ Այցե–լուներէն շատ շատեր հպարտութեամբ լեցուեցան, գնահատեցին եւ չնորհաւո–րեցին նման բարձրորակ ձեռնարկ մը որ պատիւ կը բերէ հայութեան։ Հայկական դպրոցներ տուին խմբական այցելու–թիւններ՝ Անարատ Յղութեան Հայ Քոյ–րերու դպրոցը, չարաթօրեայ դպրոցներ՝ Դիվոլի, Փրատոյի Սահակ – Մեսրոպ մշակութային կեդրոն, Հայ Մշակոյթի Տուն։ Այսուհանդերձ համեմատելով պա–տուիրի կարեւոր թիւին, կը կարծենք որ Հայերը այնքան ալ չփութացին։ Նորու–թիւն մը չէ։ Ընդհանրապէս Հայը չի պի–տեր գնահատել իր ազգ. արժէքները. արդեօ՞ք կը ճանչնայ զանոնք։ Այնքան ալ համոզուած չենք։ Շատ դիւրաւ կ'ըսէ թէ ինքնատիպ ճարտարապետութիւն մը ունինք որ եղաւ ազբիւրը, մէկնակէտը ա–րեւմտեան միջնադարեան ճարտարապե–տութեան, բայց ի՞նչ չափով ծանօթ է այդ կոթողներուն։ Հաղբատ, Սանահին, Ամբերդ, Գեղարդ, Զուարթնոց, Գօշա–վանք կամ Երերուք ո՞րքան խօսուն ար–ժէքներ են։ Տրդատ, Մխիթար, Մանուէլ ճարտարապետները ի՞նչ չափով կենդանի դէմքեր են. եւ Գրիգոր Մագիստրոսը։ Ամէնէն կարեւորը անշուշտ ճանչցնել է մեր մշակութային գանձերը, մեր ազգ. արժէքները, մեր քաղաքակրթութիւնը մեր գաղը օտարներուն։ Այս կէտին մէջ ցուցահանդէսը հասաւ իր նպատակին։ Ահաւասիկ վկայութիւններ առնուած ա–կէ մատեանէն.

«Մաղթանքներ կ'ընենք որ այս հայկ. հաստատութիւնը կարենայ շարունա–կել իր առաքելութիւնը ու վերստանայ իր հաստական իրաւունքները» *Փրոֆ. Ժ. Պօնեֆի։*

«Շնորհաւորութիւն այս բացառիկ եւ յուզիչ ցուցադրութեան համար։ Կը տըխ–րիմ այսման աւերակներու եւ այսման վայրերու վրայ, ստեղծուած աստուա–ծային պաշտամունքի համար, եւ ուր դադրած է հնչել եկեղեցական պաշտա–մունքը. սակայն կը հրճուիմ այսման գեղեցկութեան առջեւ որ կ'ոգեկոչէ Աս–տուծոյ փառքը։ Մաղթանքս է որ այս ցուցահանդէսը ներկայացուի նաեւ Թու–լուզ», *Հայր Ալէն Քիլիսէ, առաքինեկան կրօնական։*

«Մարսէյլի Հայ գաղութը իր իւրայա–տուկ մշակոյթով (վկայ այս ցուցահան–դէսը), իր ինքնատիպութեամբ, իր ազ–նուութեամբ անգնահատելի նպաստ մըն է Մարսէյլ բաղաքին», *Ժիլպէռ Փամիէ, քաղաքապետական խորհուրդի անդամ։*

«Շնորհաւորութիւններ այս հրաշալի աշխատանքին համար. եղբայրական հա–մակրութիւններս հայկական գաղութին», *Լէօ Պուրեզի, քաղաքապետական խոր–հուրդի անդամ։*

«Շնորհաւորութիւններ բոլոր անոնց որոնք կը սիրեն եւ կ'աշխատին ճանչցը–նել տալ Հայոց պատմութիւնը, իր ար–ուեստը, իր ճարտարապետութիւնը եւ իր վերածնունդը։ Իմ ողբացեալ բարեկամ Ե. Իւթիւճեանի հետ ձեռնարկած էինք ծանօթացնել մեր պաշտօնակից ճարտա–րապետներուն հայկ. ճարտարապետու–թեան գեղեցկութիւնները։ Ուրախու–թեամբ կ'ողջունեմ Միլանոյի խմբակի հսկայ աշխատանքը», *Անտրէ Փ. Հարտի, անդամ եւ նախկին տնօրէն Մարսէյլի Ա–քատէմիին։*

«Ցուցահանդէս մը որ յայտնութիւն մըն է ինծի համար», *Ժ. Հանրի՝ ճարտարա–պետ (Ավինիոն)։*

×

Քանի մը խօսք նաեւ տեղական մամու–լի մասին։ Երեք օրաթերթերը արձագանգ եղան, սակայն ոչ համապատասխան ձեռ–նարկի արժէքին եւ տարողութեան։ Բաց–ման օրը, Մարսէյլի Հայ Մշակոյթի Տան վարչութիւնը կազմակերպած էր մամ–լոյ ասուլիս մասնակցութեամբ հայկ. ճարտարապետութեան մասնագէտ՝ Ալ–վիակո Նովելլոյի որ տուաւ լայն բացատ–րութիւններ թերթերու թղթակիցներուն։ Սակայն, չատ հարեւանցի թղթա–կիցները նիւթը տուին, այն ալ չփոթու–թիւններով եւ սխալներով։ Տեղական հե–ռատեսիլը էֆ. էռ. 3. Մարսէյլ, երեկոյ–եան լուրերու բաժնին մէջ, յատկացուց մի քանի վայրկեան։

×

Միլանոյի «Չենթրօ Սթուտի Տոֆու–մէնթացիոնէ Տելլա Քուլթուռա Արմե–նա» միութիւնը արժանի է ամէն գնա–հատանքի։ Շնորհիւ իր հրաշալի իրագոր–ծումին Հայ Մշակոյթը, հայ ստեղծա–գործ միտքը եւ հայ հանճարն է որ կը յաղթանակէ։ Հայ Դատն է որ կը հա–րըստանայ բացառիկ փաստաթուղթով մը։

Շնորհաւորելի են ջանքերն ու զոհո–ղութիւնները Մարսէյլի Հայ Մշակոյթի Տան որ երեք չաբաթ, քաղաքին կեդրո–նը, ներկայացուց հայկական ճարտարա–պետութեան նուիրուած այս ցուցահան–դէսը։

ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՍՊԻՏԱԿ ՁԻԱԽՈՐԸ

= ՀԱՄԱՍՏԵՂ =

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՄԱՐՏԻԿԷՆ ՆՈՐ ԼՈՒՐ ԿԱՑ

Կիրոս կը սիրէր խօսեցնել տէրվիշը, մանաւանդ որ քրիստոնեայի մը չափ հը–մուտ էր Հին ու Նոր Կտակարանին։ Ան–տարակոյս, Ղուրանի խօսքերը չէին, երբ տէրվիշը կը խօսէր, որ մարդիկ, ըլլան խլամ, ըլլան քրիստոնեայ, ջննդէի եւ կամ ղըզխանին չեն կրնար արժանանալ, մինչեւ որ չունենան բարութիւն ու հա–ւատարմութիւնը չունենան...

Գարափունարը ձգելէ առաջ, Կիրոս ա–նանձինն տեղեկութիւններ կը քաղէ տէր–վիշ Հասան Ալիի չարժումներուն մասին։ Մանաւանդ այն օրերուն Հասան Ալի մըզ–կիթին մէջ ղըզրիչ քարոզներ կուտար ու Վարդաճորի կռուին երթալու համար պաշըպօզուքներ կը հաւաքէր։

Կիրոս կ'իմանայ Գարափունարի ժան–տարմներու պետին անունը, ո՛ր տեղացի ըլլալը. նաեւ կ'իմանայ շարք մը մանրա–մասնութիւններ զատի Հիւսէյն էֆէնտիի մասին։

Սնտուկը կռնակին, երբ կը պատրաս–տուի Գարափունարէն դուրս ելլել, բազ–նիքին հրապարակը կը տեսնէ, որ Հասան Ալի տապար մը մէջքին, խոշոր մզրախ մը ձեռքին, վարտիկը մինչեւ մէջքին կապած, բազմութեան ու զհոլին առջեւ ինկած՝ պաշըպօզուքներ կը հաւաքէ։ Այդ օր այն լուրը կար, որ Մարտիկ Վար–դաճորի լեռը եղած է։

Պազարը ցորեն բերող Հայերը, Հասան Ալիի այդ փանաթիկ կերպարանքէն վախ–ցած, հրապարակէն հեռացած էին։ Կի–րոս նեղ փողոցէ մը անցած էր գտտարա–նին կողմը ու հեռացած Գարափունա–րէն։

Ճամբաներու ժանտարմներէն խուսա–փելու համար, Կիրոս աւելի լաւ սեպած էր Գարատաղի փէշերուն վրայ ցրուած հայ գիւղերու մէջէն անցնիլ։

Սնտուկը կռնակին՝ կ'անցնի գիւղէ գիւղ, կը հանդիպի ծանօթներու, կը հետաքըր–քրուի գիւղացիներու աշխատանքով, դըպ–րոցներու վիճակով ու կը լսէ ժողովուր–դի ուժեղ երեւակայութիւններով նախ–չուած զանազան գոյնի հէքեաթներ Մար–տիկի մասին. որպէս թէ Մարտիկ եթիմ տղայ է եղեր, չոպանութիւն է ըրեր, Բերդակի մէջ էժտահարի պէս հօրաքոյր մը ունի։ Մարտիկը ծնած ժամանակ եր–կընքէն աստղ մըն է ճեղքուեր ու անոնց տանիքին վրայ ինկեր։

Երկու օր Կիրոս Շէխիկ գիւղի մէջ կը մնայ, որովհետեւ լծկան եղներուն մէջ հիւանդութիւն ինկած էր, եւ գիւղացի–ները գիւղէն դուրս արտերուն մէջ կը քաշէին փոսթը քերթուած սատկած եզ–ներ։ Հիւանդութեան առաջքը առնելու համար, Կիրոս ախոռներուն մէջ կուպը ծխել կուտայ։ Երկրորդ օրը, Շէխիկի մէջ կ'իմանայ որ Գարափունարէն եկող պաշըպօզուքներ Հացեկի հնձաններէն անցեր են, ու Մարտիկ Հացեկի կոմսերն է։

